{BnF

gallica
BIBLIOTHÈQUE
NUMÉRIQUE

Arjern Namakani

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Kapamadjian, Simon (1863-1942). Arjern Namakani. 19...

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF.Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :
*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.
*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer ici pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.
*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

4119 1047

ԱՌՁԵՌՆ

ՆԱՄԱԿԱՆԻ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ԵՒ ԱՆՈՒԱՆ ՏՕՆԻ ՆԱՄԱԿՆԵՐ

ՈՒՂԵՐՁ

ՅԱՒԱՏՅԱԿԱՆՆԵՐ, ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

ԳՈՐԾԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Գեակներ, Աղերսագրեր, Վկայագրեր

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Տոնակներ, Հեռագրեր

ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ՆԱՄԱԿՆԵՐ

Պ. Տպագրութիւն

Յօրինեց

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

Հրատարակիչ

ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Տպագրութիւն

Յ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

ՊՈԼԻՍ

ECH-TOL-2008-1149
2008-70798

BnF
L&A

ECHANGES
N°
INTERNATIONAUX



ՆԱԽԱԲԱՆ

Ի՛նչ հարկ *Նամակաց*ի հրատարակել, մինչ մարդս իր ընդունած դասխարակութեամբ եւ փոքր ի շատ գրելու վարժութեամբ կրնայ բաւական մը խմբագրել։

Այս առարկութիւնն ըստ երեւութին ո՛րքան որ հիմնաւոր թուի, չի կրնար Նամակաց մը հրատարակութիւնն անպէտ ցուցընել։ Վասն զի Առձեռն Նամակաց ինքեր անոնց համար են, որ պէտք ունին օրինակներ տեսնելու։ Ցանախ նաեւ ընտանեկան կամ առեւտրական նամակ մը գրելու շատ կարող մէկը կը շուարի, երբ հարկ ըլլայ գրել արտաքոյ կարգի թուղթ մը, աղերսագիր մը կամ նամակ մը որ անպատասխանի պիտի մնայ, եթէ հին սովորութեամբ որոշուած ձեւեր ճոդիւ պահուած չըլլան։

Ի՞նչու ուրեմն արհամարհանօք մէկդի նետուի առաջնորդ մը որ շատ անգամ կրնայ օգտակար ըլլալ։

Այսպիսի առաջնորդ մը ըստ կարելւոյն վստահելի եւ ձեռնհաս կացուցանելու համար՝ ջանացինք բազմաթիւ նամականեր ուսումնասիրել։ Այս կերպով կազմեցինք այս երկը։

Ուսանողութեան ծառայելու համար գլուխներուն վերջը *ընդհանրական նիւթեր* գետեղեցինք։

Հետամուտ եղած ենք ամէն տեսակ նիւթի հա-

մար օրինակներ տալ: Պէտք չէ կարծել թէ այս օրինակները վերջնական են. այդ՝ սխալ մ'է: Իւրաքանչիւր ոք պէտք է ընէ փոփոխութիւններ զորս, ոլորտութիւնը ցոյց պիտի տայ եւ պարագաներուն յարմարցնել անոր ձեւը։

Թուղթ.— Պէտք է առ հասարակ թուղթը եզերքէն ուղիղ կտրուած ըլլայ: Աղերսագրի համար կը գործածուի միայն թուղթ, (papier ministre) պաշտօնական թուղթ կոչուածը: Պէտք է երկբերթ ըլլայ ան:

Քառածալ կամ սովորական նամակի թուղթը ընտանեկան կամ գործի նամակներու համար պէտք է գործածուի. անպատեհ է կէս թերթ գործածել։ Սովորութիւնը միայն առեւտրական նամակներու համար կը ներէ այս բանին, ութածալ թուղթը տամնակներու համար կը գործածուի։

Թուական — Կը ցուցնէ այն տեղը ուր կը գրուի ամսաթիւը եւ տարին, գործի կամ առեւտրական նամակներու մէջ ստորագրութենէն վերջ վարը ձախ կողմը դնելու կամ վերը:

Դիմագրութիւն նամակաց.— Պէտք է մէկ տողի վրայ ըլլայ. ասոր եւ գրուածին մէջ թողուած միջոցը յարգանքի նշան մ'է։ Աղերսագիրներու կամ հրաւիրագիրներու մէջ սովորութիւն է թերթին մէջտեղէն դիչ մը վեր դնել։

Պէտք չէ որ երբէք համառօտագրեալ ըլլայ. *Տիկին* բառերը կը բաւեն պարզ նամակներու մէջ։ Աղերսագիրներու մէջ սովորութիւն է վերնագրէն վեր ցուցնել աղերսագիրն ընդունող անձին պատուանունները եւ աստիճանն ալ: Դիմագրութիւնը պէտք է դրուի թերթին մէկ երրորդ մասին վրայ,

գլխագրութեան եւ նամակին բուն գրուածքին մէջ պէտք է հաւասար միջոց թողուլ։ Պէտք չէ մոռնալ թէ այս պատշաճութեան նշանները անհրաժեշտ են, եւ թէ անոնցմէ յանախ կախում ունի յաջողութիւն մը։

Նամակի բուն գրութիւն.— Ամէն բանէ առաջ պէտք է դիւրընթեռնելի գրուած ըլլայ. տարիքով կամ դիրքով ակնածելի անձանց ուղղեալ նամակներու մէջ պէտք է համարձակ ծանուցանել նամակին նպատակը։ Կարեւոր է յանախ կրկնել *Տիր*, *Տիկին* բառերը ըստ ասիճանի այն անձերուն որոց կը գրուի։ Զուարճաբան ոճը միայն երիտասարդներու կամ հաւասարներու մէջ ընդունելի է։

Այս վերջին դէպքին մէջ միայն հարցումը ներելի է, յոյժ քաղաքավար ձեւով կրնայ ըլլալ. պատկառելի անձի մը չպիտի ըսէ. Տեղեկութիւն տուէք, կ'աղաչեմ, այլ պէտք է ըսել. Ներելի՞ է աղաչել որ ինձ տեղեկութիւններ շնորհէք... եւայլն։ Մտերմութեան մէջ միայն ներելի է նամակը առնող անձին միջոցաւ նոյն քաղաքի բնակող ուրիշ անձի մը բան մը ըսել տալ։ Ազգականաց համար ընդունելի են պատուասիրական խօսքեր։ Բայց պէտք է միշտ ակնածական բանաձեւ մը գործածել։ Զոր օրինակ, ներեցէք որ Ձեր պարոն եղբայրը նամակիս մէջ զանենք յարգանաց հաւաստիքը։

Ներքնագրութիւն կամ անուրս նամակի.— Տարիքոն ծնողաց կամ ազգականաց ուղղեալ նամակներուն մէջ պէտք է միշտ յարգանք բառը դնել։ Պատշաճի մը ուղղեալ նամակաց մէջ երախտագիտութիւն բառը։ Հաւասարներուն մէջ քաղաքավարութիւնն միշտ բարեւոք ընդունելի է։ Առեւտրական նամակները կ'աւարտին այսպէս. Պատիւ ունիմ զձեզ բարեւ

ել: *Անձնուէր ծառայ.* Զեր բանաձեւը կրնայ գարաւծուիլ նոյն ասպնջնի անձանց միջեւ, որմէ անհանոյ հեռեւանք մը չծագիր:

Սպրագրութիւն.— Ընդհ. կանոն է որ գրութիւնը պէտք է դիւրընթեռնլի ըլլայ, եւ սպրագրութիւնը աւելի եւս: Զգուշացէք զծերու խառնիխուռն մանուածներէ:

Ցեռ գրութեան.— Նամակին շարունակութիւն մ'է այս, որ սպրագրութեան տակ կը գրուի: Ցեռ գրութեանը մասը պէտք է աւելցնել պատասխանող խօսքերու համար, նոյնպէս մոռցուած բան մը ցեռանակելու համար, եւ այսպիսի դէպքի մէջ գրուելու է այնպէս ինչպես ցցուցինք *բուն գրութիւն* նամակի յօդուածին մէջ: Ուրիշ ամէն առթի մէջ անմատդրութեան ցեռանէ. հաւասարներու մէջ ներելի է այն:

Ծալել կնքել.— Պէտք է որ նամակները խնամով ծալուին, այնպէս որ անգոյշ հեռաբերութիւնը չկարենայ աչք ներել անոր վրայ: Աղերսագրեր եւ կարեւոր գործոց տեղեկացուցիչ գրութիւններ չորս ծալուելով պահարանի մէջ պիտի դրուին: Այսպէսով պիտի ըլլայ նաեւ երեւելի անձանց գրուած նամակներու համար: Կարմիր կնքամոմը պիտի գործածուի աղերսագիրներու եւ պահարանով գոցուած նամակներու համար:

Երեսագիր.— Գրեցէք անունն, արուեստն կամ ասիճանն այն անձին՝ որուն կ'ուղղէք նամակը: Հոս ալ մի մոռնաք թէ *Տէր* կամ *Տիկին* բառերն ամբողջ գրեալ պէտք է գրուիս: Եթէ մեծ քաղաքի մէջ բնակող անձի մը կը գրէք, փողոցին անունն կամ տան թիւն անհրաժեշտ կարեւոր են: Եթէ երկու քաղաքներ միեւնոյն անունն ունենան, պէտք է յաւելուլ նաեւ նահանգին կամ գաւառին անունն:

Հետեւեալ ցանկը պաշտաձուրթիւներ ու հաւնեանս պատրաստուած է, կը ճշդէ շրջանացը գործածուրթիւնն

ՇՐՋԱՆՈՒՄԱՆՔ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՑ

Ա. Կաթողիկոսական կամ Հայրապետական

Տէր Հայրապետ կամ Աստուածընտիր Հովուապետ. — Հոգեւոր Տէր. — Օծեալ թիւն։

Բ. Մասնաւոր Կաթողիկոսաց

Սուրբ և Աղթամարայ. — Ծնորհազարդ Կաթողիկոս. Ն. Ծնորհափայլութիւն։

Գ. Պատրիարքական

Սմենապատիւ Սրբազան Պատրիարք, — Սրբազան Հայր կամ Տէր. — Բարձր Սրբազնութիւն Սմենապատուութիւն։

Դ՝ Հրամարեալ Պատրիարքաց

Սմենապատիւ արքեպիսկոպոս. — Սմենապատուութիւն։

Ե. Եպիսկոպոսական

Գերապատիւ եպիսկոպոս. — Սրբազան Հայր կամ Տէր. — Գերապատուութիւն։

Զ. Վարդապետաց կամ Ուսոյ քահանայից

Սրժանապատիւ Սուրբ Հայր կամ Տէր. — Սրժանապատուութիւն։

Է. Քահանայական

Հոգեշնորհ Տէր Հայր. — Հայրութիւն։

Ը. Սարկաւագական

Բարեկրօն Սարկաւագ։— Տիրացու Եղբայր։— Եղբայրութիւն։

ՇՔԱՆՈՒԱՆՔ ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՑ

Ասիճանաւորներու

Վսեմաչուք Տէր, Գէյ։— Վսեմութիւն

Գիրքի տէր Ազնուականներու

Ազնուաչուք Տէր։— Ազնուութիւն։

Է. Հասարակական

Մեծապատիւ կամ Մեծարգոյ Տէր։— Մեծապատուութիւն։

ՇՔԱՆՈՒԱՆՔ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ

Դ. Աւագանոյ

Ազնուաչուք Տիկին։— Շնորհափայլ Ազնուութիւն (Օրիորդաց) Ազնուահի Օրիորդ։— Ազնուութիւն։

Ե. Հասարակական

Համեստափայլ Տիկին, Շնորհափայլ կամ Նազելաշուք Օրիորդ։— Ազնուութիւն։

ՆԱՄԱԿԱՆԻ

ԳԼՈՒԽ Ա.

ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ԵՒ ԱՆՈՒԱՆ ՏՕՆԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Գիտողութիւն. — *Ընդհանրապէս կարծաբան ոճն այսպիսի նամակներու մէջ պէտք է իշխէ, որոց նպատակն է կորով եւ յարգանք յայտնել։ Այսպիսի պարագայի մէջ մտացի երեւնալու նկրտիլն անմտութիւն է։ Ծնողքի, մեծերու բարեկամի ուղղուած այսպիսի պատուասիրական խօսքեր պէտք է սրտէ թելադրուած ըլլան, աւելի լաւ կ'ըլլան,* **Պարզութիւն եւ յստակութիւն** *այսպիսի ոճի մը գլխաւոր տարրերն են։*

1. Մանկան մը նամակը իր ծնողքին։

Գորովագութ ծնողք իմ,

Շատ երջանիկ պիտի ըլլայի, եթէ այսչափ ձեր մօտէն եղած յայտնէի Ձեզ իմ սրտագին բարեմաղթութիւնս։ բայց կը մխիթարուիմ, երբ այս մէկ քանի

տողերը կ'ուղղեմ, կրկնելու թէ Ձեզ թէ սրտանց կը սիրեմ։

Ձեր երջանկութեան կը փափաքիմ միշտ և կը մաղթեմ Ձեզ քաջառողջ անվիշտ ծերութիւն մը։

Ձնեէ հետու ժամանակը ինձ երկար կ'երեւէ, շատ երկար, կը յուսամ քիչ առնէն զՁեզ տեսնել և հոգեվ գրկել։ Հիմա ուրիշ բան չունիմ Ձեզ յղելու, բայց եթէ սիրոյս համբոյրները։

[Թուական] ՁՁեզ շատ սիրող հնագանդ որդի

* * *

---

2. Նոյն ցիւր

Սմեհասիրելի՛ ծնողք իմ

Ներ տարուոյ սեմին գրայ գիտ նոր տող գրած կը շուարիմ թէ ի՞նչ բառերով հիւսեմ երախտապէտ սրտիս շնորհաւորութիւնները Ձեզ նուիրած։ Ո՜հ, չեմ կրնար տկար մտքովս չափել Ձեր սիրոյն մեծութիւնը։ Ձեր բոլոր բարիքները Ձեր շնորհներն այնքան հոգւոյս՝ մէջ այս միտ արձագանգը ունին. երախտագիտութի՛ւն, միշտ երախտագիտութի՛ւն։

Սիրելի ծնողք իմ, ապրեցէ՛ք դուք ուրախ և զուարթ. Ձեր որդիք, Ձեր սիրով հպարտ և երջանիկ վայելեն երկար շատ երկար տարիներ Ձեր քաղցր հովանին և թող վիշտը երբեւ չդիտնայ մեր տան ճամբան, մինչեւ որ ողջունէք խաղաղ ծերութիւնը, շրջապատուած սիրելիներով։

Պատուական ծնողք իմ, Աստուած որ վերէն կը

հակէ միշտ մեր վրայ օրհնէ, մեր տունը, ուր Ձեր որդիք իբրև ընտանեկան դրախտին հրեշտակները երգեն միայն ուրախութիւններ, մաղթանք երկար և երջանիկ տարիներու։

[Թուական] Ձեր անձնուէր որդին

* * *

3 Թուաց մը ճամակը իր հաւուց

Սիրելի՛ Պապիկ

Նոր տարին հաւատարիմ յուշարար մ'է անկեղծ պարտականութիւններ կատարելու, այս ինձ կը թելադրէ, Ձեզ ուղղել բարեմաղթութիւնս։ Ի՛նչու այս օրը մանաւանդ դուրկ ըլլայի Ձեր անոյշ գգուանքներէն։ Կ'ուզէի տկար դրչովս բանալ սիրող սիրտս քայց՝ կը վախնամ որ գուցէ չի կրնայ յաջող թարգմանս ըլլալու. այս մասին պատապարտեցէք զիս, քայց, կ'աղաչեմ, մի՛ կարծէք զիս Ձեզ նկատմամբ անտարբեր։

Նամակիս կը կցեմ ստացած թիւերս. երջանիկ եմ, վասնզի գէթ այս կերպով կը փոխադրեմ այն երախտիքին, զոր Ձեռնէ վայելած եմ։

Այս պահուն, Սիրելի՛ պապիկս, եռանդով կը կը գոչեմ շատ ապրի՛ք։

* * *

4. Աղջկան մը նամակը իր մորը

Սիրելի՛ մայր իմ,

Նոր տարուց այս օրն քարեհաճան է ինձ. վասն զի վազուց ի վեր սահմանուած է այն սիրոյ և գորովանքի փոխանակութեան մը, քան մը որ ինձ շատ հաճելի է. որովհետև միանգամ ևս սէրս յայտնելու պատեհութիւնը կ'ունենամ։ Անշուշտ գիտէք թէ ի՞նչ կ'զգամ Ձեզ նկատմամբ. բայց քաղցր է ինձ հաստատել զայն այս առթիւ ալ։ Մեծ հաճոյքով կը կարդամ Ձեր նամակներն, և չեմ տարակուսիր թէ դուք ևս միևնոյն զգացումով կը կարդաք։

Հեռաւորութիւնը ինձ դառն է միշտ. ո՜հ, չկրցայ վարժուիլ բաժանման վշտերուն։

Սիրելի՛ մայր իմ, անեկմիտ եղէք թէ իմ ընթացքս պիտի համապատասխանէ Ձեր սիրոյն և հոգածութեան, զորս առատօրէն վայելած եմ կեանքիս առաջին օրէն. մինչ հեռու եմ Ձենէ, անոնք են իմ ուրախութիւններս։ Կեանքիս մէն մի օրը կ'աճի ու կ'աւելնայ Ձեզ նկատմամբ ունեցած սէրս։

Ընդունեցէ՛ք, սիրելի՛ մայր իմ, նոր տարուց առթիւ Ձեր քարեմաղթութիւններս և սիրոյ համբոյրներս։

[*Թուական*] *Հնազանդ դուստրդ*

* * *

5. Փոքրիկ աղջկան մը ճամբայի իւր ճորը

Սիրելի՛ հայրիկ իմ,

Ի՞նչ ուրախութեամբ կուզամ այսօր և կ՚ըսեմ դարձեալ Քեզ թէ սիրուս լի է Քեզ նկատմամբ ունեցած սիրոյս և երախտագիտութեանս զգացումներով։ Բարեբաղդ եմ որ հնարս ըլլալով հանդերձ կրնամ զգայմանոյս արտայայտութիւնն ընել։ Այո՛, պիտի ջանամ Քեզ սիրոյն արժանի ըլլալ և վայելել Քեզ յարատև սէրն։

Կը փափաքիմ տեղեկութիւններ առնել Քեզ որ պիտութեան մասին, որովհետև արտիս պէտքն է ապրիլ Քեզ հետ և զիտնալ թէ դո՛հ է։ և երջանիկ։

[Թուական] *Հնազանդ դուստրդ*

* * *

---

6. Նամակ կնքահօր մը ուղղուած

Սիրելի՛ կնքահայր իմ,

Եթէ այս պահուն Քեզ կ՚ուղղեմ ջերմագին քարոզութիւններս, ոչ թէ սովորութեան մը հարկը վճարելու համար է, այլ սրտիս պէտքը կատարելու։ Դուք իմ հայրապետս եղած էք և ինձ սիրելի է յայտնել միշտ Քեզ երախտագիտութիւն։

Սիրելի՛ կնքա՛հայր իմ, կ՚աշխատիմ հաստատամտութեամբ. ներսիակեալ թիւերը կը ցուցնեն թէ ջանացած եմ միշտ Քեզ սիրոյն արժանի երևալու։

Երախտագիտութեան արտայայտութիւնն ըլլայ թող աչխատասիրութիւնս։

Ներկայ երկտողովս քարեմաղթութիւններս կը յղեմ Ձեզ և վստահ եղէք թէ անկեղծ են անոնք, որովհետև գիտէք Ձեզ նկատմամբս ունեցած սէրս։

Կ'ողջագուրեմ զՁեզ սրտագին ողջունով, միևնոյն ժամանակ յայտնելով գիս։

[Թուական] Ձեր երախտագէտ սանը

* * *

---

7. Նամակ կնքամօր մը ուղղուած։

Սիրելի՛ կնքամայր իմ,

Մեծ ուրախութեամբ կուգամ այսօր և կը յայտնեմ յարգանացս, սիրոյս, երախտագիտութեան հաւատիքն որով ետեւ քարեպատուհն է այսօրն իմ զգացումներս յայտնելու համար Ձեզ իբրև իմ երկրորդ մօր։ Զգիտի մոռնամ Ձեր քաղցր և անշէջ սէրն, որուն պիտի չանամ յաւէտ արժանանալ։

Վստահ եղէք, սիրելի՛ կնքամայր իմ, խօսքերուս անկեղծութեան և հաւատացէք չանքերուս՝ որոնցմով պիտի պատկեմ Ձեր բոլոր իղձերը։

[Թուական] Ձեր խոնարհ և անձնուէր զաւակը

* * *

---

8. Նամակ հարեղբօր մը հարազատ մը, եւն. ուղղուած

Այս տարի շատ հեռու եմ, որպէսզի շուրթն ի շուրթն սիրոյս արտայայտութիւնն ընեմ Ձեզ։ Ուստի տիպուած եմ շատ անգօր միջոցի մը դիմել, դրչիս, որ հակառակ իր տկարութեան պիտի յայտնէ բոլոր իզձերս. զորս կը տածենք ես և մեր տունը Ձեր երջանկութեան համար։

Հաճեցէք ընդունիլ զանոնք, որոնք այնքան անկեղծ են։

[Թուական] *ՉՁեզ սիրող*

* * *

---

9. Տիկնոջ մը ուղղուած

Ինձ մեծ պատիւ է տկար գրիչս նուիրել Ձեր Ազնուութեան՝ որ կը բաղմիք գահերէց ընկերութեան մէջ Ձեր հազուագիւտ ձիրքերով, կը մաղթեմ ի սրտէ որ Ամենաբարին Աստուած շնորհէ Ձեզ պսակը երկար տարիներու և դեղածիծաղ օրերով լեցուն Դուք շրջապատուած սիրելիներով վայելէք ամէն քաղցրութիւններ։

Ստորին մեծարանք առ Ձեզ

* * *

---

10. Բարեկամի մը ուղղուած

Սիրելի բարեկամ,

Որոշած էի անձամբ գալ և մատուցանել քարեմաղթութիւններս, բայց յանկարծադէպ պատգամ մը զրկեց զիս իմ այս փափաքս կատարելէ։ Կ'ուզէի Ձեր տունը նստուիլ և իմ սիրտս բանալ. բայց հիւանդ եմ և բժիշկը կ'արգիլէ ինձ դուրս ելնել։

Լաւագոյն օրերու կ'սպասեմ, որպէս զի քարեկամական այս հարկը մատուցանեմ Ձեզ. իսկ առ այժմ ուրախ եմ որ գրիչս կարող կ'ըլլայ փոքր ի շատէ այս պարտքս կատարելու և մաղթելու Ձեզ երջանիկ տարիներ։

Կը ցաւիմ որ այս անկեղծ թղթով կը յայտնեմ, ինչ որ կենդանի բարբառով պիտի ուզէի արտայայտել։

Ընդունեցէք, սիրելի՛ բարեկամս, նոր տարուոյ շնորհաւորութիւնս։

[Թուական]

---

11. Դարձեալ նոյն նիւթ

Սիրելի՛ բարեկամս,

Հարկ չեկայ առանձնաբար բանաձեւեր գործածել, ինչ կը գրեմ Ձեզ։

Մեր վաղեմի և հաստատուն բարեկամութիւնը իրա-

եամբ չհաճիր ատոր։ Սակայն կը փափաքիմ ըսել թէ հեռաւորութիւնը զիս չատ կը տխրեցնէ։

Գործերս կ'ստիպեն զիս հեռու մնալ տակաւին իմ ծննդավայրս քաղքէս։ Սակայն անպատմ է որ հեռու կ'անցունեմ Ձեր տարեւոյ այս օրն, հեռու Ձեզէ, հեռու իմ բոլոր բարեկամներէս։ Ուստի բարեմաղթութիւնս ներս կը ծրարեմ թղթիս մէջ և կը մաղթեմ Ձեզ երջանկութիւն։

[Թուական] Ձերդ

* * *

---

12. Պատշգամի մը ուղղուած։

Տէ՛ր,

Ներուի ինձ որ համարձակիմ մատուցանել ուրանչացումս Ձեր այնքան ձիրքերուն համար։ Ձեր ազնիւ պաշտպանութիւնը զիս կը յուզէ մեծապէս։

Սնա նոր տարին և ես ամբողջ խանդով կը ձօնեմ բիւր օրհնութիւններ Ձեր չքնաղ կեանքին, թող բարի Աստուծոյ հրեշտակը կարկառէ Ձեր շրթներուն՝ երկայնակեցութեան բաժակը, որովհետև դուք որքան ապրիք, այնքան կ'երջանկացնէք շատեր Ձեր բարիքներով։

[Թ. Լական] Յաւէտ երախտապարտ Ձեզ դ

* * *

---

13. Նամակ ընկերուհիի մը իր ընկերուհիին ուղղուած։

Սիրուհի՛կս,

Ի՞նչ գրեմ, չգիտեմ, քի՛զի՝ որուն կը թուին միշտ զգացումներս. շատ առիթա՛ն է գրչիս ըսել թէ կը սիրեմ զքեզ։ Սիրոս առով չգոհանար։ Կը պաշտեմ զքեզ. այս բացատրութիւնն ալ կամաց կամայ կը հիմնայ. աւելի հրեշէն ոճ մը կ'ուզեմ. բառեր չեմ ուզեր, այլ կայծեր, որոնց վառարանն է սիրոս, բայց թղթի մէջ չեն կրնար ծրարուիլ անոնք։ Ինչո՞ւ հեռու ըլլամ քենէ. հեռու ըլլալ ինձ համար տանջանք մ'է։

Հաւատա՛, Ֆո՛յր իմ, սիրոս ամբողջ գրաւած ես դու։ Թիւրիցս կը գրկեմ զքեզ և կ'աղաչեմ որ նամակներդ ստէպ ուղղես. ի՞նչ փոյթ, ընտրէ՛ քեզ երկարաբան ոճն և ես յարիշտակութեամբ պիտի կարդամ ինչ ոչ գրես։

Նոր տարւոյ բարեմաղթութիւններով՝

Ֆոյր

[*Թուական*]

* * *

---

14. Մor մը աւուրաց տօնը շնորհաւորելու նամակ որդւոյ մը կողմէ։

Ամենասիրելի՛ մայրիկս,

Մի՛ հարցուներ սրտիս թէ ինչո՞ւ կը բաբախէ այս պահուն. ուրախութիւն մըն է որ քնարի մը պէս

զայն կը թրթռացնէ։ Ո՜հ, ո՜րչափ երջանիկ եմ այս վայրկեանին. կարծես թէ հոգիս մէջէն երգեր կը լսե՛մ, որոնք սիրելի անուն մը կ՚երգեն, անո՛ւն մը՝ որ մեր տան մէջ ուրախութիւն կը տարածէ, նոր նոր երջանկութիւն կը սփռէ։ Ուրեմն ինչո՞ւ ես ալ այդ անունին չնուիրեմ իմ մանկական թոթովանքս, հիացումս և էքս։

Քո՛ւլդ է այդ անուն, ո՛վ սիրելի մայրիկս, անոր տարեդարձն է որ ինձ ուրախութիւն կը պատճառէ, և ես որչափ ալ փափաքիմ շնորհաւորութիւններ ընել, խօսքիս տկարութեան վրայ ցաւած կը յուզուիմ, համբի մը նման՝ որ միայն անիմաստ ձայներ կը հանէ և չկրնալով իր զգացածին լեզու տալ, կը տանջուի ու կուլայ։ Սակայն եթէ լեզուս կը լուէ, բայց արդէն սիրտս մաղթանքներու հեղեղ մը կը պոռթկայ սիրելի անուանդ այս տարեդարձին առթիւ։ Ապրիս դուն, ապրիս ուրախ ու զուարթ և մեր տուն ըլլայ դրախտ մը՝ ուր երջանիկներ բնակին յաւիտեան։

Սառնքն են անկեղծ և սրտագին բարեմաղթութիւններս քեզ ընծայուած, ո՛վ սիրելի մայրիկս, անուանդ այս տարեդարձին առթիւ՝ ուրկէ կը ցաւիմ որ բացակա՛յ եմ այս տարի։

Միշտ հնազանդ և երախտագէտ որդիդ

[Թուական]

* * *

15. Աղջկան մը ճամակը իր հանգիցն։

Սիրելի՛ մեծ Մայրս,

Սրտաառուցիր դուն և ես բաժնուեցայ. գացի գպրոց։ Այն առեն զգացած վիշտս նուաղ էր, երկար ուղեւորութեան մը հետանկարը, մեծ քաղաք մը տեսնելու գաղափարը, նորադոյն մտերմութիւններ գտնելու յոյսը, այս ամէնը կը չափաւորէր տխրութիւնս։ Մինչ դուն կը հառաչէիր, ես մտքովս իբրև թռչուն կը թռչէի։

Եւ այսպէս մեկնեցայ, և գրեթէ ժպտուն, կարծես վին ծածկուեցայ կրթարանին մէջ։ Հոս քանիցս կը յիշեմ մանկութեանս նուիրած խնամքներդ, և ի՞նչ ուրախութեամբ կը նայիմ դէպի անցեալն։ Կը լսեմ կարծես ձայնդ՝ որ հոգիս ներսում կը խնդրէ մէկ յաւ-ցանքիս համար և միւսնոյն ժամանակ քարի խրատ-ներ կուտայ։ Ո՛չ, չեմ մոռնար երբեք, ո՛չ տքնութիւններդ անկողնոյս տնարն, երբ ես հիւանդ եղած եմ, ոչ այն գիշերներն, երբ ինձ համար բարեձև շրջազգեստ մը կը պատրաստէիր, ո՛չ այն ամէն խրատներն՝ որ քեզ կը պատճառէին այնքան յոգնութիւն և նեղութիւն։

Այն առեն կարող չէի սիրոյդ մեծութիւնը հասկնալ։ Բայց այսօր կ'զգամ զայն, և այս պատճառն մինչ ամէն ոք կը բերկրի, կը մտածեմ քու վրադ, սիրելի՛ մեծ մայրս, և երախտագիտութեամբ լի շնորհակալութիւն կը մատուցանեմ Աստուծոյ և կ'աղօթեմ անոր՝ որ պարգևէ քեզ խաղաղիկ անվիշտ օրեր։

[Թուսկան]

* * *

16. Նամակ Տիկին Սեվինեէի... կոմսին ուղղուած։

Շնորհաւոր նոր տարի, սիրելի՛դ իմ կոմս, թող այս տարին անցեալ տարիներէն աւելի բարեբաստիկ ըլլայ Ձեզ։ Թող Ձեր վայելքներն ըլլան անդորրութիւն, հանգիստ և առողջութիւն, վերջապէս թող Ձեր օրերն այսուհետև հիւսուին իբրև ոսկեթել և մետաքսեայ։

(*Թարգմ.*)

---

17. Նամակ աղջկան մը իր հօր ուղղուած

Սիրելի՛ մայրիկ, ընկերուհեայս հետ նոր տարուոյ աւթիւ այցելեցի այս տան պատկառելի հիմնադիր Տիկնոջ։ Պատշաճութիւնն և երախտագիտութիւնն իր քով առաջնորդեցին զմեզ։ Զգացում մը աւելի զօրաւոր և աւելի տեւական, վասն զի կենացս հետ պիտի վերջանայ միայն, զիս Ձեր քով կը բերէ, սիրելի՛ և բարի մայրիկ։ Ձեզ կը մաղթեմ առողջութիւն, Ձեզ կը մաղթեմ երջանկագոյն օրեր, կը մաղթեմ ամէն ինչ որ Ձեզ փափաքելի է։ վերջապէս կը մաղթեմ Ձեզ այնչափ տարիներ, ո՛րչափ այսօր կ'սպասին շաքարներ։ Անկեղծ ճշմարտութեան միայն յարգանք կը մատուցանեմ, հաւատալով Ձեզ, թէ կը սիրեմ զՁեզ, կը պաշտեմ զՁեզ, թէ ինձ համար երջանկութիւն չիկայ առանց Ձերինին։ առանձնութեան ձանձրութիւնները՝ և հեռաւորութեան կը հանդուրժեմ միայն, որ իմ անձս Ձեզ արժանի կացուցանեմ, և օր մը աղջկանց ամէնէն երախտագէտը, պատկառոտը և խանդակաթը իբրև՝ Ձեր բարեկամուհին զանէք զիս։

(*Թարգմ.*)

18. Հօր մը ամուսնի տօնը նորհաւորել։

Սիրելի՛ հայր իմ,

Քեզ՝ որուն արտէն բղխին միշտ ինձ անհուն բարիքներ, քեզ՝ որ կը պարգևես քուկիններուդ յաւիտեան սիրոյդ գանձերը, քեզ՝ որ դիս քու քաղցր արեւովդ սնած ծաղկի մը պէս կը խնամես իբրև ժիր պարտիզպան, քեզ կ՚ուղղեմ այս մի քանի տողերս, երջանկութեան մաղթանքներով լեցուն։

Հա՛յր իմ, սիրելի ամուսնդ այս տարեդարձին առթիւ շատ քիչ է ինչ որ գրեմ։ Ի զո՞ւր միտքս կը տանջեմ, անուշ խօսքերով հիւսելու այս երկտողս։ Թէև չունենամ այլ հաճոյքը, բայց ես գոհ եմ որ փոխանակ բանաստեղծութիւն նուիրելու քեզ, սէ՛ր կը նուիրեմ. ահա միակ հարստութիւնս, միակ բաղձանքս։

Հա՛յր իմ, իբրև ամէն բարի հայրերու օրինակ ապրիս երկար և երջանիկ. անով քուկիններուդ ուրախութիւն ալ պիտի ըլլայ անվերջ։

Կրկնելով սրտագին և անկեղծ շնորհաւորութիւնս՝ կը համբուրեմ պատուական ձեռքերդ։

Միշտ երախտապէտ որդիդ

[*Թուական*]

* * *

19. *Հոր մը սևուսն սօնի ողերդ (ոտանաւոր)*

Ո՜ հայր, դեռ քաց արշալուսի արցունքով
Կ'ուզեմ շարել քարմ ծաղիկներ քովէ քով,
Ու այդ փունջն՝ անհուն սիրոյս ընծան ցոյց տալ քեզ,
Սակայն խորհիմ, թերթերն խամրին փուքապէս։

Ա՜հ, սլանայի իցի՜ւ երկինքն դէպ ի վեր,
Իբր ամպին վրայ հանգչող արծիւ անվեհեր,
Սիրուն ճակտիդ կազմել պրսակ բոցեղէն.
Սակայն չէ՞ որ մարին լոյսերն այդ ամէն։

Կամ թռչէի իբրեւ թռչուն երգեցիկ,
Որ բնութեան երգիչն է շատ գեղեցիկ.
Հա՜յր, քեզ համար յորինելու երգ սիրուն,
Սակայն ո՛չ, ո՛չ, անբան երգիչ մ'է թռչուն։

Ա՜հ, քեզ համար ծաղկի նրման վաղանցուկ
Չէ բնաւ սերս, հոսի աչքս միշտ արցունք,
Եւ կը դիւթեն սիրտս չքնաղ ու ձիրքեր.
Անբիծ հոգւոյս մէջ կը փայլի ու պատկեր։

Եւ ես կ'ուզեմ միշտ ներքողել ու անուն,
Ուրանց մաղթել քեզ շատ բարիք, մեծութիւն,
Կ'ուզեմ, կ'ուզեմ ու կեանքդ միայն եւ ու սեր։
Թող կեանքիդ ճրագ՝ անշէջ պահեն վար լոյսեր։

20. Նոր տարոյ ողերգ փոքրիկ սանկիսան վր Լոռոմէ ծնողքին (ոտանաւոր)

Իբրեւ թեթեւ թիթեռնիկ
Կամ ինչպէս զրւարթ մէկ թռչնիկ
Թռչէի ձեր մօտ միայն,
Ո՛վ իմ ծընողք անընման:

Ձեր սէրը լոկ յուզէ զիս,
Ձեզմով բերկրի միտս հոգիս,
Եւ մեր տունն է իմ դրախտ՝
Ուր սոսկ ըլլամ բարեբախտ:

Այսօր սահա նոր տարի,
Թող այն տայ մեզ շատ բարի.
Կեանք երջանիկ եւ զրւարթ,
Ունենանք փուռ, խաղեանք վարդ:

Լրսէ՛ աղերսս, ո՛վ Աստուած,
Որ սուրբ սրտէ մ'է բղխած.
Օրհնէ՛ մեր տուն յաւիտեան,
Ըրէ՛ զայն տուն խաղցրութեան:

Ուր միտս տեսնեմ ձեզի բերկրիմ,
Ո՛վ խարեզուր ծընողք իմ.
Շատ տարիներ դուք ուրախ
Ապրիք մեր տան մէջ խաղաղ:

Սիրտս լեցուն է կարօտով, սիրով,
Ի՞նչ փոյթ թէ հեռու ըլլաս դուն ինձմէ,
Ի՞նչ փոյթ թէ տարին սահի օրուան պէս,
Անբաժան ես միտս դու իմ հոգիէս:

Զիւնաթոյր ձմրան ցուրտին մէջ՝ երկ
Մեռաւ Հին Տարին, ուղարձ յաւիտեան։
Այսօր կը ծնի Տարի մ'ալ նորեկ.
Ցնծուն բերկրանօք ամբողջ մարդկութեան։

Նոր Տարուան հետը կը վերածնին յար
Ձերմ մաղթանքներս ու սէ՛րս Ձեզ համար։

Կ. Յ. ԳԱՐԱԿԻԼԵԱՆ

---

20. Մորեղբօր մը անուան տօնը շնորհաւորել

Սիրելի՛ մօրեղբայրս,

Անուանդ՝ զոր շատ սիրելի ըրած ես ինչպէս ինձ, նոյնպէս շատերու, նորէ՛ն այնքան չքնաղ ձիրքերուդ, կը փութամ տարեդարձը շնորհաւորել ամ՛ա ու քիւր երջանկութիւններ մաղթել Ձեզ։ Ինչ որ գրեմ, կզգամ թէ շատ սկար տողեր կուգան գրչիս տակ. այնչափ մեծ է միշտ հիացումս և սէրս Ձեր մասին։ Իցի՞ Ձեր օգտակար կեանքը սահի յաւէտ յաջողութիւններով պսակուած և Ձեր տուն երկնային օրհնութիւններու քոյրերովը լցուած։

Սիրելի՛ մօրեղբայրս, երախտապարտ եմ Ձեզ։ Ուստի պէտք չէ ուղղեմ Ձեզ պարզ և սովորական մաղթանքներ, այլ ամբողջ սիրոյս պարտքը լմնցնելի հատուցանեմ։ Ո՛հ, իմ երազս է տեսնել Ձեր կեանքը երկար և երջանկութիւններով լեցուն, ինչ որ ինձ համար անապատ ուրախութիւն է։

Հաճեցուցէք Ձեր պատուական ձեռքերը՝

Մնամ Ձեր հնազանդ քեռորդին

[Թուական]

* * *

ԸՆԴԼԱՅՆԵԼԻ ՆԻՒԹԵՐ

1. Նոր տարի մաղթել կնիքահօր մը. *Նոր տարի մաղթեցէք. յայտնեցէք ձեր սէրը. — Ձեր ընտանեաց վրայով լուրեր հաղորդեցէք: — Վերջաբան:*

2. Փաստաղ դուստր մը իր հանիին. *Մատաղ աղջիկ մը իր նոր տարուոյ բարեմաղթութիւնները կ'ուղղէ իր հանիին. — Նա տարիէ մը ի վեր հանիէն բաժնուած է. — Անցեալ կեանքի յիշատակներ: Այս աղջիկը՝ որ մայր չունի, հանիին խնամքները վայելած է:*

Մեր հօրը. — *Մեր հայրը ուղեւորութեան մէջ է, կը շնորհաւորենք անոր անուան տարեդարձը, եւ կ'ըսենք թէ այս տարի իր անուան տօնախմբութիւնը մեզի ուրախութիւն չպատճառեր, որովհետեւ ան հեռի է: Բաղձանքներ մեր հօր վերադարձին համար:*

4. Պատասխան նոր տարուոյ բարեմաղթութեանց. *Դժուար է ինձ պատասխանել միրուն բարեմաղթութեանց: Նոր տարուոյ այս ծեւերը այնքան կը կրկնուին, որ մարդ կ'ուզէ զանոնք բոլորովին փոփոխել, բայց ինձ համար դարձեալ քաղցր է երջանկութիւն մաղթել անոր՝ որուն կը պատասխանեմ:*

5. — Որբուհի մը իր մտրաքրջը՝ որ զիւղ մեծցուցած է. — *Անուան շնորհաւորութիւն. — Կը ցաւի որ անցեալ տարուան պէս իր իղձերը չկրնար յայտնել կենդանի բարբառով՝ — Փոքրիկ աղջիկը միշտ հիւանդ է եղած. — Այս տարեդարձին առթիւ կ'որոշէ հնազանդ ըլլալ. — Երկաթուղոյ միջոցաւ նուէր մը կը դրկէ. — Արձակուրդի ատեն աւելի մեծ անակնկալ մը պահած է.*

ԳԼՈՒԽ Բ.

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆՑ, ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ, ՑԱՒԱԿՑՈՒԹԵԱՆՑ. ՑԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ՆԱՄԱԿՆԵՐ

Դիտողութիւն. — *Շնորհակալութեան նամակներու ոճին գլխաւոր հիմն է ընդհանրապէս մատուցուած ծառայութեանց հաւատար երախտագիտութիւն յայտնել. ուստի այս զգացումը պէտք է արտայայտուի թէ՛ անկեղծութեամբ եւ թէ փափկութեամբ։*

Սակայն, կ'ըսեմ, աստիճաններ եւ սահմաններ կան, զորս պէտք է ճարտար կերպով պահել։ Անկարելի է հոս որոշ սահմաններ տալ թէ ո՛ր պարագաներուն մէջ ի՛նչ ոճ պէտք է գործածել. այս մասին սիրտն եւ ողջմտութիւնը կրնան առաջնորդ ըլլալ՝ սակայն չմոռնանք ըսելու թէ ընդհանուր առմամբ շնորհակալութիւն յայտնելու համար հարկ է ստորին ոճէ խոյս տալ, իր արժանապատուութիւնը չը կորսնցնել. եւ մանաւանդ իր ասացուածքը մատուցուած ծառայութեան տեսակին համեմատել։ Ոճ մը, այս տեսակէտով, կատարեալ եւ հրապուրիչ կրլլայ, երբ երախտագիտութիւնը յայտնուի առանց շողոքորթութեան, եւ նրբամտութիւնը զուարթութիւն մը տայ այս տեսակ նամակներու՝ որոնք ի բնէ բաւական չոր կ'ըլլան։ Անտարակոյս պէտք է շնորհակալ ըլլալ զմեզ երախտապարտ ընող անձանց, բայց նաեւ պէտք է զգոյշ մնալ, որ փոխանակ տոնոց հաճոյք պատճառելու, անոնց աւելի ծանծրոյթ չպատճառենք։

1. Բարեբարի մը։

Մեծամեծ՛ Տէր,

Դժուարին է ինձ գտնել այնպիսի բառեր՝ որոնք յայտնեն երախտագիտութեան խորին զգացումներս Ձեր նոր բարեգործութեան համար՝ որով հաճեցաք զիս պատուել։ Դուք իմ զերազանց խնամակալն էք, վասն զի ամէն դժբաղդ պարագայի մէջ ինձ ձեռք կը կարկառէք։ Յիրաւի Դուք իմ երախտապէտ սրտին համար այն էք, ինչ որ արեւուն լոյսը այն նաւաստիին՝ որ մրրկէն է ազատած։

Գոհութի՛ւն երկնից, վասն զի ամէն դժբաղդութեանցս մէջ զՁեզ ունիմ, ամէն առթիւ կը սիրեմ պատգամաւորին նայուածքս Ձեզ ուղղել, մեծահոգի բարեբարիդ, որուն քով թշուառութիւնը սփոփանք կը գտնէ։

Տէ՛ր, ի՞նչ երախտաւորիդ կեանք յաւէտ թոչի հղօր թռիչներով դէպի նոր նոր երջանկութիւն, Ձեր տուն և գերդաստան փայլի աւելի պայծառ, և Դուք Ձեր սիրելիներով շրջապատուած՝ կարող ըլլաք միշտ այսպէս Ձեր բարիքներով ուրախացնել շատեր, ըստ որում այդ է միայն Ձեր սրտին պէտքը, Ձեր քաղցր հաճոյքը։

Խորին մեծարանօք առ Ձեզ

Ամենախոնարհ և ամենահնազանդ ծառայ

[*Թուխկան*]

* * *

2. Դասխարակի վր։

Սգնի՛ւ դասախարակս,

Այս պահուն երբ չնորհակալութեան մրմունջներ կ՚արձակեմ, մտքով կը շրջիմ այն երջանիկ ժամանակներուն մէջ, մինչ Ձեր ազնուութիւնը, դասախարակ անունին գերազանցապէս արժանի՝ օգտակար դասեր կ՚աւանդէիք։ Ձէր դրաբ այն առեն մեծութիւնն այն գործոյն՝ որուն նուիրուած էր Ձեր կեանքն, այլ կ՚ուրախանայի միայն զի երիտասարդ ինձ պարգեւած է դասախարակներու ամենէն պատուականը, դրրուվալիցն, որ իր պաշտօնի մեծութեան հաւասար ունի հոգւոյ մեծութիւն։

Տէ՛ր, յաւիտեան չպիտի մոռնամ Ձեր երախտիքն։ Ես ծնողական բունին վրայ աճած տկար ոստ մ՚էի, Դուք, յաչողա՛կ պարտիզպան, ամէն խնամք նուիրելով պտղալից բարունակ մը ըրիք զիս։

Յիշողութիւնս հաւատարմաբար կը պահէ ձեր խօսքեր՝ զորս անհամբերաբար կ՚ուղղէիք ինձ, բարոյական այն պատգամները, սկզբունքներ՝ զորս կը սերմանէիք հոգւոյս մէջ և կը ընդարձակէիք ինձ ունեցած մտքի և սրտի ազնուականութիւն։ Մանկական հասակի յիշատակները դիւրաւ կը ջնջուին, բայց Ձեր յիշատակները առանցմէ չեն։ անջինջ են անոնք, այսօր և յաւիտեան։

Ինչո՞ւ։ — որովհետև Ձեր դասախօսութիւնները, Հայրական սիրոն անհնար է որ մոռացութեան մատնուին։ Իսկ ես, սիրելի՛ դասախարակս, պիտի ջանամ Ձեր խրատներուն արժանի ըլլալ, պատուաւոր դիրք մը

շահել ընկերութեան մէջ, որով այն ատեն մանաւանդ պէտք համարձակիմ կոչուելու.

Ձեր երախտապէտ սանը

[Թ. ական]

* * *

---

3. Գրագէտի մը ուղղեալ՝ աւնոր գրական գործունէութեան մասին շնորհակալութիւն։

Տէ՛ր,

Ներուի ինձ համարձակութիւնն՝ որով կուզամ յայտնել Ձեզ ուածած բուռն համակրանքս։ Յիրաւի Ձեր գրիչն մոգական լան մը ունի իր մէջ՝ որով կը դիւթէք զմեզ, անդգալաբար կը հրահանգէք զաշխարհ։

Երբ կը կարդամ Ձեր նրբիմաստ հրապարակախօսի գրութիւնները, կը յաւիչտակուիմ, և կը մոռնամ թէ Ձեր ազնուութիւնը անշուշտ այն մեծ մարդոյն սերունդէն սերած է՝ որոնք ժամանակ ժամանակ կը յայտնուին հոս և հոն ճշմարտութիւններ քարոզելու։

Ի՜նչ երկար տարիներ կատարէք Ձեր հանրօգուտ գործն, որ որչափ ալ չինիչ և քարոյացուցիչ է, սակայն աւա՜ղ, ապերախտ է մեր մէջ։

Բայց Դուք չնայելով ամէն արգելքներու՝ կը դիմէք Ձեր սուրբ նպատակին, նուիրելով Ձեր անձը հանրութեան մտաւորական և քարոյական զարգացման, և՝ արժանանալ ընդունելու փառքի պսակը։

[Կամուտ]

* * *

---

4. Եղբօր մը ամուսնութիւնը շնորհաւորել։

Սիրելի՛ եղբայր իմ,

Ամենաքուն խանդով կը փութամ շնորհաւորիլ երջանիկ ամուսնութիւնդ և մաղթել նորակազմ տունդ այն ամէն բարիքներ, ինչ որ կ'ղգայ եղբօր մը սիրտը։ Սուրբ օրհնութիւններով հիւսուած Ձեր պսակը թո՛ց յաւէտ բոլորեն երանութեան մշտաթարմ ծաղիկներ, ծաղիկնե՛ր կարծես երկնային դրախտէ քաղուած։

Եւ բարի կեանքին այս չէ՞ արժանի վարձքը, այն կեանքին՝ որուն ի տղայ տիոյ նշանաբանը կ'երգայ հաստատուն առաքինութիւնը, որուն միակ խոչընդոտը չքնաղ ձիրքերով զարդարուելն է։ Այսպէս է և քուկդ, սիրելի՛ եղբայր իմ, ուրեմն ես իրաւունք ունիմ հաստատելու թէ այս նոր կեանքիդ մէջ ալ պիտի տեսնես իրձերուդ պտակուելը, յոյսերուդ իրականացումը։

Ուրախ եմ որ շնորհալի անբաժան կենակից մը պիտի կրնայ երջանկութեան երաշդ իրականացնել և տալ քեզ սուրբ վայելքներու ճաշակը։ Աստուած Ձեր տունը օրհնէ և իր հովանին ըլլայ Ձեր առաջնորդը կեանքի դժուարին ճամբուն վրայ։

Համբուրելով Ձեր երկուքին ալ նորապսակ ճակատները՝ մնամ միշտ Ձեր երջանկութեան բարեփափագ։

Ս. Ղազար

* * *

5. Հարսանեկան շնորհաւորագիր:

Սգնաւորո՛ւք Տէր և Տիկին,

Ձեր շնորհաշուք դստեր հարսանեաց հրաւիրագիրն ստացաք ընդունել։

Շնորհակալութի՛ւն այն պատուոյն համար՝ որով հաճած էք և զիս խնդակից ընել Ձեզ։ Եղո՛ւկ, զի հարկեցուցչ պարագայ մը հեռու կը պահէ զիս այդ շքեղ հանդէսէն։

Արդ ի հեռուստ կը խառնեմ տկար ձայնս հանդիսակատարդ զուարթ ձայներուն հետ, մաղթանքս՝ ամուսնոց մաղթանքին, հոգիս՝ անոնց հոգիին, հայցելով երջանկապոյն կեանք մը այս նորապսակ ամուսիններու համար։

Սնա հոր յարկ մը եւս կը բարձրանայ նոսան այն բոյնին՝ զոր գրաւիչ կերպով կը դնէ ծիծեռնը դարման ծաղիկներու, սիւներու, շարի ու շղի մէջ. անոր բուսնիլէն սեմին վրայ կը կանգնի կոյսն մանկամարտ, շնորհալի, ամօթխած. իր տկարութեան մէջ հզօր, իր երիտասարդութեան մէջ դիւցազնուհի մը, իր արքութեամբ ուսը ուսի պիտի փոխէ և կամ դրախտի մը՝ ուր կը վիճի ծաղիկն, ուր կը վայլի ճաճանչն, ուր կը շողայ և սէրն։

Եւ կա՞յ մի՛թէ աշխարհի մէջ ուրախ հմայիչ բան մը անկէ աւելի, երբ օր մը զիրար կը գտնեն երկու էակներ, և սէրմէկէ անբաժան մնալու համար կ'ուխտեն։ Երկուքն անծանօթներ, որոնք այսօր բարեկամ բարեկամաց հետ կ'ելլան, նոյնիսկ եղբայր և քոյր, և իրարու հետ կը բաժնեն իրենց հաճոյքն ու դուն, իրենց ժպիտն ու

արցունք, ամէն տենչեր, ամէն յոյսեր, ամէն եւ ազ-
նիւ։

Այսպէս անա Ձեր դուռն ալ կը միանայ օժտեալ
երիտասարդի մը հետ։ Իսկ՝ այդ երջանիկ դոյգը կը տա-
նէ՝ յաւէտ ամէն բարութիւն։ անոնց ծաղկապսակ
հերկայնի յաջորդէ պտղալից ապագայ։

Անա այս է մաղթանք Ձեր մտերիմին։

[Թուական]

* * *

---

6. Քրոջ մը կողմէ իր քրոջը ամուսնութիւնը շնորհաւորել։

Քաղցրի՛կ քոյր իմ,

Վերը, անհուն կապոյտին մէջ թռչքոտող թռչունին թեւերն ունենայի, հասնելու համար քու եռեւէդ, ո՜վ քոյր իմ, որ անա կը հեռանաս մեր գրկէն։ Բայց ուր որ ալ ըլլաս, դէպի քեզ պիտի թռչին մեր սրտագին մաղթանքներ, ու ակամէնիդ երկար առնելու բիւր բիւր ձայներու մէջէն քու կենդանի ձայնը պիտի լսեն, քու երջանկութեանդ երգերով թրթռացող անոնց շրթունքներուն վրայէն։

Ո՜հ քաղցրի՛կ քոյր իմ, մինչ կը հեռանաս, դիտե՞ս, գիտե՞ս արդեօք թէ ի՜նչ պարապութիւն կը թացուի հոս այս մեր ընտանեկան դրախտին մէջ քու մեկնումովդ։

Թէև հեռու հեռու, բայց երազներու մէջ պտըտող հրաշալի ոգիներու պէս, անուշ տպաւորութիւն մը

պիտի կաթեցնես միշտ մեր կեանքի բաժակին մէջ, բարի հրեշտակին պէս զոր մեր աղօթքներուն մէջ կը տեսնենք, քեզ ալ այնպէս մեր մտքը պիտի կարծենք ու ժպիտներով պիտի ողջունենք քեզ։

Կարելի չէ կասեցնել ընթացքդ դէպի այն լուսաւոր ճամբան՝ ուրկէ կ'անցնիս վարդեր կոխոտելով թև թևի տուած այն աղնիւ երիտասարդին հետ՝ որ քու առաջնորդդ է, Տուքիթի պահապան հրեշտակին պէս քու քայլերուդ հսկող, քու ուրախութիւններուդ ընկեր անբաժան։ Ուրեմն թող բարին Աստուած վերէն շնորհէ Քեզ իր մեծ պարգևը, երջանկութիւնը, վարձքը Քեր աղնիւ կեանքին, մրցանակը Քեր առաքինութեան։

Ահա սրտագին մաղթանքս, անկեղծ սրտիս անկեղծ շնորհաւորութիւնը քեզ, ո՜վ քոյր իմ քաղցրիկ։

Միշտ քուկդ

[Թո ական]

* * *

---

8. Մանկան մը ծննդեան առթիւ շնորհաւորական նամակ։

Տէ՛ր,

Ո՜րչափ կը բերկրիմ այս պահուն, մինչ աստուածային շնորհք կը դեղու Քեր տան մէջ, մինչ նորածին մը կարծես լուսափթիթ ամպոյ կողերէն փրթած ճառագայթ մը կ'ողողէ Քեր տուն ուրախութեամբ, կը բերէ Քեզ երջանիկ հանդէս, որ լցի՜ւ սկիզբ ըլլար

շատ մը երջանկաւէտ առիթներու։ Ցարդ այս մանկիկ հրեշտակ մ'էր, երկնքէ երկինք թռչտող, այժմ որդի կ'ըլլայ Ձեզ, ցարդ ծաղիկ մ'էր երկնային դրախտին, այժմ կը ծլի Ձեր բուրաստանին մէջ՝ քաղցրիկ բոյրերով և շնորհագեղ տեսքով։ Եւ հիմայ մտքով կը մտնեմ այս երախայի փառաւոր ապագայի մէջ, կը տեսնեմ աճած հասակով և իմաստութեամբ. ամենքն երանի՛ կուտան իր ծնողքին, մինչ փառքով պսակուած կ'երեւի աշխարհի առջև. իր պայծառ ճակատը կը թրջուի բարի հօր և մօր սիրակաթ համբոյրներով և առաքինութիւնը կը վարձատրէ զայն անմահ դափնիներով։

Այո՛, դեռ փափկիկ և տկար է, բայց այդ քնքուշ մարմնոյ մէջ մեծ հոգի մը կը բնակի, և սրտիկը կը բաբախէ արքութեան և անմեղութեան համար։

Արդ ահոր և Ձեզ միշտ երջանկութիւններ մաղթելով՝ Եմ

[Թուական] Ձեր խոնարհ ծառայ.

* * *

---

9. Շնորհաւորական նամակ մեծ հօր նուիրուած։

Ամենասիրելի՛ մեծ հայր իմ,

Ցունիս տարբեր բան յայտնելու Ձեզ, այլ ինչ որ յաճախ, դրեթէ ամէն ժամ կ'զգամ, ինչ որ միտքս մէն մի վայրկեան կը մտածէ, այսինքն Ձեզ նկատմամբ սէր և երախտագիտութիւն։

Ինձ համար տարւոյն ամէն օրն ալ Ձեր անուան

ասնի օրն է, վանդի ամէն օր, ամէն ժամ Ձեզմով կ'ուրախանամ. Ձեր սիրով կը բաբսիէ սիրտս։

Ուրախութիւն է ինձ ունենալ մեծ հայր մը, մեր գերդաստանի փառքն։

Մայրս շատ անգամներ ինձ խօսած է Ձեր ձիրքերուն մասին. ո՜հ, ի՜նչ բերկրութիւն ինձ, եթէ ունենամ Ձեր սրտի բարութենէն կայծ մը, Ձեր աղնութենէն ճառագայթ մը

Իցի՛. կարենայի աւելի հրապուրիչ ոճով բայատրել զգայումներս. գեռ խօսելու. անլոյր երախայ մըն եմ կարծես. նա՝ որ միայն իր ապաւորութիւնները արցունքով կամ ժպիտով կը յայտնէ։ Կ'ուզեմ խօսիլ, բայց գաղափարներս թռիչ առող բառեր ինձ կը պակսին։

Սակայն Ձեր ներողամտութեամբ քաջալերուած այս մի քանի տողերով կը յայտնեմ Ձեզ Ջերմագին բարեմաղթութիւններս։

Հաւատացէ՛ք, սիրելի մեծ հայրս, Ձեր նկատմամբ տածած զգայումներուս անկեղծութեան և անվերջ սիրոյս՝ և ընդունեցէք կ'աղաչեմ, զիս՝

[Թուական] Ձեր շնորհապարտ թոռան

* * *

---

10. Շնորհաւորութիւններ բարեկամուհիի մը ուղղուած։

Սիրելի՛ զ իմ Գոհար։

Կը յիշե՞ս այն օրն, երբ ի միասին կը չրջէինք Պէօյիւք-ոէրէի քարափներուն վրայ, տեսանք ծերունի մը՝ որ մեռնէ ողորմութիւն խնդրելց։ Հէքն քոկ ոնի էր,

ուժգին, ողբմուկ և վառուն կաքեկ։ Սա՜ղ, մեր նը-պատան ի՞նչպէս կարող էր սիրել թշուառին այնքան տառապանքն։ Տխրութեամբ կը դիտէիր ծերունիին հեռանալը, և պարապ քսակդ ինձ ցոյց տալով, կը ցաւէիր որ չես կրնար աւելի սիրել թշուառները։

Այն առեն արտասուալից էին աչերդ և սեղմելով ձեռքս, լաւ կը յիշեմ թէ այսպէս ըսիր. «Մ՛հ, ինչո՞ւ հարուստ չեմ»։

Անչուշտ բարերար ոգի մը լսեց քու ձայնդ, երկինք պատկից իջնելդ, որովհետև դու այսօր հարուստ ես դեռ նոր ստացած ժառանգութիւնով։

Ասով կը շնորհաւորեմ քաղաքիդ աղքատները, զորս երջանկացնելու ամէն դիւրութիւններով օժտուած ես հիմայ։ Շատեր պիտի օրհնեն քեզ. ի՞նչ փոյթ թէ երախտիք ապերախտներու պատահին։

Շնորհակալութի՛ւն, սիրելի մտերմուհիդ իմ, վասն զի հաճած ես առաջին անգամ տեղեկացնել ինձ քու երջանկութիւնդ։

[Թուական]

* * *

---

11. Շնորհակալութիւն ընկերուհիի մը կողմէ իր ընկերուհիին։

Ցաղցրի՛կդ իմ,

Դու ես ակամաներս եղար այն ցնծութեան, երբ զպրոցէս հրաժարեցայ։

Այրարե՛ւ շատ երջանիկ էի, վասն զի նորէն պիտի տեսնէի ծնողքս, և մեր դաշտերն՝ որոնք գարնան հետ

կը զեղեցկանան։ Հրճուանքս կատարեալ էր, վասն զի նարէն պիտի վայելէի ծնողքիս տեսքը։

Նոյնպէս գոհ էի որ վերատին կը գտնէի իմ սպիտակ և բարեյարդար սենեակս, վասն զի ալ չպիտի լուծէի խնդիրներ, չպիտի գրէի շարադրութիւններ, ևլն.։ Այնչափ գոհ էի, որ պահ մը մոռացայ լճակը նետել գրքերս, տետրերս, վերջապէս ամէն բան՝ որ ինձ կը յիշեցնէ դպրոցական կեանքը։

Բայց հիմա այս նախկին եռանդս նուազած է։ Ո՜հ, կը սիրեմ տակաւ մոռանալ դպրոցին վրայ, ուսուցչացս վրայ, ընկերուհեացս վրայ՝ որոնց հաճոյքին և վշտերուն մասնակից էի. ընկերուհիներուս՝ զորս գուցէ յաւէտ չտեսնեմ, որովհետև ո՞վ գիտէ թէ ապագան մեզ ո՞ւր պիտի տանի։

Երբ այս ամէնը կը յիշեմ՝ հոգիս կը վրդովի։ Կը վայելեմ ծնողքիս տեսքը, բայց կը ցաւիմ կորուստներուս վրայ, և կորուստներս ասոնք են, ուսուցիչներ և ուսուցչուհիներ, ապնիւ ընկերուհիներ, Դուք. վերջապէս այս ամէնը զիս շատ կը խռովէ։

Ի՞նչու կատարելապէս երջանիկ չենք կրնար ըլլալ. Ա՜հ, եթէ հեռաւորութիւնները կը բաժնեն մեզ, թող մեր հոգիները մերթ ընդ մերթ զմեզ իրարու մօտեցնեն, որպէս զի կարելի եղածին չափ կենդանացնենք մեր առաջին տարիներու թաղդրիկ յիշատակները.

Շնորհակալութի՛ւն այն չքնաղ նուէրին համար։ որով կը յիշեցնես ինձ մշտավաւ սէրդ։ Ես կարող չեմ կենդանի բացատրութիւններով յայտնել ինչ որ կ'զգամ քեզ նկատմամբ։

Մնա՛ս բարով, սիրելի՛ մոնրմուհիս, դուն ալ փափաքէ՛ ընտանիքին ծոցը վերադառնալուդ, բայց յիշէ՛ թէ երբ դպրոցը թողլով ուրիշ տեղ փնտռես երբ-

Ջանկութիւն, պիտի հրաժարիս նաև շատ մը ուրախութիւններէ, որոնց վրայ սիրտդ ուշ կամ կանուխ պիտի ցաւի։

[Թուական]

* * *

---

12. Կնքամօր մը նամակը իր սանուհիին՝ որ դեռ նոր աւարտած է դպրոցական ուրջանը։

Սիրելեա՛ լդ իմ,

Երէկ ընդունեցայ նամակդ՝ որ ինձ մեծ հաճոյք պատճառեց, որովհետև անով հասկցայ թէ գիւղական աշխատութիւններ քեզ չեն մոռցուցած դպրոցը։ Կը վախնայի թէ ուրիշ շատ աղջիկներու նման ըսես. — Ա՜հ, ես ապասուհի՞ մ'եմ, որ խոհանոցի գործեր սեսնեմ, հնձոց վրայ հսկեմ, հաւեր պահեմ։ Ասիկա սխալ մ'է, ուրկէ շատ մը անխուսափելի աղէտներ յառաջ կուգան։ Առանց ծանրանալու այն անհուն գոհունակութեան վրայ, զոր թէ՛ բարեւոք ընթերցումներ կը պատճառեն և թէ՛ գրութիւնք՝ որոնցմով մեր մտածումները ուրիշներու կը հաղորդենք, կ'ըսեմ թէ կրթութիւնը մեծ մեծ բարիքներ յառաջ կը բերէ։ Որովհետև դուն գեղջկուհի մ'ես, ժրաջան, համեստ, բարեսիրախանձ ոգի ունիս, հարկ կը համարիմ քեզ չօշափելի օրինակ տալ և ցուցնել թէ կրթութիւնն աղբիւր է երջանկութեան։

Հօրս կալուածներուն մէջ կան երկու բաւական կարեւոր ագարակներ. Մին յանձնուած է Պետրոսի որ կանուխէն ամուսնացաւ Սարինէի հետ, որուն հա-

մար կ'ըսէին թէ թէպէտ չունի հարստութիւն, սակայն իր դասերէն օգտուած է. միւս կալուածն կը յանձանձէ Գրիգոր, որուն կինը հարուստ կը կոչուի, որովհետև մեծ հարստութեան մը տիրացած է։

Երկու վարձակալներն ալ հաւասարապէս մատչելի, աշխատասէր և պարկեշտ։ ուրեմն ինչո՞ւ համար Պետրոս չյառաջդիմեր, մինչ Գրիգոր լաւ դիրքի մէջ է և մատղիր է արդէն վոքրիկ դաշտ մը գնել։ Միոյն բախտն յաջո՞ղ է և միւսին ո՞չ։ Սրդեօք կարկուտը և եղեամը միոյն կը խնայի՞ն և միւսը կը հարուածի՞ն։ Ո՛չ, բայց Սատինէ, որ գիտէ կարդալ, գրել, հաշուել, կանոնաւորապէս կը բռնէ տետրակներ, առուծախի հաշիւներ, և ոչ ոք կարող է զայն խաբել։ Երբ օր մը ծախքը մուտքէն աւելի ըլլայ, ամէն խնայողութիւն ի գործ կը դնէ որպէսզի հաւասարակշռութիւն պահուի։ ամէն ինչ կարգին է հոն, ոչ դրամ կը կորսուի և ոչ շռայլութիւն կ'ըլլայ։ Մանաւանդ երբ ամուսինն և ծառայք երիկոյին տուն դառնան, օրուան աշխատութիւններէ յոգնած, երիտասարդ վարձակալուհին կը կարդայ անոնց շահագրգիռ և զբօսուցիկ դիրք մը։

Սակայն ոչ ոք կ'ուզենդրէ Սատինէի և ոչ ոք գինեասուն կ'երթայ։ Սակայն նա դիւրութիւններ դուած է քաղաքին մէջ վարկ լանալու իր ամուսնոյն համար, և Պետրոս այդ դասել էն խրատուած օր աւուր կը բազմացնէ իր հարստութիւններն։ ընդհակառակը Գրիգոր որևէ օգուտ մը չքաղեր իր կնոջ գիտութիւններէն, ոչ մէկ դիւրութիւն կը գտնէ իր տան մէջ։

Թէպէտ անոր կինը Սիրարքի մեծ դրամօժիտ բերած է, սակայն օրէ օր կը ծախսուի ան, աղախիններ, ծառաներ կը վարուին իրենց ուզածին պէս։

Երիկոնները փոխանակ ընթերցումներ մոլիկ ընելու, կը կանչէ դրացիներ, կ՝արբենան, կը խաղան և դրամը կը վատնուի։ Այսպէս հասոյթը տարուէ տարի կը նուազի, և վարձակալը նորանոր պարտքեր կ՝ունենայ։ Ահա թշուառութիւն։ Այսպէս կը տեսնես, սիրելի՛ դիմ, մէկ կողմէն տգիտութիւն և աղքատութիւն, և միւս կողմէն գիտութիւն և բարեկեցութիւն։

Աշխատէ՛, ազնիկս, օգտուէ՛ այն դիւրութիւններէն՝ որոնք քեզ ոչ թէ գիտուն մը, այլ ուսեալ մը պիտի հանդիսացնեն։ Դպրոցը քեզ տրամցուցած է կարդալ, գրել, թուակապութիւն, հաշիւ. խորհէ անոնց վրայ որ քեզի բաւական են, և անոնց՝ զորս դուն աշխարհէն պիտի տեսնես։ Աւելին չեմ պահանջեր։ Քեզ ինքնուրոյն ընթերցման մի քանի գրքեր կը յանձնեմ։ Գրէ՛ ինձ մերթ ընդ մերթ, որպէս զի քու յառաջդիմութեանդ տեղեկանամ։

Շնորհաւորութիւնները դպրոցական շրջանն յաջողապէս աւարտելուդ համար։

[Թուական]

(Թարգմ.)

* * *

---

13. Հոր անուան տօնի առթիւ աղջկան մը նամակ։

Բազմեկամ՝ խա՛ղա հայր,

Ո՛չ, սառ երկի մէջ չպիտի նիրհէ յիշատակդ, սուրբ և պաշտելի յիշատակդ, որ կենացս առաջին բոպէէն մանկական խօլ ժպիտներուս ու արցունքներուս մէջ ջէն երեւցաւ։ Բարւոյն դէմքն էր այն, արշալոյսի դէմք որ որբանիս վերև ցոլացաւ։

Ո՛վ քաղցրիկ երաշ մանկութեան։

Նորաստեղծ կեանքիս ամբողջ աւիւնը և սէրը կը նուիրեմ քեզ. ո՛հ, ամէն ժամ խանդ մը կը հրդեհէ հոգւոյս մէջ, երախտագիտութեան կրակը զիս կը լափէ։

Յաւէտ օրհնութի՛ւն քեզ։

Սիրելի՛ հայր, թէպէտ հեռու, բայց կուզամ ձայնս խառնել անուանդ շնորհալի հանդէսին մասնակցողներու բարեմաղթութիւններուն և կ'աղաչեմ որ ընդունիս ջերմ զգացումներս թանկագին կեանքիդ երջանկութեան համար։

Միչտ

Սմեռնահլու դուստրդ

[Թուական]

* * *

14 Դասխարակուհիի մը հրաժեշտին առթիւ իր սանուհեաց շնորհակալութեան նամակն

Շնորհաշնո՛ւք Դասախարակուհի,

Մինչեւ զուարթ մանկութիւնը ժպիտներ կը շաղէ մեր շրթներուն վրայ, մինչեւ մեր անտիսկան կեանքը մեղի ուրախութիւններ կը ներշնչէ, բայց ահա, ի՜նչ փոփոխութիւն, կը մոռնանք այս պահուն այդ ամէնը և յանկարծ տխրութիւն մը մեր նայուածքները կը վարագուրէ։

Սմեռ մը ի վեր մեր խօսակցութեան միակ առարկան Դուք եղաք. ամէն աշակերտուհի արտասուելու չափ յուզուած չեչտով մը սա բառերը միայն կ'արտա-

անէր։ Մեր դատարակուհին կը կորսնցնենք ահա։

Եթէ մեր յոյզերը ներէին, շատ բաներ կ'ուզէինք ձեզ խօսիլ, բայց քաջ դիտնալով միանգամայն թէ Ձեր փափուկ սիրտն ալ արդէն չպիտի տոկար Ձեր աշակերտուհիներու վերջին խօսքերուն, ուստի բաւ կը համարինք լոկ ակնարկ մը նետել Ձեր յիշատակներուն վրայ։

Դուք, ո՛վ սիրելիք մեր, մեր երէց քոյրն, մեր կաթողին մայրն հանդիսացաք այսքան տարիներ։ այս սրահն՝ որուն ամփոփէն մեր բարեկրթութեան պատգամներն արձակեցիք երկար առեն, ցնծութեամբ տեսաւ զՁեզ անձնուէր դատարակուհի, զՁեզ սանուհեացս բարի ուղեցոյց, զՁեզ, սիրոյ և գորովանքի քաղցր առաքելուհի, ու հիմա կը թողուք Ձեր բեմը, կը թողուք Ձեր սանուհիները, ու մենք մեր անզօր թեւերով Ձեր ընթացքը կասեցնելու անկարող, կը դնենք ահա Ձեր ոտքը մեր տունն շնորհակալեաց, երախտապէտ զգացումներու վրանը, ու կը գոչենք տխրագին։ Երթա՛յք բարեաւ, Աստուած Ձեր հետն, երջանկութիւնը ձեր ազնիւ դլխուն ծաղիկներ բոլորէ թող։

Միշտ Ձեր շնորհապարտ սանուհիք

[Թուական]

* * *

---

15. — Քոջ մը ճամակը իր եղբօր ուղղուած. — Անուաճ շնորհաւորութիւն։

Խանդակա՛թ եղբայր իմ,

Սրիթը պատեհագոյն է ահա, սիրելի անուանդ

ասնը, որ կը նուրոդէ հոգւոյս մէջ չկերմապին զգացումները։ Դէթ այս պահուն քովդ ըլլայի, անձամբ յայտնելի բարեմաղթութիւնները։ Բայց զպրոցական կեանքը զիս քոնէ հեռու կը պահէ։ Նմանավիշտ են երկուքս ալ, դուն պանդուխտ, ես պանդուխտ։ Բայց դուն ինձմէ աւելի ժրաջան մեղու մըն ես աշխատութեան փեթակին մէջ։ Սակայն անշուշտ պիտի անցնին այս տարիներ, և սիրալիր սիրտը պիտի գոնէ դարձեալ իր ընտանեկան վառարանը, անշուշտ պիտի գոնէ դարձեալ իր բունիկը անոր շուրջ խմբուած իր հոգւոյն հատորները, հայր, մայր, և քոյր։ Հոն պահուած են իմ ուրախութիւններս, իմ երջանիկ ժամերս։

Սիրելի՛ եղբայրս, այս տարի ինձ համար խորհրդաւոր կերպով կը ներկայանայ անուանդ տարեդարձը, վասն զի աւելի քու սէրդ որոնիս կը խօսի։ Կ՚զգամ թէ ինձ փառք է քեզ նման եղբայր մը ունենալ, օժտուած այն բարձր ձիրքերով՝ որոնք եթէ պատիւ են մեր տան, մանաւանդ ինձ երջանկութիւն են։

Ո՜հ, քաղցր է ինձ մաղթել որ տպրիս երկար և երջանիկ, և անուն մը միշտ փառքով հնչէ աշխարհի առջև։

Յաւէրժ անձնուէր քոյրդ

[Թուական]

* * *

---

16. Քրոջ մը իր եղբօր ուղղած ցնորհաւորագիր։

Եղբա՛յր իմ,

Ի՞նչ մակդիր կցեմ եղբայր բառին, որ ինձ համար

քաղցր ազգն անուն ունի, և այն ինքնին կը բացատրէ ամենասիրելի սրտակցութիւնը։

Բայց քանի հնուս ապրիլ, չվայելել քաղցրիկ տեսքդ։ Շատ դառն էր ինձ, և անդա սուրբ դացին զանդիսուելիան տարիներ, որոնց մէջ չնորհիւ անխոնջ աշխատութեան՝ ամէն ուրախութիւնը և կերպարանքդ պատանիդ պատիւը աւելցնելու դիրք մը չանկցար, քաղմաթիւ մրցակիցներու մէջէն յաջողեցար և դու ընդունիլ քժշկական վկայագիր՝ որ քու անունդ ձիրքերուդ դրաւոր երաշխիքն է։ ո՛ւ, ինչ ուրախութիւն, մանաւանդ թէ ինչ երջանկութիւն քրոջդ համար՝ որ միշտ իր աղօթքներուն մէջ կը խնդրէր երկինքէն դեռ բազանց յաջողութիւնդ։

Եւ հիմայ մտքովս կը շրջիմ այն վայրերն՝ ուր սիրանք պիտի սիրուի ընդհուպ, յուսահատ հիւանդին անկողնոյն մնարը կանգնած՝ կեանք պիտի բաշխես անոր պիտի սրբես շատերու արցունքը և դքեզ սիրելի պիտի ընծայես, որովհետև ճարտար բժիշկ մը օրհնութիւն է մարդկութեան։ Երբ կը մտածեմ թէ քու թանկագին ծառայութիւններդդ արժանի պիտի ըլլան ընդհանուրին օրհնութեանց, ամէն շրթունքէ ներբողներ պիտի հիւսուին քեզ համար, անհունապէս կը հրճուիմ։

Եղբա՛յրդիս, ժամէ ժամ կ'սպասեմ ցանկալի դարձիդ։ Ա՜հ, ո՛րքան մեծ ուրախութիւն պիտի պատճառէ մեր տան՝ փառաւոր դարձդ, երկարատև բացակայութենէ մը վերջ դեղեր դրկած հայրենիներուդ դեղեր դրկած հայրենիներուդ։

Համբուրելով դեղեր կարօտ չրթունքով՝

Եմ անձնուէր քոյրդ

[Թուական]

* * *

20. Սո օրիորդ մը՝ ամուր ճշմարտասիրության առթիվ։

Օրի՛որդ,

Այնքան բուռն է իղձս Ձեր երջանկութեան համար, որ կը կարծեմ թէ անհնար է որ ինձ չափ ուրիշ մը բերկրի Ձեր նշանախօսութիւնը լսելով։ Վաղուց արժանի էիք լաւագոյն ընտրութեան մը, և կ'իմանամ թէ Ձեր խօսնայրն ալ մշակեալ մտքի մը հետ կը կրէ բարի սիրտ։ Ի բնէ քաջառոհմիկ է և այնպիսի ձիրքեր ունի, որոնց վրայ աշխարհ կը հիանայ։ Խորհրդաւո՛ր վայրկեան, երբ թողլով հայրենի տունը պիտի երթաք Ձեր ճակատագրին ետեւէն։ Հզօր ձայն մը կը հրամայէ Ձեզ հետանալ ծնողական գրկէն։ պիտի մեկնիք իբր նոր Ռեբեկա մը՝ որուն հարցուցին, Կ'երթա՞ս այս անծանօթին հետ։ և նա ըսաւ։ Կ'երթա՛մ։

Ուրեմն գնացէ՛ք և դուք, Այնիւ Օրիորդ, գնացէ՛ք ողջունել երջանիկ կեանք մը ձեռք ձեռքի տուած ընտրեալ երիտասարդի մը հետ։

Այսպէս կը մաղթէ ի սրտէ Ձեր աղգա՛ման՝

[*Թուակոն*]

* * *

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Դիտողութիւն. Այս տեսակ նամակաց մէջ ամէնէն կարեւոր կէտն է զգոյշ կենալ սեթեւեթեալ ոճի մը պահանջումներն ու ոգին գործածելէ (Նամակներ՝ որոնց նպատակն է ըստ սովորութեան ազգականի մը կամ բարեկամ մը մահուամբ դիւրազգած անձանց հոգւոյն մէջ մխիթարանք ներշնչելու ցանկով)։ Այդպիսի ասացուածներու պչրանք մը խիստ ծաղրելի եւ անյարմար կ'ըլլայ, որովհետեւ

այդ եղանակով նամակագիրն ցոյց պիտի տայ աւելի մեծագի նամակ գրելու նպատակ ունենալն քան ուրիշի ցաւոց կարեկից ըլլալն։ Այս տեսակ նամակներու մէջ երբեմն կը պատահի կրօնական գաղափարներ ալ խառնել, մեր ոչնչութիւնը մեր աչքին առջեւ ունենալով աւելի մեր խորհրդածութիւնները կը դարձնենք **Գերագոյն Էակին** զօրութեան եւ մեծութեան վրայ։ Մեր մտածմունքն դազաղի մը տեսքով աշխարհային կապերը խզելով կը սլանայ անսահմանելի ապագայի մը բնագաւառները, անմահութեան անհուն դաշտեր, այս աշխարհի մէջ մեր յարգած եւ մեր խնկարկած ամէն ինչ մեզ կ'երեւի իբրեւ ծաղրելի խաղալիկներու կոյտ մը...։ Այսպէս մի քանի երկիւղած եւ փիլիսոփայական պարզ խորհրդածութիւններ, անոնց հետհանգուցեալին գոլեսը կը մեղմացնեն մորմոքներ։ Նամակագիրն այս կերպով նոր արցունքներ կը խլէ իր արտաշարժ եւ մելամաղձոտ զովաբանութեամբ եւ կը ծնուցանէ վշտի մէջն իսկ ներքին բերկրանք զգացընող հրապոյր մը։ Նամակառուն խանդաղատանօք կը կարդայ եւ այդ ընթերցման գործածած ժամանակն տեսակ մը սփոփում է իր վշտին։ Միւս կողմէ չմոռնանք ըսելու որ մարդ իր ժամանակն ի զո՛ւր կ'անցունէ կարդալով յանախ արարողական այն գրքին ձեւերն որ կը գործածուին այնպիսի գրութեանց մէջ, որոնց մէջ ճշմարիտ ցաւը երբեք չերեւիր իր կինը կամ իր ամուսինը կորսնցնող անձին ուղղուած ցաւակցական նամակով։ Բայց անուրանալի է որ ճշմարիտ բարեկամներու չափ չեն տարիր պարզ ծանօթներ, կը բաւէ որ այդ գրողներէնմիայն մին անկեղծաբար Ձեզ ցաւակից ըլլայ, ահա այդ բարեկամն է որ չգրեր այնպիսի նամակներ, որոնց արարողական ձեւեր միայն ի նկատի կ'առնուին, այլ նա կը խառնէ իր արցունքներն Ձեր արցունքին։ Այս այլ եւ այլ խորհրդածութիւններէն յետոյ՝ որոնցմով ուզեցինք նամակագիրն պատրաստել ցաւակցական ամէն տեսակ նամակներու շարադրութեան, փութանք այժմ այդ նիւթերուն վրայ օրինակներ տալ։

21. Յաւակցական նամակ տիկնոջ մը ուղղուած իր ամուսնոյն մահուան առթիւ։

Տիկի՛ն,

Ծանրաթախիծ սրտով իմացայ Ձեր ամուսնոյն մահուան լուրը։ Դեռ այնքան մատաղ, իրեն հետ կը թաղուին գեղեցիկ յոյսեր. իր բարեմասնութիւնները և աղնիւ հոգին կը խոստանային Ձեզ մշտուոր երջանկութիւն։ Կորսնցուցիք զանի. հաղուագիւտ ընկեր մ'էր, որ Ձենէ բաժնուեցաւ. սակայն ո՞չ ապաքէն ամենքս ալ ստիպուած ենք մէկմէկու ետեւէ յաւիտեանական մնաս բարով։ Ա՛հ, իմ արցունքներս ալ կը խառնեմ ձերիններուն հետ. սակայն միթէ անհընա՞ր է չմխիթարուիլ. այո՛, անկարելի է մոռնալ իր կորուստն, բայց անկարելի չէ չմխիթարուիլ։ Երբ կինք ուր կ'ուզենք մեր արցունքոտ աչքերը, ձայն մ'ունի, որ մեր ականջին կը հնչէ այսպէս. Մխիթարուեցէք, ես եմ որ գ'երջանկացնեմ իմ սիրելիներս։

Տիկի՛ն, Ձեր ամուսինն այնքան առաքինի և երկիւղած՝ կը վայելէ այժմ Աստուծոյ սիրելեաց պահուած երջանկութիւնն. Յիշենք թէ հոս մենք վաղանցիկ. կարճառուտ կեր մ'ունինք. որքանէ սկսեալ մահուան կը դիմենք, բայց առաքինին համար կայ ուրիշ կեանք մը, որ կը վարձատրէ զայն իր բարիքներուն համար։ Այն երկնային օթեւանին մէջ արդարներ պիտի գտնուին. Ձեր ողբացեալ ամուսինն զլխաւորաբար կը քաջալերէ զՁեզ արիաբար տանիլ ամէն վիշտերու։ Այսուհետեւ առանձնեցէք Ձեր որդւոց վրայ

մօր և հօր կրկին պարտաւորութիւններն։ Այն անմեղ էակներն զՁեզ ունին նեցուկ. անոնց վրայ կը գտնէք իրենց հօր գծերը։ Թող անոնք թանկագին ըլլան Ձեր մայրենի գթոյն առջև։

Ցանձնելով զՁեզ Հոգւոյն Սրբոյ ափոփանքին՝ պատիւ ունիմ ըլլալու, Տիկին,

Ձեզ հնազանդ և ցաւակից

[Թուական] Ծառայ

* * *

---

22. Պատասխան ցաւակցական նամակի՝ տիկնոջ մը կողմէ ուղղեալ.

Սգնուազա՛րմ Տէր և բարեկամ,

Ներեցէք նամա՛կս կարճառօտ ոճին. անապարոյն կացութիւնս զիս կը չքմեղայնէ անշուշտ։ Ձեր ափոփանքն ի խոր ազդեց ինձ։ Երախտապարտ եմ Ձեզ, զի կը ջանաք վշտայս բեռը թեթեւցնել։ Կը յուսամ թէ կրօնական զգացմունքս և որդւոյս սէրը մխիթարք կը նուազեցնեն։

Սակայն այս վշտայս մէջ քաղցր է ինձ մտածել թէ ունիմ բարեկամ մը՝ որ կը յուզուի իմ տառապանքիս վրայ։ Կ'զգամ Ձեր մխիթարութիւններուն արժէքն, և շնորհակալութիւններս կը յայտնեմ Ձեզ, վասն զի այնքան զգայուն սրտով կը հաճիք ցաւակից ըլլալ իմ դժնդակ կացութեանս։

Կ'աղաչեմ որ ընդունիք այս առթիւ խորին մեծա-

Զեր ամենայն հաւատարմութեամբ, սիրելի ընկեր, ուրախ եմ թէ
դէպ ի ինձ գրեցիք։

[Թուական]

* * *

---

23. Յաւակցական նամակ հայրական որդւոյ մը ուղղուած։

Տէ՛ր,

Ձեր ամուսնական հօր մահը դիս շատ խորին տրտմութեան կը մատնէ. ապա՛ռ եղէք թէ անկեղծութեան յաւակից եմ Ձեզ։ Կը սիրէի Ձեր հայրը, մաքուր առՀև կուգայ այն ազնիւ քաղաքացին. և ինքնին կ'երեւայիս Ձեր խորին ցաւը։ Ո՛չ, չպիտի ուզեմ Ձեր սուգին մածութիւնը նուազեցնել, զի օրինաւոր է այդ. լայէ՛ք Ձեր կեանքի հեզինակին վրայ, որդիական սուրբ հարկ մ'է այդ. լայէ՛ք, Ձեր արտասուք պատիւ են Ձեզ, և կ'ապայուցանեն Ձեր զգայուն հոգին և բարի սիրտն։

Տէ՛ր, այժմ առիթ կենաց տխուր վրան. մեր ճակատագրին այս է, հեռագնեմ բաժնուիլ աշխարհէ, բնակիլ չիր մին գիշերին մէջ։ Ձեր որդին իսկ մի օր պիտի մատուցանէ որդիական հարկն Ձեր գերեզմանին վրայ։ Երանի՜ Ձեր հօր, վասն զի իր առաքինութիւններ կ'ըլլան Ձեզ ժառանգութիւն։ Եղի՛ք անոր նմանող. անոր հոգին Ձեր փառքն է։

Ձեր կացութիւնը կը յուզէ զիս, և կը ցաւիմ որ կ'ունենայ կ'ունենաք տատապել, ոչ թէ ինքներդ. կորուստներ տեսնել, նկատել չուզեր պատպանութիւն մը. տխրեցնող։

Սակայն կ՚ազաչեմ որ արիանաք Ձեր կսկիծին մէջ և ընդունիք զէս՝
[Թուական] *Ձեզ սպակից բարեկամ*

* * *

24. Ցաւակցական նամակ

Ազնի՛ւ բարեկամ,

Ո՞ւր է նա, չքնաղաձիր քոյրդ, որ զպրոցի զրաստեղանիներուն վրայ իսկ՝ կը վայելէր գեղեցիկ համբաւ։

Նա քեզ եղբօրդ հրճուանքն էր, ծնողքին քաղցր երազն։ Ա՜հ, ինչո՞ւ խաւիրեցաւ այն ծաղիկն, ո՞ւր արդեօք սլացաւ այն նորատիտուր թռչունն։

Իր անմեղի կեանքն ի՛նչ հմայք կը ներշնչէր։ Իր սուրբ պատկերն ի՛նչ խոկումով մը կը յափշտակէր սիրտն, ինքն իբր ժիր և զգաստ աշակերտուհի մը՝ ի՛նչ նախանձելի տիպար էր իր համատի ընկերուհիներուն։

Արդեօք նա մի՞ն էր այն խմաստուն կոյսերէն, որ լրմնոյ լապտերները վառելով գացին երկնային հարսնիքն։

Դեռ կենաց գարնան մէջ կը ծաղկէր սիրուն, ծաղկի մը քնքուշ տեսքով, թոյրով ու քոյրով լի, հեզահամբոյր, բարեմոյն, յուսալից էակ մ՚էր, ընդհուպ պիտի պատկուէր շրջանաւարտի պսակով ի փոխարէն իր այնքան չքնաղ աշխատութիւններուն և յաջողութիւններուն։

Աւա՜ղ, փոխան այդ պսակին ծաղիկներ ծածկեցան իր թոշնեալ ճակատն, իր դագաղն։

Եւ սակայն սիրուէ՛, ալնի՛ւ բաշեկամ, նա կ՚ապրի դեռ իր անմեռ յիշատակով։ Նա յաւէտ պիտի մնայ կենդանի սիրելեաց սրտերուն մէջ։ Եւ երբ ամէն դարուն ծաղկին շուշան և մանիշակ, պիտի յիշեցնեն մեզ վարդաբեռիկ քրոջը, այն անբիծ կուսին չնորհքներն և զգաստ ոգին։

Հայցելով քեզ և ընտանիքիդ տրտուժ հոգիներուն սիրոփանք՝

Եմ

[Թուական]

* * *

---

27. Յաւակցական Նամակ

Տէր,

Այն խորին ցաւը՝ որով կը կսկծայ սիրտդ սիրելի զոքանչ մօրդ այնքան դառն որքան անակնկալ մահուամբ, կարգս մը բաժնել քեզ հետ։ Կարուսոն էր այս պատուական կնոջ մը, զոր առաքինութիւնը իբրև իր աղջիկը մատնանիշ կը ցուցնէ Եւայի թոռներուն, հետեւաբար անժուանալի պիտի մնայ, իր սիրելիներու ըլլանակին մէջ։

Այս հարուածէն սաստնած և հաղիւ զսպած մեր արցունքները՝ հոսեցեան քի իր դադարին, աւարելով կեանքն, որուն վայելքը կարճառև է միշտ։ Ծաղկին պէս է ան, որ թեթեւ շունչէ մը կը խամրի, խոտին պէս՝ զոր անցորդը կը կոխոտէ ու կ՚անցնի։

Ի՞նչ բան պիտի կրնայ լեցընել տիկին Յուլիանէի ձգած պարապութիւնը, սիրոքանքի ի՛նչ խօսքեր պի-

տի կրնան ամոքել քու և աշնիւ սիկնոջդ զկայծ վիշտը, մանաւանդ սիկնոջդ՝ որ կորսնցուց անզուգական մայր մը, որուն գովեստը կը հնչեսին հոս ծաղնօթ շրթներդ։

Ի սրտէ կը մաղթեմ իրեն տրիւթիւն հանդուրժելու այս մեծ աղէտքին և սփոփուելու հոգով քու նաև իրենցերուն սիրոյն համար։

Կեանքի ամէն պատնութիւններէ ազատ պահէ Աստուած Ձեր տունը, ուր ապրի յաւէտ Տիկին Յուլիանէի, այն բարի կնոջ յիշատակը իբրև անաղօտ լոյս մը Ձեր ընտանեկան յարկին։

[Թուական]

* * *

---

28. Որդեկորոյս հօր մը։

Տէ՛ր,

Տկար գրիչս կը գոգայ մատնելու տակ, երբ կը փորձեմ մատնակցիլ վիշտ ունեցուած սրտով զՁեզ հարուածող դառն կորուստին։ Ձեր ընտանեկան սրբութեան խորանէն ճրագ մը կը վերնայ և կամ Ձեր սիրոյ բուրաստանէն ծաղիկ մը խորշակահար կը թառամի։ Աստուած իմ, ի՜նչ անաւոր հարուած է այս և ինձ կը պակսին բառեր Ձեր հայրական գորովալից սիրտը սփոփելու։ կարող չեմ Ձեր դառն արցունքներու աղբիւրը դադրեցնել, ան կը հոսի անընդհատապէս իբր քաղցր սիրոյ տուրք, և ես գլխիկոր և ապշահար կը մնամ Ձեր ազնիւ սիրոյ մեծութեան առջև։

Բայց ահա կը խորհիմ թէ աղնուական միտք մը

չասանիր բնաւ անաւոր պատահականութիւններու առջև. ան կ'արհամարհէ շանթերու հարուածները որ կ'սպառնան իր գոյութեան. ճշմարիտ դիւցազ մ'է այսպիսին. ան է որ կը գտնէ իր մէջ սիրտը, թէպէտ իր սիրելին պատկերը չհեռանայ իր երևակայութեան առջևէն։

Ուրեմն ներո՛ւ ինձ հաւատալ թէ ձեր սիրոյ մեծութեան հաւատար է Ձեր կորովը, որ Ձեզ կ'արիացնէ հանդուրժել յաւագին աղէտներու։ Ձեր վաղամեռիկ որդեակը ձեզմէ անքաժան է, քանի որ ան իր ներշնչած քուռն սէրը չմարիր Ձեր մէջ յաւէտ։ Գորովալից հայր մը իր անշնչացած որդւոյն գերեզմանը իր մէջ կը կրէ, նման այն թագուհիին որ իր վախճանած սիրելի ամուսնոյն գերեզմանը ուզեց ունենալ իր մէջ, և սիրելւոյն մոխիրը գինիի հետ խառնելով խմեց ապառեց։

Որքին ցաւակցութիւն Ձեր վարդափթիթ սիրելոյն կարօտին համար և երկնային սփոփանք Ձեր պաշտելի հոգւոյն։

[Թուական]

* * *

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ՆԱՄԱԿՆԵՐ

Գիտողութիւն. — Երբ կը յանձնարարէք բսրեկամ մը, ազգա՛կան մը, օտարակա՛ն մը, պաշտպանեալ մը, վերջապէս թշուառութեան մէջ գտնուող անձ մը, կ'ուզէք միեւնոյն անձին վայելել տալ այնպիսի շնորհներ, զորս աստիճանաւոր անձ մը կրնա կատարել։ Ուրիշ կերպով բացատրելով, Ձեր վարկը կը գործածէք ի նպաստ երկրորդի մը։

Յանձնարարութեանց բազմաթիւ տեսակներ կան. L.

շանալու է զանոնք անխորհրդաբար եւ անխտիր կերպով գործածելէ. որովհետեւ ատով դուք տեսակ մը պատասխանատուութիւն ստանձնած կ'ըլլաք ձեր յանձնարարած անձին համար եւ վերջէն նորա գործելիք յանցանքները եւ յիմարութիւններն կրնան ձեր վրայ ծանրանալ, ուստի պէտք է այնպիսի անձեր յանձնարարել, որոնց վրայ կանխաւ նպաստաւոր տեղեկութիւններ հաւաքած ըլլաք, որովհետեւ դարձեալ կ'ըսեմ. վերջէն անոնց գործելիք թերութիւնները կերպով մը զձեզ մեղսակից կ'ընեն. Սակայն հարկ չի կայ այդ խոհեմութիւնը մինչեւ չարակամութեան եւ անձնասիրութեան հասցնել։ Անկեղծաբար կ'ըսեմ որ ինձ համար նախապատիւ է այն անձն որ չափազանց մարդասիրական բնաւորութեամբը անձը կը վտանգէ քան այն անձ՝ որ այդպիսի անպատեհութենէ մը խոյս տալու համար ոչ մէկուն բարիք կը մատուցանէ։

Ցանձնարարական մը գլխաւոր նիւթն է ընդհանրապէս յանձնարարելի անձին գովեստն, որով կը շարժենք սիրտն այն անձին՝ որմէ պաշտպանութիւն եւ բարեացակամութիւն կը խնդրենք։

Աւագի մը, նախարարի մը յանձնարարութիւնն հրաման մ'է զայն ընդունողին համար։ Ցանձարարական նամակներ պատուական բան մ'են։ Ասոնք օտարականի մը, վաճառականի մը համար մեծ առաւելութիւն մը ունին, որոնց վստահութիւնը կը շահեցնեն յանձնարարեալին։

---

28. Որբ աղջիկ մը յանձնարարել։

Սգնի՛ւ բարեկամ,

Ինձ պատիւ ըրած էք Ձեր մտերմութիւնն և թանկագին վստահութիւնը նուիրել։ Եւ քաջ գիտեմ թէ ամէն պարագայի մէջ կը հաւանիք իմ խորհուրդներուս, որոնց գլխաւոր արժանիքն է անկեղծութիւն։

Ուստի ազատաբար կը յանձնարարեմ Ձեր խնամքին և բարերարութեան՝ Օր. Ոգոհէ՝ որ շատ կանուխ

խէն որբայած, ամէն շնորհերու և ձիրքերու տէր աղջիկ մըն է։ Իր հայրը պատուաւոր քաղաքայի մ'եղած է, հէքն անզօր ըլլալով մաքսոյ անողոք հիւանդութեան մը դէմ, վերջին շունչը փչած է կնոջ և որբուց համար հառաչելով։ Ընտանիքի հայրն այսպէս ինքնուէր յեղոյց հոգ՝ թէ կինն ևս ապրի, ան՝ որ ուխտած է անբաժան մնալ ամուսինէն. այսպէս կինն ևս բաժնուած է աշխարհէ՝ թողլով անպաշտպան որբեր։

Ահա այն վիճակ՝ որուն ենթարկուած էր այն հէք որբուհի՝ կենաց առաջին օրերէն, և սակայն հակառակ բնական զժուարութիւններուն ստացած է ընտիր դաստիարակութիւն մը, որ իր ուրիշ ձիրքերուն հետ միանալով իր հարստութիւնը կը կազմէ։ Նա կարող է ըլլալու տան վարուելի օրիորդ, մանկավարժուհի, ընթերցուհի, ևն։ Իր կերպարանքը վեհ է և շարժումներն՝ կիրթ, այնպէս որ իր տեսքը արդէն ատենքի հետ խառն դէրով մը կը ծնուցանէ Զեր մէջ։

Կը հաւատամ որ իմ բարեկիրթ և սիրուն պաշտպանեալս դուք առաջին պիտի ըլլաք պատուաւոր դիրքի մը մէջ դնելու, այն հաստատ հաւատով թէ այսպիսի օրիորդ մը պաշտպանել Զեր փափուկ զգացումներուն համարատաստան կը դտնէք։

[Թուական]

* * *

29. Պանդուխտ ուսանողի մը Ս. Պատրիարք հոր ուղղած նամակին առնոր պատասխանությունը հայցելու համար։

Բարձր աչուրն Սրբազան Հա՛յր,

Եթէ համարձակութիւն կ՚առնում դիմել Ձեր բարձր Սրբազնութեան, և Ձեր ծանր ծանր զբաղմանց մէջ պահիկ մը ունկնդրութիւն խնդրել, պատճառն պատասխանութեան հանդէպ ուսած ունիցս է։

Աղբահոտա՛մ Տէր, պահդուխտ եմ, ուսման և դիտութեան սիրով եկայ Երկրէս, ուղեւորի ցուպը ձեռքս առի և եկայ հոս, Պոլիս՝ ուր շատ են բարձրագոյն վարժարանները։ Բայց ո՞վ է որ ինձ նուիրէ թանկագին պաշտպանութիւն։ Կը յիշե՞ մինչ թէ, դիւղէս եւլած առեն մայրս յորդ արցունքներ թափեց, պզտիկ քոյրս քլանցքէս բռնեց և ըսաւ. «Սոսոֆ, քեզ չպիտի թողում, դո՞ւն ալ պանդուխտ»։ Ո՜հ, ատոնք դառն են, բայց չէի կրնար եղան պէս մեր արտերն ակօսող դուքանին լծուիլ և ուրիշ մնալ։ Կ՚զգայի թէ աշխարհներ պահանջներ ունի. ինչպէս արտեւտա՛ն լոյսեր կը վառին ամէն կողմ, նոյնպէս ուսման լոյսեր ալ կան։

Սրդ, Սրբազան Հա՛յր, արտասուաբին կ՚ալաչեմ որ Ձեր բարձր հովանաւորութեամբ պաշտպան կանգնիք ինձ և քանաք լի՞ ա՞ջև գպրոցի մը դռներն։ Ձեզմով ըլլամ իյի՛ւ ապագայ ուսեալ անձ մը, երբեմն մօրս, քրոջս գիրքը նուիրեմ, Ձեր հօրն ժիր աշխատքը ըլլամ։

Անդադար ըզձիցս կատարման
Մնամ Ձեր Բարձր Սրբազնութեանդ
հնազանդ որդի

[Թուակիր]

* * *

30. Հոր մը ցամաքն հեռաւոր ծանօթի մը պատպանութեան յանձնարարել իր որդին:

ՏԷ՛Բ,

Պատիւ ունիմ ծանուցանել Ձեզ թէ որդիս քաղաքիս դպրոցականներէն միոյն մէջ պաշտօն առանձնած է. ի լուէ հակուած ունէր նա արուեստագէտ ըլլալ, և ես չուզելով հակառակիլ իր յօժարութեան, ուղարկեցի հոդ:

Սակայն որովհետև դեռ այնքան մատաղ է և այն հասակի մէջ է՝ յորում դիւրաւ կը զեղծանի, ներկայիս հարկ կը համարիմ յանձնարարել զանի Ձեր խնամքին և պաշտպանութեան: Ունիք դուք ևս սիրտ ուն որդիներ, հետևաբար Դուք և ձեր նմաններ կ՛գիտան խնդրանքիս արժէքը:

Որովհայտ տեղեկացուցի թէ նա այլ ևս այդ տեղ տնի մէկին՝ որ հօր մը աչքով պիտի հսկէ իր վրայ: Այսուհետև մեծ բնոյթ մը ստացած կը համարիմ զանձս, քանի որ կը դիմեմ Ձեզ: Նա պիտի հնազանդի Ձեզ ամէն ատենս և զՁեզ պիտի նկատէ իբրև իր մեծատորը. Նա կարօտ է Ձեր բարի խրատներուն և՝ պարտաւոր է իր ընթացքին համարը տալ Ձեզ իբրև իր հօրը:

Այսու երախտագիտութիւն կը կացուցանէք զիս՝

[*Թուական*] *Ձեր անձնուէր ծառան*

* * *

31. Կարեւոր անձի մը պատասխանութիւնը խնդրելու համակ։

Սգնուա՛ծ Տէր,

Ձեր բարեսրտութիւնն այնքան հռչակուած է, որ վստահաբար կ՚ուզէմ Ձեզ ներկայս։ Ես իսկ խորապէս զգացած եմ Ձեր երախտիքն, որոնց յիշատակն այնքան դրուած է զիս։ Ուրեմն թոյլ տուէք ինձ Ձեզ ուզել իմ ազերաս, և Ձեր պաշտպանութիւնն հայցել։

Կ՚ուզեմ (պէտք է յայտնել խնդիրն յստակօրէն եւ քիչ բառերով) *Ձեր շնորհները եւ ես վայելել, Ձեր հզօր ազդեցութիւնն ինձ համար մեծ դրաւական մ՚է թէ պ՚ետք յաջողիմ խնդրանացս մէջ և թէ ընդհուպ յոյսս պիտի պահեմ։ Սակայն կը հանդիսանի մոռանալ զուարթութիւնս ապագայիս համար։ այժմէն կ՚ստանամ զոհացում իմ բոլոր փափաքանացս մասին և Ձեր պաշտպանութեան ապաւինելով կ՚ունենամ վստահութիւն իմ բարեաք կացութեանս նկատմամբ։*

Պատիւ ունիմ ըլլալու խորին մեծարանօք՝

Ձեր ամենախոնարհ և ամենայրու

Ծառայ

[*Թուականն*]

* * *

32. Որեւէ յանձնարարական նամակ:

Տէր՛,

Զո՛նիմ երկիւղ Ձեր քարոզութեամբ զեղծանել ու, ներկայացնելով Ձեզ դրա համար։ Պարոն Թադէոս Վարուց ի վեր կը ճանչնամ զինքը ամէն կերպով վստահութեան արժանի անձ։ Սակայն նա կարող չէ ապրիլ առանց պաշտպանութեան, և որովհետև զՁեզ կը ճանչնամ ամէն քարեսրտութեամբ օժտուած, ուստի չեմ վարանիր յանձնարարել զայն՝ որ կը փափաքի Ձեր ծառայութեան տակ մտնել և անձնուիրաբար աշխատիլ առանց թերանալու իր պարտականութենէն, որոնք են ուղղամտութիւն, աշխարչութիւն և հաստատամտութիւն։

Ընդունեցէք, եւայլն։

[Թուական]

* * *

---

33. Յանձնարարական նամակ:

Տէ՛ր,

Ի՞նչ պիտի ըսէք ինձ համար։ դուք Ձեր քարոզութիւններն զգացուցիք ինձ օգտակար ազդեր հոգեւոր։ Զոգցեր Դուք միայն երբ խառնուութեան զգացումներ կ՚ազդէք ինձ, և տակաւին պէ՞տք է որ ձանձրացնեմ զՁեզ։ Ո՛չ, մի՛ կարծէք զիս բառերու համարձակ, բայց անա խրոխտութիւնն։ կորովի, մտացի և լաւ առաքինի սիրող երիտասարդ մը չգիտնալով ի՛նչ ընել՝ չեմ գիտեր ի՞նչպէս, կը մտածէ դալ ներկայանալ Սիրէյ։

Ես կը լսէ Զէր վրայ խօսիլս, իմ պահապան հրեշտակին. «Ո՛հ, ո՛հ, կ'ըսէ, քանի որ ան Զեզ քարիք կ'ընէ, ուրեմն ինձ ալ կ'ընէ։ Ինձ համար գրեցէք անոր»։ «Բայց, Պարո՛ն, մոռացէ՛ որ չարաչար պիտի գործածեմ իր բարեգործութիւնն»։ —«Է՛հ, ուրեմն, գործածէ՛, կ'ըսէ ան։ Բոլորովին անոր պիտի նուիրուիմ, ոչինչ կը խնդրեմ, անոր պիտի ծառայեմ ամէն բանի մէջ։ Ժրաջան եմ, հլու եմ, յոգնութեան կը դիմանամ։ Վերջապէս անոր համար ինձ նամակ մը տուր»։ Ես որ բարեմիտ մէկն եմ, անոր կուտամ նամակ։ Նամակն առնելուն պէս չատ երջանիկ կը համարի իր անձ։ «Պիտի տեսնեմ...» կ'ըսէ։ Ես ահա այս կորովի երիտասարդը Զեզ կը դիմէ։

Տէ՛ր, պատիւ ունիմ ուրեմն Զեզ զեկուցանել զայդ։ Նա Զեզ պիտի նուիրկայանոյ զեղեցիկ դէմքով և չնչին յանձն արարեալնոյ մը։

Կը պաղատիմ Զեզ, այս ձանձրութեան համար ներեցէք ինձ. յանցանքն իմս չէ, չկրցայ դիմադրել Զեր բարութիւնները դովելի հաճոյքին. և անոյշ մը բուրեմ. «Ես ալ քաջին կ'ուզեմ»։

(Թարգմ.)

---

34. Յանձնարարական նամակ գործատուի մը համար։

Տէ՛ր,

Գրամատոյցս է ժիր գործատուն, որ իր աշխատասէրութեան և ցաջողակութեան վարձերը տուած է ինձ ամէն ատենք։ Ուստի ուսնուտարութեամբ կը յանձնեմ զնա Զեզ։ Կրնաք գործածել զանի Զեր հրամանին տակ և կամ ուրիշի յանձնարարել մատնացոյց։

[Թուական]

* * *

35. Աղքատաց խնամակալութեան մը կողմէ հիւանդ մը յանձնարարել բժշկի մը։

Սիրելի Տէր,

Տնօրէն Խորհուրդս երախտապարտութեամբ լի քանիցս վայելած է Ձեր աջակցութիւն յօրուս աղքատ հիւանդաց։ Դուք իբրև քարեկամ, իբրև հայր մտահոգուած անոնց անկողնոյն քով, հոն յոյս դրսեւորուցած էք։

Սրդ, կը փութանք դարձեալ Ձեր ծանօթ քարեսրտութեան դիմել և խնդրել որ... թաղէն (այս անուն) հիւանդին քարեհաճիք դարմանել։ Ձեր այցելութիւն մեծ սիրոյանք պիտի մատուցանէ սոյն հիւանդին՝ որ Ձեր խնամքին յանձնարարուելու արժանի է ամէն կերպով։ Մարդասիրութիւնը Ձեր քնածին ձիրքն է։ հետեւաբար հարկ չենք տեսներ երկար յորդորներ կարդալ Ձեզ, ըստ որում Դուք Ձեր աղնուութեամբ նբեւիրական պարտք կը նկատէք օգնել աղքատին, և միշտ Ձեր ճարտարութեան նոր գրաւական ընծայել։

Վստահ եղէք թէ Ձեր բարեգործութեանց իբր վարձք պիտի ընդունիք աղքատաց օրհնութիւններ, որոնց կը կցենք մեր խորին շնորհակալութիւններն։

Ստեւարդիր *Ստեւարդեան*

[Թուականն]

* * *

36. Վանադատացն մը մեջ պատօրն խնդրել։

Տէ՛ր,

Պատիւ ունիմ խնդրել Ձեզէ հաշուակալի պաշտօնը մը Ձեր վաճառատան մէջ։ Դիտեմ՝ ոտմարակալութիւնս ըստ բաւականին՝ Ձեր հրամանին ներքև գործելու համար։

Տէ՛ր, պարտիմ ըսել Ձեզ թէ Պ... կատարեալ վստահութեամբ կը յանձնարարէ զիս Ձեզ։ Եւ եթէ հաճիք ընդունիլ զիս Ձեր գրասենեակներուն մէջ, ամենայն անձնուիրութեամբ աշխատող մը պիտի ունենաք Ձեր տրամադրութեան ներքև, արժանի Ձեր պաշտպանութեան և շնորհներուն։

Պատիւ ունիմ ըլլալ, Տէ՛ր, Ձեր շատ խոնարհ ծառան

[*Թուական*]

* * *

ԸՆԴԼԱՑՆԵԼԻ ՆԻՒԹԵՐ

1. Շնորհակալութիւն բարերարի մը ուղղեալ. — *Ներեցէք ինձ, եթէ չկրնամ յայտնել ամբողջ երախտագիտութիւնս Ձեր քարիքներուն փոխարէն։ Բաղդը է ինձ հաստատել թէ Դուք Ձեր ազնիւ սրտին անսացիք այս գործը կատարելով։ Ձեր յիշատակը սրտիս մէջ անջինջ պիտի մնայ։—Վերջաւորութիւն։*

Դարձեալ նոյն նիւթ. — *Մեր բարեկամն յաճախ իր օժանդակութիւնը նուիրած է մեզի եւ զմեզ շատ առիթներով երախտապարտ ըրած է իրեն։ Հիմայ դարձեալ տեսնելով իր բարեկամութեան մէկ նոր ապացուցն՝ մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք անոր։*

3. Շնորհակալութիւն. — *Մանկամարդ օրիորդ մը, որուն եղբայրը վաճառատան մը մէջ ընդունուած է, կը գրէ տիկնոջ մը որ զանի պաշտպանած է, եւ շնորհակալութիւն կը յայտնէ նոյն տիկնոջ իր ընտանիքին անունով։*

4. Շնորհաւորութիւն բարեկամի մը ուղղուած։ — *Ի՛նչ ուրախութեամբ իմացայ ամուսնութեանդ լուրը. լուրջ եւ բարեմոյն կնոջ մը զորավանդով պիտի թեթեւնան վշտերդ եւ պիտի ապրիս ուրախութիւններդ։ Դիւաւոր իր յաջող ընտրութեան համար, եւայլն։*

5. Շնորհաւորութիւն. — *Մեր բարեկամն առեւտրական մեծ յաջողութիւն ունեցած է. մեր խնդակցութիւնը կը յայտնենք եւ կը մաղթենք միեւնոյն ատեն, զի միշտ այսպէս թռչի յաջողութիւնէ յաջողութիւն։*

6. Շնորհաւորութիւն. — *Մեր ընկերուհին ծանր հիւանդութենէ մը ազատած է. կը շնորհաւորենք անոր ապաքինումը եւ կը հրա իրենք զանի՝ որ այս տարի զիւղացնացութիւն ատեն մեր մօտ գայ որպէս զի ի միասին ուրախանանք։*

Շնորհաւորութիւն. — *Կ'իմացնենք դպրոցականի մը թէ մեծ ուրախութեամբ տեղեկացանք անոր յաջող քննութիւնները անցուցեալն։ Աշխատութիւնն այսպէս կը վարձատրուի եւ կը փառաւորուի։ Ուրախանանք իր այս յաջողութեան համար։*

7. Յաւակցական նամակ հոր մը ուղղուած — *Հէր Ճայրը կորսնցուցած է որդի մը ի արժանիքով, տաղանդով, ա-*

ռաքինութեամբ. կը ցաւակցինք անոր, անոր արցունքին կը խառնենք մեր արցունքը: Ամէն ոք ցաւած է այսպիսի դժնդակ կորստեան մը համար։ Այս ընդհանուր համակրութիւնն իցի՛ւ չափաւորէ թշուառ հօր վիշտը:

9. Ցաւակցական նամակ այրի կնոջ մը ուղղուած. — *Ամենէն դժնդակ հարուածը կը կրէք, տիկին, այս կորուստով. իբրեւ մայր կը կորսնցնէք ամենէն ապահով նեցուկ Ձեր որդիներուն: Սփոփուեցէք սակայն, մտածելով թէ երկնային կամքին հպատակիլ պէտք է Ձեզ նման առաքինի կին մը։*

10. Քոյր մը մահուան համար ցաւակցական նամակ՝ — *Մեր բարեկամին, որ կորսնցուցած է քոյր մը, զգացած վիշտն զմեզ կը յուզէ խորին։ Օրիորդն էր չքնաղածիր, ամենուն մեծարանքին արժանի: Մեզ եւս դժուն է գրել այս նիւթին համար մեր բարեկամին եւ աւելի պիտի սիրէինք լռել, եթէ մեր լռութիւն անտարբերութեան նշան մը չերեւէր.*

11. Ցաւակցութիւն. — *Իր ընտանիքին հետաքրքրական ուղղեալ նամակ: Այս բարեկամուհին որ մի քանի ամիս առաջ եղբայր մը կորսնցուցած էր, այժմ եւս կը կորսնցնէ հայրը: Անոր համար անմիջապէս չգրեցինք, որպէս իր սիրտն աւելի չտխրեցնենք: —Իր մօրը նկատմամբ լուրեր։ կը ցաւինք որ այս դժնդակ պատրագային մէջ իրեն մօտ չենք: — Սփոփանք:*

12. Ցաւակցութիւն. — *Որդի մը իր հայրը կորսնցուցած է. կը յայտնենք անոր մեր ցաւակցութիւնն, եւ կ'ըսենք թէ հանգուցեալը կը թողու իր որդւոյն ժառանգութիւն՝ իր առաքինութիւնները եւ բարի օրինակներ, որք հոգեկան ստացուածք են, եւ իբրեւ սփոփանք՝ քրիստոնէի մը կեանքն եւ գեղեցիկ մահ մը։ կը մաղթէք որդւոյն՝ հօրը կեանքին նման չքնաղ կեանք մը:*

13. Ցանձնարարական. — *Շրջանաւարտ օրիորդի մը նամակն տիկնոջ մը ուղղուած, որ հեռուն կը բնակի. — Օրիորդը կը փափաքի դպրոցի մէջ պաշտօն ստանձնել. — Ըստ որում որքուհի մ'է, որոշած է աշխատիլ։*

14. Ցանձնարարական. *Մեր մէկ բարեկամը Պրուսա կ'ուղեւորի: Հոն ունինք ծանօթ մը՝ որուն կը յանձնարարենք եւ կը*

խնդրենք որ ի հարկին իր որեւէ աշակցութիւն չլլանայ մեր այս բարեկամին։

15. Յանձնարարական. — Մեր մէկ բարեկամին ջերմագէս կը յանձնարարենք երիտասարդ մը, որ գործ կը խնդրէ. — Այս երիտասարդը մեզ ծանօթ է իր անձնուէր գործունէութեամբ, մտացի է եւ բարեհամբաւ. — Եթէ անկարելի չլայ գործ մը գտնել, վստահ ենք թէ մեր բարեկամը կը ջանայ ծանօթացնել յանձնարարեալն ուրիշ վաճառատուներ։

ԳԼՈՒԽ Գ.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ, ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԴՐԱՄ ԽՆԴՐԵԼՈՒ ՆԱՄԱԿՆԵՐ

Դիտողութիւն. — Ըստ որում բնական հետեւութեամբ հարկ կ'ըլլայ գործի եւ առեւտրոյ վերաբերեալ նամակներ գրել երբ առանձին ստորագրութեամբ մուրհակներ, հասարակ պարտամուրհակներ, վաճառականական մուրհակներ, փոխանակագրեր, համեստաշխ յանձնարարութեանց գրեր, յանձնալ վաճառաց ցուցակներ, եւայլն գրուին եւ ստորագրուին. եւ ըստ որում այդ յանձնառութիւնք յաճախ տեղի կուտան բազում վիճմանց, հակառակութեանց, մերժմանց, յանդիմանութեանց. ասոր յառաջ եկած է գործի եւ առեւտրոյ թղթակցութիւնն, կամ դժուարութիւններ բառնալու, մեկնութիւններ տալու, շահեր պաշտպանելու համար եւ կամ զայնս օրէնքի մարդոց եւ ատեաններու յանձնելու։ Ուեմն բանաւոր կը կարծենք այն նամակներէն վերջ՝ որոնց վրայ տեղեկութիւն տրուինք, մեր կողմէ այս նոր նամակաց օրինակները դնել, վասն զի ասոնք շատ անգամ ծագում կուտան միւսներուն։

Այս տեսակ նամակներ ընդհանրապէս բոլորովին ի բաց կը մերժեն երեւակայութեան եւ մտքի ճիգ։ Կարելի եղածին չափ համառօտութիւն եւ յստակութիւն մանաւանդ առեւտրական նամակներու համար։ Սակայն պարզ գրել ուզելով՝ ստորին ոճով մի՛ գրէք։

1. Շրջաբերական։

Կ. Պոլիս 1 Յունուար 1902

Տ.

Պատիւ ունիմ ծանուցանել Ձեզ թէ Քաղաքիս մէջ առևտրական տուն մը հաստատած եմ

Կ. Ս. Ս. Տ Ո Ի Ր Ե Ա Ն

անուամբ, որ պիտի զբաղի ամէն տեսակ վաճառքներու արտածութեան և ներածութեան, փոխանակագրոց միջնորդութեան և յանձնարարութեան գործերով։

Հաճեցէք, Տ. ծանօթանալ մեր ստորագրութեան, որ ի ստորեւ, և ընդունիլ մեր խորին յարգանաց հաւաստիքն։

ԿՈՊԵՈՆԻԿ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

---

2. Վարկագիր

Կ. Պոլիս, 20 Փետր. 1901

Տ.

Վիէննա

Պատիւ ունիմ Ձեզ յանձնարարել Գրամատոյցս Պ... որուն կրնաք մինչև 1000 Թրք. ոսկի վճարել, փոխարէնն իմ հաշուոյս անցունելով։

Պ... Ձեզ պիտի տայ առած գումարները դէմ երկերկու օրինակով ընկալագիր, որոնց մէկ օրինակն Ձեր քով պիտի մնայ, իսկ միւսն ինձ պիտի խրկէք։

* * *

Ահաւասիկ Պ. ի ստորագրութիւնը։

---

3. Վաճառք խրկել

Տրապիզոն, 1 Յունուար 1901

Սեծարգոյ Տ...։

Ի Կ. Պոլիս

Պատիւ ունիմ ծանուցանել Ձեզ որ այսօր մեկնող Բալմա շոգենաւով ուղարկեցինք Ձեր ապսպրած 20 պարկ լուբիա։ Ներփակեալ կը գտնէք անոնց գումարն որ է 400 թրք. ոսկի, զոր յետ քննութեան հաճեցէք անցունել մեր պահանջքին Յունուար 31։

Յոյս ունիմ որ զոհ պիտի ըլլաք յիշեալ ապրանքներու թէ՛ տեսակէն, թէ գնոց աժանութենէն և թէ՛ ծախուց չափաւորութենէն, և պիտի հաճիք ի մօտոյ նորանոր հրամաններ խրկել մեզ, զորս պիտի ջանանք Ձեզ նպաստաւոր կերպով կատարելու։

Հաճեցէք, Տէր, ընդունիլ մեր յարգանքներն։

* * *

---

4. Ստացագիր

Ստորագրեալս կը յայտարարեմ որ ստացայ...է, 50 ոսկի թրք., ի հաշիւ 20 պարսկական գորգերու, զորս իրեն ծախած եմ թուականէս 25 օր յետոյ յանձնելու պայմանաւ։

Կ. Պոլիս 25 Յուլիս 1892

* * *

---

5. Բ. Օրինակ Ստացագրի:

Ստացայ Տ. ..... է 100 լիրա թրքական Պ. .....ի հրամանաւն և անոր հաշուոյն համար։

Կ. Պոլիս 15 Օգոստ. 1892

* * *

---

6. Փոխանակագիր։

Կ. Պոլիս 10 Սեպտ. 1890

Փ. Վ. Լ. թ. .....

Թուականէն երեսուն և մէկ օր յետոյ, վճարեցէք այս միակ փոխանակագրով Տ. Պէրպէրեանի հրամանին հազար չորս հարիւր ղիրուշ Թրքայ՝ան, արժէքը կանխիկ ընդունած եմ և անցուցէք ի հաշիւ ըստ ծանուցման:

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

Առ Տ. Գ. Մրբբեան
ի Կարին

7. Մուրհակ

Կ. Պոլիս, 21 Յուլիս 1900

Ս. Վ. Լ. Թ. 100

Թուականէս երեսուն և մէկ օր յետոյ, պարտիս վճարել Յ. Մանիկեանի հրամանին, հարիւր լիրա Թրքական, արժէքն ապրանքով ընդունած եմ։

Ս. ԱՌԱՓԵԼԵԱՆ

---

8. Բաց մուրհակ

Թուականէս երեսուն և մէկ օր յետոյ, այս թուղթս ներկայացնողին (կամ բերողին) պարտիս վճարել երկու հարիւր լիրա Թրքական։

Կ. Պոլիս, 5 Մայիս 1892

Լ. Թ. 200

Ս. ԵՐԱՄԵԱՆ

---

9. Հրամանագիր

Կ. Պոլիս 30 Հոկտ. 1890

Հ. Վ. Լ. Թ. 250

Յառաջիկայ Դեկտ. 30ին, վճարեցէք այս հրամանագրովս, Տ. Գրիգոր Տիլպէրեանի հրամանին, երկու հարիւր յիսուն լիրա Թրքական, արժէքն կանխիկ ընդունած եմ, և անցուցէք ի հաշիւ ըստ ծանուցմանս։

Ա. ԳԱՍՊԱՐ

Առ Տ. Սարոյեան ի Տիլիս։

---

10. Դրամ խնդրել։

Տէ՛ր,

Մինչև երէկ հաշուած էի թէ դրամական վիճակս պիտի ներէ լաւ վճարում մ՚ընել Խնայողական Տնտուկին՝ ուրկէ կարեւոր գումար մը փոխ առած եմ Պատէմլիկի տանս համար։ Արդ անհնարութեան մատնուելով վճարումս կատարելու մասին, կ՚աղաչեմ որ . . . թրք. ոսկի բարեհաճիք վճարել ինձ։ Վստահ եղէք թէ ներկայ ամսոյս մէջ կը վճարեմ զայն։ Վայրկեան մը չեմ տարակուսիր թէ կը յօժարիք ինձ ծառայութիւն մը մատուցանել, ուստի կը մնամ կանխաւ

Ձեզ երախտապարտ։

[Թուական] * * *

---

11. Ժխտական պատասխանի

Սիրելի՛ բարեկամ,

Շատ կը ցաւիմ մերժելով Ձեր ինձմէ խնդրած ծառայութիւնը։ Այս պահուն գործ ունիմ այնպիսի անձերու հետ, որոնք ինձ չեն կրնար վճարել պահանջքներս, և հազիւ հիմակուան վիճակս կը ներէ իրական ծախքերուս։

Հաւատացէք իմ ցաւիս և անկեղծ բարեկամութեանս։

[Թուական] * * *

---

12. Նպաստաւոր պատասխան

Սիրելի՛ բարեկամ,

Մեծ հաճոյքով կը կատարեմ Ձեր խնդիրն։ Գիտցէք թէ երջանիկ կ՚զգամ զիս Ձեզ որևէ ծառայութիւն մը մատուցանելու։

Կրնա՞ք վստահիլ բարեկամութեան։ Վաղը՝ հաճեցէք ներկայանալ դրասենեակս, ուր պատրաստ է որոշեալ դրամը Ձեր տրամադրութեան տակ։

[*Թուական*]

* * *

---

13. Բարեկամէ մը փոխառութիւն

Սիրելի՛ բարեկամ իմ,

Ներկայիս կը խնդրեմ Ձենէ ծառայութիւն մը։ Ձեզ կը դիմեմ, որովհետև կը ճանչնամ զՁեզ իբրև բարեկամներուս ամենէն անձնուէրը։

Այս պահուն քիչ մը դրամական տագնապ կը կրեմ։ այն վարչութիւնը՝ որուն ներքև կը ծառայեմ, այս անգամ իր վճարումներն օրաձգեց։

Կը խնդրեմ Ձենէ ինձ փոխ տալ ... դրամ, զոր ամսաթոշակս ստանալուս Ձեզ կը վերադարձնեմ։

Կրնա՞ք ինձ այս ծառայութիւնը մատուցանել։ Եթէ այո՛, ապահով եմ որ այս կերպով կ՚ընծայէք ինձ Ձեր բարեկամութեան նոր նշան մը։

Ձեզ երախտագէտ

[*Թուական*]

* * *

---

14. Կնոջ մը ճամա՛ն իր ամուսնոյն ուղղեալ, սակ խնդրելու համար։

Սիրելի՛ ամուսին,

Ո՛րչափ ժամանակէ ի վեր մոկնուած ես ասկէ։ Յիրաւի ես շատ երկար կը դոնես զայն առանց քեզի։ Նոյն իսկ մտահոգութեան մէջ եմ, քեզ նկատմամբ լուրեր չստանալով։

Թէպէտ քնէ հեռու, բայց միշտ մտքով կը հետեւիմ քեզ։ Գրէ՛ ինձ շուտ թէ որպիսութիւնդ լաւ է, և թէ ինձ քիչ մը դրամ խրկէ՛։

Գիտես արդէն թէ վճարմունքդ հաղիւ կը բաւեն մինչեւ այս ամսոյ վերջ մեր որդւոց պէտքերուն և տան համար։

Կը յուսամ թէ քիչ առնէն կը պատասխանես ինձ։ Շնորհակալութիւն։

[Թուական]

* * *

---

15. Գիտերոթիկ աշակերտէ մը իր հօրը ուղղուած դրամ խնդրելու համար։

Գորովագո՛ւթ հայրս իմ,

Քառամսեայ քնութիւնն յաջող անցուցի։ Ներփակեալ վիճակագրոյցս կը հատուցանէ խօսքիս ճշմարտութիւնը։ Շատ լաւ է վիճակս։ Հոս ամէն բանէ գոհ եմ, Դասատուներն ալ ինձմէ գոհ կ'երեւին։ Միւսիւ Պ...ի

գաներուն ամէնէն աւելի կը հետաքրքիր, առանց սակայն միւս դասերուս մէջ թերանալու։ Ո՛հ, մեծ փափաքս է բժիշկ մը ըլլալ և մեր քաղաքին մէջ ծառայել։ Հոս Պոլսոյ մէջ բժիշկներ շատ կան, մինչդեռ մեր քաղաքին մէջ հաղուագիւտ են։

Սիրելի՛ հայր իմ, անցեալ օր Տնօրէն էֆէնտին իր սենեակը կանչեց զիս և քաղցրութեամբ յիշեցուց պարոյին օրէնքը վճարմանց մասին։

Ես ալ խոստացայ գրել Ձեզ։ Կ'աղաչեմ շուտ խրրկէք այս տարեկանը։ Շատ անհանդիստ եմ այս մասին։ Խրկեցէք Պոլիս Պ. Սարգսի. ես անկէ կ'երթամ կ'առնեմ։

Շուտ պատասխանեցէք նամա՛յիս.

Կը համբուրեմ Ձեր և քաղցրիկ մօրս ձեռքերն, եղբայրներուս և քոյրերուս աչքերը։

Հնազանդ որդիդ

[Թուական]

* * *

---

16. Նամակ տան տիրոջ մը՝ տան վարձքը վճարելն յապաղելու մասին։

Տէ՛ր,

Պատիւ ունիմ Ձեզմէ խնդրել երկարաձգումի տանը վարձքը վճարելու մասին։

Գիտէք թէ նիւթական անձկութիւն մը ունինք. աշխատութիւնս դադրած է և կինս ու որդիքս քաղցած մեռնելու չեն։ Մինչև դարդ խղճահիտ ճշդութեամբ վճարած եմ Ձեզ, և վստահ եղէք թէ պիտի շարունակեմ այնպէս, եթէ հաճիք ինձ տալ պայմանաժամ մը։

Յարգանօք

[Թուական]

* * *

---

17. Նամակ տաց տիրոջ մը ուղեալ՝ խնդրելու համար անկէ վարձելու պայմանագրին երկարաձգումը։

Տ՛ր,

Մեր վարձած տան պայմանաժամը ներկայիս կը լրանայ, և հիմայ կ՚ուզեմ գիտնալ թէ ասկէ վերջն ալ կը հաճի՞ք տան պայմանագիրը նորոգել։ Ես կը փափաքիմ երկարաձգել պայմանաժամն միեւնոյն պայմաններով։

Չեմ տարակուսիր թէ կ՚ընդունիք մեր խնդիրքն ի նկատ առնելով մեր բարեհաճ յարաբերութիւնները։ Սակայն կ՚աղաչեմ որ շուտով պատասխանէք ինձ, վասն զի եթէ ուրիշ նկատումներ ունիք, կ՚ուզեմ կանուխէն ինձ տեղ գտնել։

Հաճեցէք ընդունիլ յարգանքներս։

[Թուական] * * *

---

18. Նամակ տաց տիրոջ մը ուղղեալ վարձակալի մը կողմէ աւնոր տունեն ելնելու առթիւ։

Տէ՛ր,

Անակնկալ պարագայ մը կը ստիպէ զմեզ թողուլ Ձեր տունը։

Չեմ կարծեր որ մեր ելնելովը Ձեզ մեծ վնաս պատճառէ, որովհետև մեր կողմերը հեռզհեռէ յարգ կ՚ընդունին և տուներուն գիները կ՚աւելնան, և չեմ տա-

բակուռիր թէ անմիջապէս նոր վարձ կալ մը պիտի գտնէք։

Նոյնպէս համոզուած եմ թէ կը հաւանիք խնդրանացս։ մեր բարուք յարաբերութիւնները այս մասին երաշխաւորութիւններ են ինձ։

Ձեր պատասխանին սպասելով, Տէ՛ր, պատիւ ունիմ զձեզ ողջունել։

Խորին յարգանօք

[Թուական] * * *

---

19 Գործ խնդրել։

Սիրելի՛ բարեկամս,

Համարձակութիւն ունիմ այս պահուն Ձենէ օգթիւն մը խնդրել։ Կը դիմեմ Ձեզ, որպէս զի բարեհաճիք Ձեր վարչութեան ներքև առնուլ զիս։ Սպասող եղէք թէ պաշտօնս ո՛րչափ խոնարհ ըլլայ, զիս պիտի ուրախացնէ և ամէն վերջ պիտի նկատեմ զձեզ ինձ բարերար։

Ընդունեցէք նախ և առաջ բարեկամի մը շնորհակալութիւններն։

[Թուական] * * *

---

20. Դարձեալ նոյն նիւթ։

Գերազնիւ Տէ՛ր,

Ներեցէք որ համարձակիմ Ձեր Ազնուութեան դիմել ներկայիս, Ձեր հանրածանօթ մարդասիրութեանէն

քաջալերուած և ազատելի՞ որ նուաստիս սոյն աղերսին Ձեր բարձր ուշադրութիւնը նուիրելու շնորհք ընէք։

Ստորագրեալս, երբեմն գործակատար (այս անուն) վաճառատան, իմոլանին շատ տարիներ աշխատած եմ հոն ամենայն հաւատարմութեամբ և աշխուժիւ։

Բայց հիմայ բաւական ժամանակէ ի վեր անգործ կը տառապիմ ու կը տառապին ինձ հետ կին և որդիք։ Անելորդ կը նկատեմ տխուր վիճակս պատկերացնող ու կարեկցութիւն հրաւիրող խօսքերով յուզել Ձեր ազնիւ սիրտը, միայն կ՚ազաչեմ որ հաճիք ընդունիլ զիս Ձեր ընդարձակ գործատնութեանց մէջ, ուր հաւատարմութեան և աշխատութեան գէղեցիկ ապացոյցներ պիտի գտնատուին անշուշտ Ձեր Աղնուութենէն և ես իսկ ընտանեօք՝ Ձեր քաղցր պաշտպանութեամբ երջանիկ՝ Ձեզ պիտի նուիրեմ ջերմ երախտագիտութիւնս և օրհնութիւններս Ձեր թանկագին կեանց և բարեհամբաւ գերդաստանիդ։

Ն. Ծ.

* * *

---

21. Վարձակալի մը ցամակն՝ որ ժամանակ կը խնդրէ իր տանուտէրեն։

Տէ՛ր,

Գիտէք թէ այս տարի մեր ցորենները կրսուեցան գէշ եղանակներու պատճառաւ։ Սով չկրցայ վճարել որ և է գումար պարտքիս համար։ Երախտապարտ պիտի ըլլամ Ձեզ, եթէ հաճիք երկարել պայմանաժամը։

Վճարմանց մասին ցարդ ունեցած ճշդապահու-

թիւնս ինձ յոյս կուտայ թէ պիտի հաճիք իմ խնդիրքս շահիլ։

Յարգանօք առ Ձեզ

[Թուական]

* * *

---

22. Ուրիշ ճամակ վարձակալի մը իր տաճիրոջ ուղղեալ՝ մեծ աղէտ մը յետոյ։

Տէ՛ր,

Սոսկալի ուրական մը երէկ քիչ ժամանակի մէջ աւերեց մեր գաւառները։ Նա անցաւ իբրև իրական թաթառ մը և ջրով ծածկեց, տապալեց տուներ, պըտղաւոր ծառեր, և հողը բոլորովին տակնու

23. Նամակ հիւսաց մը իր տաճիրոջ ուղղեալ՝ իր պահանջին մասին:

Տէր,

Հակառակ անխոնջ աշխատութեանս, ահա երեք ամիսներ անցան, ուրկէ ի վեր որևէ գումար չեմ ընդունար Ձենէ։ Ինքնին կրնաք հասկնալ թէ ո՛րչափ դժուարին է ինձ ապատել օրականներուս գանձման համար։ Կ՚աղաչեմ որ՝ այս չաբթու վերջ վճարել հաճիք ինձ առնելիքս գէթ կէսն։ Մնայորդը կրնաք ուշացնել քիչ մը առնի համար։

[Թուական]

* * *

---

24. Նամակ փասաբանի մը ուղղեալ:

Տ.

Կը հաճի՞ք ստանձնել այն գործն՝ որ ինձ համար շատ կարեւորութիւն ունի։ Ձեր վայելած գերազանց համբաւը կը ստիպէ զիս դիմել Ձեզ (կարճ ի կարճոյ եւ ցնայորեն յայտնել խնդիրս։) Անշուշտ պիտի հաճիք ստանձնել այս գործն. ուստի կ՚աղաչեմ Ձեզ, եւ թէ ի՛նչ ձեւ պարտի՞մ վճարել Ձեր փոխանորդագրին համար։ Հաճեցէք նոյնպէս ինձ ըսել թէ նախնական ծախուց համար ո՛րչափ դրամ պէտք է վճարել։

Յարգանքով մնամ՝

[Թուական]

* * *

---

25. Նամակ հրդեհի ապահովագրութեանց տնօրէնի մը ուղղեալ։

Տէ՛ր,

Զեզ՝ իբրև ներկայացուցչի ապահովագրական ... ընկերութեան՝ կը փութամ ծանուցանել այն արկածն՝ որուն զոհ դնաց տունս։

(Կարճ ի կարճոյ եւ յստակօրէն պատմել պատահարը, իր մանրամասնութիւններն, եւ այլն։)

Նամակիս կը կցեմ թաղապետութեան վկայագիրն՝ որ կը հաստատէ թէ մեր տունէն չէ ծագած հրդեհը։ Իմ ապահովութեանս մուրհակը (ըսէ մուրհակին թիւը եւ ամսաթիւը) *կ'ապահովէ ինձ* 200 *ոսկի թրք.։ Գործակալն զոյգ պիտի հաճիք յղել ինձ, պիտի բերէ ինձ ի հարկէ վերոյգրեալ գումարն։*

Զեր հնազանդ ծառայն

[*Թուականն*]

* * *

---

26. Վաճառք խնդրել։

Տէ՛ր,

Ներկայս ընդունելուդ պէս հաճեցէք ներկաթուղթով խրկել հետեւեալ ապրանքներն՝

.....

.....

.....

.....

Վստահ եմ թէ այն զանազան ապրանքներու մասին լաւ ընտրութիւն պիտի ընէք և այնպէս ծրարէք զանոնք։

[Թուական]

* * *

---

27. Ապրանք դրկելն իմացնել։

Տէ՛ր,

Պատիւ ունիմ Ձեզ իմացնել թէ Անդրիանուպոլսոյ երկաթուղիով Ձեզ կը յղեմ Ձեր խնդրած մի քանի տեսակ ապրանքներ, որոնց ցուցակը ներփակ կը գտնէք։

Ձեր ընդունելէն յետոյ հաճեցէք հաշիւները կարգադրել մինչև ներկայ ամսոյս վերջն։

Ընդունեցէք, Տէ՛ր, մեր խորին յարգանքներն։

[Թուական]

* * *

---

28. Գրամ վճարել հրամայել ուրիշի մը։

Տէ՛ր,

Կը համարձակիմ Ձեզ ներկայացնել դրամատոյցս, Պ. Պետրոս Սուաքելեան, որ Մարսիլիոյ ճամբով Զմիւռնիա պիտի երթայ, ուր հաւանականաբար քիչ մը աւելի պիտի մնայ՝ մինչև որ գործերը կարգադրէ։

Եթէ Պ. Պետրոս դրամի պէտք ունենայ, Ձեզ կը թոյլատրեմ իմ հաշուոյս և Ձեր ծախքերը հանելէ վերջ մինչև 2000 ֆրանք տալ իրեն, որուն փոխարէն հա-

ճեցէք տեսօրէն երկու օր վերջը վճարելի իմ վրայ փոխանակագիր քաշել։

Ընդունեցէք կանխաւ շնորհակալիքս։

Ձեր անձնուէր ծառայ

[Թուական]

* * *

---

29. Պատասխան վերոյգրեալին։

Տէ՛ր,

Անցեալ ամսոյ ... ին մեր հաշիւը հաստատելով, պատիւ ունիք Ձեզ իմացնել թէ Պ. Պետրոս Սաքելեան երէկ մեր գրասենեակը եկաւ, և 2500 ֆր. վճարեցինք իրեն, մեր ծախքերը հանելէ վերջ, ի հաշիւ այն վարկին, զոր իրեն համար բացած էք մեր վրայ։

Ներփակեալ Ձեզ կը խրկենք Պ. Սաքելեանի ընկալագիրն, և միանգամայն Ձեզ կ'իմացնենք թէ յիշեալ գումարին համար տեսօրէն տուան օր վերջը վճարելի փոխանակագիր քաշեցինք Ձեր վրայ։

Հաճեցէք ընդունիլ զմեզ Ձեր անձնուէր ծառայն։

[Թուական]

* * *

---

30. Վաճառատան մը մասին կարծիք հարցուցեալ։

Տեա՛ր,

Ձեզի երախտապարտ պիտի ըլլայինք, եթէ հաճէիք թղթաբերին վերադարձին հաղորդել մեզ Ձեր կարծիքն պատուաւորութեան մասին այն վաճառատան՝ որուն անունը պիտի գտնէք առկցեալ թուղթին վրայ։

Այս տան հետ ապրանքի մեծ գործ մ՚ընելու վըրայ ենք, և կը փափաքինք գիտնալ թէ մինչև ո՛ր աստիճան ապահովութեամբ կարելի է գործել։ Վըստահ եղէք թէ ինչ որ պիտի հաճիք հաղորդել մեզ այս մասին մեր մէջ պիտի մնայ։

Յարմար առթիւ պիտի փութանք նմանօրինակ ծառայութիւն մը մատուցանել Ձեզ։

Ընդունեցէք, Տե՛ր, մեր յարգալից բարեւներն։

[Թուական]

* * *

---

31. Վաճառատան մը պատուաւորութեան մասին վարանոտ պատասխան տալ։

Տե՛ր,

Կը ցաւինք որ Ձեր ... պատասխանին մէջ խնդրոյ նիւթ եղող տան մասին ստոյգ տեղեկութիւններ չպիտի կրնանք հաղորդել Ձեզ։ Երկար առեն է ի վեր այդ պարոններուն հետ գործելու առիթ չենք ունեցած։ Եթէ հրապարակին վրայ շրջող զրոյցներու նայինք, վերջերս մեծամեծ գործառնութեանց մէջ նեռուեր են, որոնք համեմատական չեն իրենց կարողութեան հետ։ Միւս կողմէն՝ մենք անձամբ գիտենք թէ միշտ կանոնաւոր եղած են իրենց վճարմանց մէջ։ Կը հեռեւի թէ կը վարանինք զՁեզ յորդորելու կամ զգուշացնելու անոնց հետ գործ ընելու։

Յուսալով որ ուրիշ առթիւ աւելի օգտակար կըրնանք ըլլալ Ձեզ՝

Մնամք Տեարք,

Ձեր անձնուէր ծառաներն

[Թուական]

* * *

---

32. Անձի մը ցկատմամբ լաւ խօսիլ։

Տէ՛ր,

Ի պատասխանի Ձեր ամսոյս ... ի պատուակա-նին, ուրախ եմ կարենալ Ձեզ իմացնելուս թէ Պ ... հոս հաստատուած հինգ տարիէ ի վեր, մեր հրապարակին վրայ ընդհանուր յարգանք և վստահութիւն կը վայելէ, և թէ ես յօժարակամ պիտի տայի իրեն աւելի երկար ու մեծ վարկ մը անկէ աւելի՝ զոր Ձեզմէ կը խնդրէ։ Լուրջ և պարտաճանաչ մարդ մը ճանչցուած է և ցայսօր ըրած բոլոր գործառնութիւններն՝ խելացի և բաւական աղէկ վիճակի տէր վաճառականմը ըլլալը կ'ապացուցանեն։

Այս տեղեկութիւններն ուղածնուդ պէս գործածեցէք, և հաւատացէք զիս, Տէր և բարեկամ,

Ձեր անձնուէր ծառայ։

[*Թուական*]

* * *

---

33. Անձի մը ցկատմամբ տեղեկութիւն խնդրել։

Տէ՛ր,

Վստահ միանգամայն Ձեր բարեկամութեան և դաղտնապահութեան վրայ, կը հարմարձակիմ Ձեզ դիմել տեղեկութիւն մը ստանալու համար։

Տեղւոյդ ... անուն անձէն 40,000 ֆրանքի յանձնարարութիւն մ'ընդունած եմ, որուն կէսը կան-

խիկ և կէսը 3 ամիսէն վճարելի։ Բայց որովհետև այս անձը քնաւ չեմ ճանչնար և չեմ ուզեր գործի մէջ նեռուիլ՝ առանց գիտնալու թէ ի՛նչ տեսակ մարդոց հետ է գործս, կուզամ խնդրել որ հաճիք անկեղծօրէն ինձ ըսել թէ կրնա՞մ ապահովութեամբ ապրանքս յանձնել։

Պիտի յեռաձգեմ պատասխանել ... էֆէնտիի նամակին, մինչև որ Ձենէ պէտք եղած տեղեկութիւններն ստանամ։ Կրկնապէս երախտապարտ պիտի ընէք զիս եթէ հաճիք կարելի եղածին պէս շուտ հաղորդել զայն։ Գաղտնապահութեանս վրայ վստահ եղէք և ոչ մէկուն պիտի հաղորդեմ ինչ որ իրր գաղտնիք կը խնդրեմ Ձենէ։ Հաւատացէք թէ առիթը ներկայանալուն նոյնպիսի ծառայութիւն ևս պիտի մատուցանեմ Ձեզ։

Ձերդ ի սրտէ

[Թուական]

* * *

34. Պահանջք խնդրել։

Տէ՛ր,

Պատիւ ունեցանք քանիցս Ձեզ գրել մեր հաշուոյն գումարը պահանջելու համար. բայց դուք ոչ պատասխանեցիք և ոչ ալ մեր խնդիրը կատարեցիք։

Այլ ևս չկրնալով սպասել՝ Ձեզ կ'իմացնենք թէ գործը գատարան յանձնած ենք. որովհետև անպատճառ կարգադրութիւն մը պէտք է մեզի, նկատելով որ մենք ալ շատ վճարումներ ունինք ընելիք յառաջիկայ ամսոյ 15ին։ Կը յուսանք թէ կ'ըմբռնէք մեր այս ստիպողականութիւնն՝ որ մեզի խիստ լեզու գոր-

ծածել կուտայ և թէ մեր յարաբերութիւնները չեն վը-
նասուիր։

Ընդունեցէք մեր քարեւներն

[Թուական] * * *

---

35. Փաստաբանի մը ուղղուած։

Տէ՛ր,

Տեղւոյս կօշկակարներէն Պ...ի դէմ դատավարու-
լու համար պէտք եղած թղթերն Ձեզ կը խրկեմ։ Ան-
պատճառ վճարելն կ՚ուզեմ, և բնաւ տրամադիր չեմ
շնորհում ընելու, մանաւանդ թէ այս մարդը դիւրա-
կեաց է, և իր պարտքը վճարել չուզելուն համար չեմ
ուզեր ես վնասել։

Ամէն միջոց ձեռք առէք, կ՚ապաչեմ, և առանց
յապաղման։

Ձեր ամենախոնարհ ծառայն

[Թուական] * * *

---

36. Ծանուցագիր։

Կ. Պոլիս

Տէր.....ի Սամսոն

Տէր,

Պատիւ ունեցանք ընդունելու Ձեր նամակն, որով
կ՚իմացնէք թէ Պ. ի 500 ֆր. ի վարկագիրը մը տուած էք
մեր տան վրայ։

Ձեր հրահանգները կէտ առ կէտ պիտի գործադրուին։
Հաճեցէք ընդունիլ մեր յարգանքներն։
[Թուական]

* * *

37. Ծանուցագիր։

Կ. Պոլիս

Մեծ. ..... ի Նիկոմիդիա

Տէ՛ր,

Կը Համարձակիմ Ձեր տան վրայ վարկ մը բանալ հետեւեալներու .....։

Հաճեցէք իրեն վճարել որչափ դրամ որ ուզէ, մինչև ..... ֆրանք, ի փոխարէն իր ընկալագիրներուն, կամ փոխանակագիրներուն՝ զորս ուզէ քա՞շել մեր տան վրայ Ձեր հրամանին, որն որ Ձեզի հաճոյ ըլլայ։

Ընդունեցէք մեր յարգանքներն։

[Թուական]

* * *

38. Այլ ծանուցագիր

Պրուսա

Մեծապ. ..... ի Քոնիա

Տեա՛ր,

Ներկայիս Ձեզ կ՚իմացնեմ թէ ..... ի վարկագիր մը տուած եմ Ձեր տան վրայ ..... ֆրանքի։

Հաճեցէք ի նկատի առնուլ զայն ի պատիւ իմ սառապրագրութեանս։

Մնամ, Տեա՛ր, Ձեր խոնարհ ծառայն

[Թուական]

* * *

39. Ապրանքի մը յանձնարարութեան մասին. ընտիպիֆ։

Տէ՛ր,

Ներկայ ամսոյս ..... ի Ձեր պատուականաւորինձ գրուած յանձնարարութենէն շատ գոհ մնացի և աղաչելով այս մասին իմ անկեղծ շնորհակալիքս ընդունիլ, ներկայիս կը կցեմ հաշուեցուցակն այն ապրանքներուն՝ զորս անմիջապէս Ձեզ խրկեցի։

Ապրանքն բոլորովին համաձայն պիտի գտնէք նըմոյշին, և կը յուսամ թէ Ձեր գոհունակութիւնը պիտի յայտնէք անոր նկատմամբ՝ ի մտոյ նոր յանձնարարութիւն մ՝ալ տալով ինձ։

Խորին յարգանօք

40. Տաճ մը սնանկութիւնը ծանուցանել։

Տէ՛ր,

Ցաւօք սրտի կը ծանուցանեմ Ձեզ ... Եղբարցտան սնանկութիւնը։

Դժբաղդաբար մեծ պահանջք ունի՛ իրենց վրայ։ Որովհետև դուք ալ առնելիք ունիք, կը փութամ Ձեզ

ծանուցանել, որպէս զի պէտք եղած միջոցները ձեռք առնէք։ Այս մասին ինչ որ պատահի, փոյթ պիտի տանիմ Ձեզ տեղեկացնելու։

[Թուական]

* * *

---

41. Պատասխան։

Տէր,

Մեծապէս շնորհակալ եմ Ձեզ ... Եղբարց տան վրայ Ձեր ինձ ուղղած տեղեկութեանց համար։ Մեծ զարմանք չպատճառեց ինձ այս բանը, իմացած ըլլալով արդէն թէ իրենց երկու փոխանակագրերն բողոքի առիթ տուած էին։

Որովհետև նոյն քաղաքին մէջ կը գտնուիք, շնորհապարտ պիտի ըլլամ Ձեզ եթէ հաճիք զիս ներկայացնել այս գործին մէջ. այս մասին Ձեզ կը խրկեմ իրենց հաշիւն հանդերձ փոխանորդագրով։ Սակայն եթէ կրնաք կարգադրութեան մը յանգիլ, կամ պայմանաժամ մը շնորհելով իրենց և կամ ամբողջ պարտքին վրայ 25 կամ 30 առ հարիւր զեղչ մ'ընելով, աւելի աղէկ է քան թէ դատի մտնել։ Ինչ որ ալ ըլլայ, Ձեր վրայ այնքան վստահութիւն ունիմ, որ կատարելապէս կ'ապաւինիմ Ձեր խոհեմութեան։ Գործեցէք ինձ համար այնպէս՝ ինչպէս պիտի գործէիք Ձեր անձին համար, և հաւատացէք զիս,

Ձերդ, Եայլեն

[Թուական]

* * *

---

42. Զեկոյց

Երիտասարդ մը, քաջահմուտ վաճառականութեան, և որ հինգ տարի Պոլսոյ ամենէն նշանաւոր վաճառականց միոյն մէջ պաշտօն վարած է, պաշտօն մը կը գտնուէ. Ամենալաւ տեղեկութիւններ կրնայ տալ։ Դիմել նամակով ... փողոց ... թիւ ...։ Պատասխանն անմիջապէս։

Յ. Գ. — Աղէկ Անգլիերէն ալ կը գրէ ու կը խօսի։

---

43. Պայմանագրի օրինակներ։

Ստորագրեալներուս, Բերա ... փողոց ... թիւ ... բնակող վաճառականն ... ի միջև։

Եւ միւս կողմէն, Բերա ... փողոց ... թիւ ... բնակեալ՝ վաճառական ...ի միջև։

Հետեւեալն պայմանագրուած է։

Յօդ. Ա. — Վերոյիշեալ անձանց միջեւ հաւաքական ընկերութիւն մը կազմուած է, ամէն տեսակ ապրանքի վաճառականութիւն ընելու համար, յանձնառարողէ քով զոր ցարդ Պ. ... առանձին կ'ընէր։

Յօդ. Բ.— Դրամագլուխը երեք հազար ֆրանք պիտի ըլլայ, և կէս առ կէս պիտի դնէ ընկերաց իւրաքանչիւրն. տրուած դրամագլուխը կրնայ դրամ կամ ընկերութենէն ընդունուած ուրիշ արժէթուղթ ըլլալ։

Յօդ. Գ. Ընկերութեան անունը պիտի ըլլայ...։

Ընկերակիցներուն իւրաքանչիւրը պիտի կրնայ ստորագրել, բայց այդ ստորագրութիւնը միմիայն ընկերութեան գործերուն համար պիտի կրնայ գործածուիլ։

Յօդ. Դ. — Ընկերութիւնն հաստատուած է Բերա ... փողոց ... թիւ։

Յօդ. Ե. —Ընկերութիւնը պիտի տևէ տասը տարի, և պիտի սկսի յառաջիկայ Մարտ 1էն հաշուելով։

Յօդ. Զ. — Ընկերակիցներուն և ոչ մին պիտի կըրնայ իր հաշուոյն գործ ընել, որովհետև բոլոր իր խնամքներն ընկերութեան գործերուն պէտք է նուիրէ։

Յօդ. Է. — Շահերու բաժանումը կէս առ կէս է։

Յօդ. Ը. — Ընկերակիցներուն իւրաքանչիւրը պիտի կրնայ՝ իր ընկերակցին հաւանութեամբ՝ ընկերութեան մասերը դնել, ընթացիկ հաշուով, ուզածին չափ գումար. ընկերութիւնը տարեկան 6% տոկոս պիտի տայ իրեն այս գումարին համար. գոնէ ամիս մը առաջ ընկերութեան չիմացուցած՝ գումարը չպիտի առնու։

Յօդ. Թ. — Ամէն ամիս, իւրաքանչիւր ընկեր ... պիտի առնէ. այս ստացուած դրամները ընդհ. ծախքի հաշուոյն պիտի անցնին։

Յօդ. Ժ. — Ընկ. լիքիտասիոնը ընկերներու միոյն կողմէ պիտի ըլլայ, և աւելի անոր կողմէ՝ որ ընկերութեան վաճառականութիւնը պիտի շարունակէ։

[Գրեալ ի Բերա Թուականն] Ստորագրութիւնք

* * * * * *

---

44. Պայմանագրի ուրիշ օրինակ։

Ստորագրեալներն՝ ... մեծաքանակ փայտի վաճառական, բնակեալ ի Բ ... փողոց, ... թիւ, մէկ կողմէն; և ... կալուածատէր, բնակեալ ի ... փողոց, ... թիւ, միւս կողմէն՝

Հետեւեալ պայմանները կնքած են.

Յօդ. 1. — Ես ..., կը յայտարարեմ դլխապրութեամբ ընկերանալ Պ. ...ի հետ, մեծաքանակ փայտի վաճառականութեան մէջ՝ զոր կ'ընեմ ի ... ուր պիտի հաստատուի ընկերակցութիւնը, բաժնելու համար, հետագայ եղանակով, յիշեալ վաճառականութենէն պատահելիք վնասները, սակայն այնպէս որ ինչ որ ալ ըլլան այս վնասները՝ Պ. ...ի նկատմամբ, իր դրած դրամագլուխը չ'անցնին։

Յօդ. 2. — Ներկայ ընկերութիւնս ... տարուան համար կնքուած է, սկսեալ ի ... ց ...։

Յօդ. 3. — Ընկերութեանս բոլոր տեւողութեանը միջոցին՝ յիշեալ վաճառականութենէն յառաջ գալիք ամէն տեսակ շահերու և վնասներու կիսոյն միայն մասնակից պիտի ըլլայ Պ. ...։

Յօդ. 4. — Ես ..., կը խոստանամ յիշեալ ...ի վճարել ... դումար, հետեւեալ ժամանակամիջոցներուն։ Յիշեալ ... դումարը, ընկերութեանս ամբողջ տեւողութեան միջոցին, յիշեալ Պարոն ... ի տրամադրութեան տակ պիտի ըլլայ, և ամբողջ ինք պիտի գործածէ Ընկ. վաճառականութեան գործերու մէջ։

Յօդ. 5. —. Պ. ... առանձին պիտի վարէ ընկերութիւնս։ Հետեւաբար, ինք պիտի ընէ գնումները և վաճառումները, ինք պիտի ընտրէ ծրագիրները և ընկերութեանս միւս գործակալները, և պիտի տեսնէ միւս վարչական գործառնութիւններն։ Պարոն Մ ... և ոչ մէկ կերպով պիտի կրնայ յիշեալ ընկերութեան գործերուն խառնուիլ։

Յօդ. 6. — Ընկերութեանս անունը պիտի ըլլայ ...։ Միայն Պարոն ... պիտի ստորագրէ ընկերու-

թեան անունով, և այդ ստորագրությունը միայն ընկերութեան պէտքերուն համար պիտի կրնայ գործածել։

Յօդ. 10.— Ընկերութեանս պայմանաժամը լրանալուն, Պարոն Մ... իր դրած դրամագլխոյն գումարը և անոր ինկող շահերուն բաժինը պիտի ընդունի. եթէ վնաս ըլլայ, իր դրած դրամագլուխն պիտի ընդունի, անոր ինկող վնասը մէջէն հանուելէ վերջ։

[Թուական] Ստորագրութիւն

ԸՆԴԼԱՅՆԵԼԻ ՆԻՒԹԵՐ

1. Առեւտրական նամակ. — *Գիւղը կը բնակիք եւ սովորութիւն ունիք տարեկան նպարը մէկանց գնելու. գրեցէք այն նըպարավաճառին որմէ կը գնէք սովորաբար, յանձնարարելով իրեն ձեր պէտք ունեցած նպարեղէնքը։*

2. Առեւտրական նամակ. — *Հայրերնիդ՝ որ անդամալոյծ է եւ չկրնար գրել մէկու մը՝ որուն ստակ փոխ տուած է եւ որ տոկոսները դեռ չէ վճարած։ Ամենայն քաղաքավարութեամբ կը գրէք եւ կը հրաւիրէք այդ անձն՝ որ մէկ մ'ալ չուշացնէ պարտքը վճարել։*

3. Առեւտրական նամակ. — *Ձեր մայրն՝ որ այս միջոցին շատ զբաղած է, ժամանակ չունի գրելու նպարավաճառի մը՝ որուն յանձնարարութիւն մ'ունի ընելիք. ձեր մօր տեղ դուք կը գրէք, մի՛ մոռնաք նշանակել ուզուած ապրանքներուն գինն ու քանակութիւնը։*

4. Վաճառականական նամակ. — *Վաճառական մը նոր տուն մը կը հաստատէ իր մէկ գործակատարին համար՝ որ երկար տարիներէ ի վեր իրեն քով ծառայած էր հաւատարմապէս։ Արդ այս տունը իր բոլոր թղթակիցներուն կը յանձնարարէ։*

5. Հնարիչի մը նամակ. — *Հնարիչ մը՝ որ գիւտ մը ըրած է, կ'ուզէ վաճառել զայն վաճառականի մը. ուստի նամակով կ'առաջարկէ զայդ՝ իր գիւտին առաւելութիւնները ցուցնելով։*

6. Տեղեկութիւն խնդրել. — *Սեղանաւոր մը՝ որ արհեստաւորի մը փոխատուութիւն պիտի ընէ, իր մէկ բաբեկամին կը դիմէ գրաւոր կերպով ու կ'ուզէ տեղեկութիւն ստանալ՝ փոխ դրամ խնդրող արհեստաւորին նիւթական վիճակին վրայ։*

7. Վաճառականական. — *Վաճառական մը՝ որ հրապարակի վրայ երկար ժամանակ պատուաւոր կերպով գործ տեսած է, մեռած ըլլալով, ուրիշ մը անոր կը յաջորդէ եւ նոյն վաճառատան բոլոր թղթակիցներուն կ'իմացնէ թէ ինք յարաբերութիւններ պիտի ունենայ իրենց հետ։*

9. Որդի մը իր հօրը. — *Թադէոս, զոր իր հայրը գիշերօթիկ վարժարան մը դրած է կարելի եղածին չափ կատարեալ կրթութիւն մը առնելու համար, կ'իմանայ թէ նիւթական մեծ կորուստներ ունեցած են իր ծնողքը եւ անձկութեան մատնուած. իսկոյն կը գրէ անոնց եւ կը խնդրէ հրաժարիլ դպրոցէն վաճառատուն մը մտնելու համար։ Ասով կը յուսայ շուտով դրամ շահիլ, եւ ընտանիքին անձկութեան դարման տանիլ։*

10. Պատասխան վերիցին։ — *Թադէոսի հայրը կը պատասխանէ թէ ընտանիքը արտասուելու չափ յուզուած է անոր առաջարկը լսելով։ Խնայութիւններ պիտի ըլլան, որպէս զի Թադէոս իր ուսումը աւարտէ։ Հայրը կը յուսայ թէ որդին պիտի ջանայ օգտուիլ իր ընդունած դասերէն։*

ԳԼՈՒԽ Դ.

ԱՂԵՐՍԱԳՐԵՐ

Դիտողութիւն. — *Ինչպէս որ խնդրանաց տեսակին մէջ բազում նուրբ զանազանութիւններ եւ խտրութիւններ կան, նմանապէս հարկ է ուշադիր ըլլալ նամակագրական աստիճանաւորեալ կամ զանազանեալ պատշաճութեանց, ձեր բաղձանաց բնութեան, եւ պատուոյն համեմատ եւ յարաբերութեանց ու կապակցութեանց աստիճանին համեմատ, որք կան ձեր եւ այն անձանց մէջ, որուն կը դիմէք:*

Եթէ օրինակի աղագաւ աստիճանաւոր անձ մը ըլլայ, որմէ շնորհ մը կը խնդրէք, ձեր ոճը պէտք է ոչ միայն պատկառոտ ըլլայ, այլ նաեւ ճարտար ողոքանօք խառնուած։ Այսպիսի դէպքի մէջ խունկին անուշութիւնը գործը չպիտի աւրէ։ Եւ սակայն անարգ շողոքորթ մը մի՛ ըլլաք. արհամարհանք եւ նուաստացուցիչ մերժում մը կրնան յառաջ գալ ձեր գծուծ ապիկարութեան պատճառաւ։ Թող ձեր գովեստը պատճառաբանեալ եւ ճարտարութեամբ քօղարկեալ ըլլայ. հպարտութիւնը ձեզ պիտի նպաստէ եւ գաղտնապէս պիտի ախորժի ձեր գովեստներէն։ Ձեր խնդրանաց առարկայն ընդհուպ պիտի շնորհուի, եւ երբեմն գգուեալ սնապարծութիւնն է մանաւանդ որ զձեզ պիտի գոհացնէ քան թէ բարեսրտութիւնը.

Բայց եթէ բարեկամէ մը բան մը խնդրելու պարագային մէջ ըլլաք, գործը բոլորովին տարբեր կ'ըլլայ։ Անկեղծութիւն, հաւասարութեան կատարեալ ոճ եւ ոգի մը պէտք է. նա զձեզ կրնայ արհամարհել, եթէ ձեր նամակին մէջ զինքը ձենէ վեր բարձրացնէք։ Կան նաեւ խնդիրներ, որք իրենց բնութեամբ պարզ քաղաքավարութիւն միայն կը պահանջեն. կան նաեւ ուրիշ կացութիւններ, յորս մտացի զուարթութիւն մը երբեմն լիուլի յաջողութիւն յառաջ պիտի բերէ։ Աղաչանք ընդունող մարդը կը ժպտի եւ ոճոյ յիմարութեանց կը շնորհէ ինչ որ գուցէ զլանար բուն խնդրոյն։

BnF

1. Քահանայի ձեռնադրութիւն խնդրելու գրագիր։

Սմբատապատիւ Ս. Հայր

Նախագահ Կրօն. Ժողովոյ Ազգ. Կեդր. Վարչ.

Սուրբ Հայրապետ, ամենախոնարհ որդիք Ձեր ... գիւղի, համարձակութիւն կ'առնենք հրաւիրել Ձեր բարձր ուշադրութիւնն հետեւեալ տողերու մասին։

Թերեւս ծանօթ է Ձեր Սրբազնութեան թէ մեր գիւղի քահանան, այր սրբակրօն և երկիւղած, Հայրն Թադիկ հերու վախճանեցաւ խոր ծերութեան մէջ։ Անկէ ի վեր գիւղացիքս զուրկ ենք կրօնական պաշտամունքէ, վասն զի եկեղեցին փակուած է։ Շատ երախայք յաճախ կը մնան անկնունք, հարսանեկան հանդէսներ զարդած, նոյն խակ մեռելոց դերեզմաններ եւ բիւրու օրհնութեանց չեն արժանացած։ Ի՛նչ աղիողորմ վիճակ է պառաւ կիներու՝ որոնք անհաղորդ կը մնան, և զղջման արցունք կը թափեն փակեալ եկեղեցւոյն դրան առջև, և կը վախնան զի իրենց դերեզման ևս չօրհնուի։

Իրաց այս վիճակին յաջող ելք մը տալու համար խորհեցանք գիւղիս ուսուցիչը քահանայութեան կոչել տալ, և այս պատճառաւ յղել զինքը Պոլիս, որպէս զի ներկայանալով Պատ. Կրօնական Ժողովոյ առջևին՝ պարտուպատշաճ քննութեամբ յայտնէ իր ձեռնհասութիւնն այդ սրբազան պաշտօնին։ Կրօնական գիտելիքներու, մայրենի լեզուի մասին ունի հմտութիւն քան բաւականին, որպէս եւ յերեւան պիտի գայ իր

կարողութեան սրբազանութիւն Աստուծոյ առջև։ Իսկ վարդապետի մասին կրնանք վկայել թէ միշտ նիրհող եղած է քարոյականի, զիտէ սիրաչահիլ, և ոչ անտասող է վերին իշխանութենէն։ Իր խոնարհ և հեզ քնաւորութեամբ երբեք ոեղի ուսած չէ դժգոհութեան, այլ ընդհակառակն անոր ունկնդիր կրնած է ամէն զրկանք, և իր բարուք դաստիարակութեամբ օգտակար եղած է մեր որդիներուն։ Իր կեանքն եղած է պարոյէն եկեղեցի և եկեղեցիէն դպրոց յաճախել, և ոչ երբեք զանուած է անհաճոյ վարմանց մէջ։ Այսչափ ինչ ոեղեկութիւն հաղորդելով յիշեալ քահանայապետի մասին կը սիրենք յուսալ թէ ասոյն ոեղեկութիւններ Կրօն. ժողովոյ քննութեան հետ պիտի ծառայեն արագ ոնորհնելու հարկ եղածն, և փակեալ եկեղեցին բանալով մեր պատպեռական հաւատքը պաշտպանելու մեզ աւելի եռանդով։

Կ'աղաչենք, Սրբազան Հայր, Կրօնական Պատկառելի ժողովոյ բազմադիմի խնդրոց կարգին մէջ բարեհաճեցէք առաջնութիւն շնորհել գիւղացւոց խնդրոյն և յիշեալ ուսուցիչն քահանայական կոչումով պատկէք մեր գիւղի եկեղեցւոյն վրայ։

(4) անձանց ստորագրութիւններ)

[Թուական]

---

2. Մեծատունի մը այցի մը գնել առաջարկել։

Ազնուաշուք Տէ՛ր,

Ձեր մեծութիւնը շատ լաւ կ'ըմբռնէ կարեւորութիւնն այնպիսի խնդիրներու՝ որոնք իրեն առիթ կ'ընծայեն նորանոր ապացոյցներ տալ իր բարեգործու-

թեան, իր աղնիւ սրտին՝ որ խորապէս կ'զգայ քախտէն հալածուած անձի մը տխուր կացութիւնն։

Այդ վիճակ կը դառնայ հետզհետէ անհանդուրժելի, առոր զոհուելոյն ցարդ ամէն նիւթական միջոցներս, զի չէի կրնար տեսնել ընտանեացս մորմոքը կարօտութեան պատճառաւ. սրտիս վէրքը կ'արիւնէր, բայց ես պա՛տ էի զուարթ երեւնալ, կռուիլ անողոք ճակատագրին դէմ. բո՛ւռն և կատաղի պայքար, որ կորովս յաճախ կը ջլատէր և կ'ընկճէր զիս։

Բայց բարի է Աստուած, չեն ոչնչացած ամէն յոյսեր. կենացս այս ալեկոծութենէն ազատելու համար դեռ կը մնայ ինձ միջոց մը, վասն զի ունիմ այգի մը՝ զոր վաճառելով կրնամ ընտանեացս ժամանակ մը եւ օրապահիկն հայթայթել։

Այգին, զոր հօրմէս ժառանգած եմ, Գարթալի մէջ նշանաւոր է իր հազարաւոր որթերով. որթալուիճն հոն չէ ըրած մինչեւ հիմա իր աւերիչ արշաւանքն. ունի իր մէջ քարաշէն տնակ մը, որուն խոհանոցին մէջ կայ անուշ ջրոյ աղբիւրակ մը։ Հայրս ինձ ըսած է թէ մեր այգիին հողը շատ յարմար է բուսաբերութեան, և ինչպէս փորձն ցոյց ալ է, արդիւնաւէտ եղած է այն ուրիշ մերձակայ այգիներէն աւելի։ Նա երբեք անխնամ չէ մնացած, այլ ընդհակառակն վայելած է ամէն արթուն խնամքներ։

Այդ, Ազն. Տէ՛ր, կ'ապաչեմ որ Ձեր բնաձիր մարդասիրութեամբ գնէք զայն՝ որուն դումարը դրամազլուխ ընելով պիտի ձեռնարկեմ իմ անհատական գործիս։ Թէև ժամանակաւ մինչեւ 1000 թրք. ոսկի գին առաջարկեցին, սակայն այժմ այս դումարն վրայ կարեւոր վերջ մ,ընելով՝ կարելի է գնել զայն։

Ձեր Ազնուութեան արժանի կը տեսնեմ զայն. այլ եւս պէտք չունիմ ես անոր. բաւական զուարթացուց զմեզ անոր գինին մեր ուրախութեան ժամերուն. արդ արժան է որ զՁեզ ուրախացնէ ընդմիշտ խրախճանքներով, ինչպէս որ անոր արժեգինն եւս զիս շատ պիտի երջանկացնէ։

Կը հաւատամ թէ Դուք գնելով զայն՝ միեւնոյն ժամանակ ազնուօրէն և մարդասիրական ոգւով ձեռնպիտի կարկառէք յարուցանելու զիս այն տարտամ և անորոշ վիճակէն՝ որ կը տանջէ զիս և որ պիտի ըստիպէ զիս միշտ նոր նոր պարտքեր ընել աջ ու ձախ։

Ժամէ ժամ սպասելով նամակիս քանաւոր պատասխանին։

Եմ հուսատ ծառայ Ձեր

[Թուական] * * *

---

3. Վաճառուի մը գրել որպէս զի մնացորդ պարտքին այլ եւս տոկոս չառնէ։

Մեծապատիւ Տէ՛ր,

Քաջ գիտէ Ձեր Մեծապատուութիւնը թէ այսչափ տարիներէ ի վեր անընդհատաբար վճարած եմ Ձեզ պարտքերս իրենց տոկոսներով մէկտեղ։ Ճշդապահութիւնն եղած է Ձեզ հետ ունեցած յարաբերութիւններուս միակ արժանիքը, և այսքան տարիներէ ի վեր պանդխտութեանս գլխաւոր մտածումն եղած է դրամ վճարել, որպէս զի ընտանիքս հանգիստ ապրի, ծերունի հայրս չունենայ դժգոհութեան առիթ իր կեանքին

այս վերջին շրջանակին մէջ, այլ միշտ օրհնէ զիս և նորակազմ ընտանիքս։

Եւ ինչպէս որ ես կրցած իս չափ գոհ ըլլած եմ Ձեզ, Դուք եւս Ձեր ընդաբոյս քաղցրութեամբ և հաւատարիմ ընթացքով ուրախացուցած էք զիս։ Երբեք չէք եղած այն անիրաւ վաշխառուներէն՝ որոնք այլոց տուները քանդելու կը հեռամտին, որքին և աղքատին արիւնը կը քամեն, և անիծից նշաւակ կեանք կ'անցուցեն։

Տէ՛ր, նպատակ չունիմ Ձեր անձնական արժանեաց ներբողներ հիւսել, այլ միայն արդարութեան պարտք մ'է այս զոր կ'ուզեմ ներկայիս հատուցանել Ձեզ։ Պանդուխտին ալ մխիթարութիւնն այն է, երբ գիտնայ թէ իր դրամն յափշտակութեան չպիտի մատնուի։

Արդ, Մեծ. Տէ՛ր, վստահ Ձեր ծանուցեալ մարդասիրութեան վրայ՝ կը յայտնեմ թէ իմ մէկ քանի ամսէ ի վեր անդործ մնալով բոլոր հասոյթներս ցամքեցան, առօրեայ պիտոյից համար իսկ կարօտ մնացի, և ահա գոհ նոր յաջողեցայ նախկին գործս շարունակել։ Սակէ յայտնի է թէ չպիտի կրնամ ըստ առաջնոյն շարունակել վճարումներս, ուստի կը խնդրեմ որ մնացորդ պարտքիս համար որոշեալ տոկոսէն կարեւոր գեղչ մը ընել բարեհաճիք, որպէս զի միանգամ ընդ միշտ կարգադրուի պարտքս, և ես հանգիստ սրտով պարապիմ գործերուս, որովհետև ինձ համար պարտքի մտածումն ամենէն ծանր է և խռովիչ։

Կը յուսամ թէ այս մասին անմիջական կարգադրութիւն մ'ընել կը յաժարիք Դուք՝ որ պանդխտի ցա-

ներբ կը նախազգաք, և անոր ցաւած սրտին կը նայի՛ք կարեկից. աչքերով։

Ակնդէտ նամակիս պատասխանին՝ Եմ.

Խոնարհ ծառայ(*)

[Թուա կան]

* * *

5. Կին մը իր ամուսնոյն օտար երկրի մէջ պսակուած ըլլալը լսելով կ'աղաչէ Ս. Պատրիարք Հօր՝ որ պէտք եղած պատիժը տայ։

Սմենապատիւ Սրբազան Հա՛յր,

Ո՞վ է նա՝ որուն կարենամ դիմել այս տառապագին կացութեանս մէջ, ո՞վ է այն՝ որ գիտնայ կնոջ մը վիճակն, որ տխուր է, ապերջանիկ՝ իր որդիներով։

Ձեր Բարձր Սրբազնութեան կը դիմեմ, ո՛ աղգախնամ Հայր, յուսալից թէ հաճութեամբ ունկն պիտի դնէք իմ աղերսին և քանաւոր տնօրինութեամբ ուրախացնէք զիս։

Տորպրեալս Ձեր նուաստ աղախինն ասկէ իբր եօթը տարիներ առաջ ամուսնացայ Պ. Վրդանէս Սրամշեանի հետ, արհեստով կօշկակար, որուն հետ մի քանի տարիներ կենակցելով՝ Աստուծով ունեցայ երեք որդիներ. ամուսինս դժգոհ կ'երեւէր իր արհեստէն, և իր հասոյթներուն անբաւականութիւնը առարկելով կ'ուզէր աղատիլ այս վիճակէն. ես իմովսանն կը քաջալերէի և ի հարկին աշխատութեամբս կը դիւրացնէ-

(*) Հպարտութեան նշան է փոխանակ **խոնարհ ծառայ** ամբողջապէս գրելու միայն Խ. Ծ. գրել։

նէի իր գործն, որ էր ընտանեաց ապրուստն։ Բայց ան չէր ուզեր տանիլ այս վիճակը, և կը փափաքէր հեռու աշխարհ երթալ իր ընտանեաց բարեկեցութիւնը ապահովելու պատրուակով։ Ի սկզբան հաւատացի իր խօսքերուն անկեղծութեան, եւ թողուցի որ իր նպատակը ի գործ դնէ. բայց մեծ եղաւ զարմանքս, երբ տեսայ թէ ոչ իմ նամակներուս կը պատասխանէ, և ոչ ընտանեաց կարօտութեան վրայ կը կարեկցի։ Ընդերկար աղերսեցի, առանձինն և անօգնական մնալով արտասուելով անցուցի ժամանակս սիրուն փոքրիկներովս՝ որոնց ամէն հոգ կը ծանրանար վրաս։ Հեռացաւ դնաց, ոչ մէկ միջոցաւ կարելի եղաւ դարձունել զանի իրենցներուն քով։ Աստուած իմ, ամուսնանալ, ուխտել ի միասին կրել կեանքի ամէն պատահարներ, և մի օր բաժնուիլ չարաչար դրժելով այն ուխտին՝ որ աստուածային է, վատագոյն չէ՞ այդ անձ. դասալիքի ամօթն ու նախատինք չունի՞ նա իրաւամբ իրեն բաժին։

Սրբազան Հայր, խոստեցաներ և դրուժաներ օրէնքի խստութեան ենթարկել Ձեր վսեմ դործն է. մանաւանդ այնպիսի մէկ խաբեբայ՝ որ իր կնոջմէ և որդիներէ բաժնուելով օտար երկրի մէջ ամուսնական նոր տուն կը կազմէ, անձը ամուրի հաւատացնելով և խաբելով տեղական իշխանութիւններն։

Եթէ յաւիտենական է ամուսնական կապն, ուրեմն ի՞նչ յանդգնութեամբ կը համարձակի խզել զայն, և հոս թշուառութեան մատնել իր օրինաւոր ընտանիքն։

Անհնարին է ինձ նկարագրել թէ ի՞նչ արտասուէ աղաղակներով կը գոչեն որդիքս. «Հա՜յր, հա՜յր»։ Արտասուելով կ՚ըսեմ անոնց. «Զաւակնե՛ր, ձեր հայ-

ը մեռած է. այսուհետև, ինչպէս յառաջ, ձեր հայրն երկինքն է. անոր պաղատեցէք»։

Նախատալի՛ց մահ։

Կ'աղաչեմ, Սրբազան Հա՛յր, Դուք պաշտպան իր յոյսերուն և փափաքներուն մէջ խաբուած կնոջս, Դուք խնամակալ անմեղ որբերու, Ձեր հզօր ազդեցութիւնն ի գործ դնելով հաճեցէք պատժել այս անընդդամ խաբեբան, ստիպելով եկամուտ մը կապել իր զրկեալ ընտանիքին, և խանգարելով այն տուն՝ որ անիրաւութեան վրայ կը հաստատուի։

Ասոնք են աղերսանք թշուառ կնոջ մը և անմեղ որբերու։

Եմ Ձերդ.
Բարձր Սրբազնութեան
Նուաստ աղախին

[Թուական]

*
* *

ԸՆԴԼԱՑՆԵԼԻ ՆԻՒԹԵՐ

1. Նպաստ խնդրել.— Մէկն՝ որ երբեմն մեծատան մը քոսպասաւոր եղած է, յետոյ առեւտրական ասպարէզի մէջ մտնելով մեծ ջնաններ կրած է, արդ կը գրէ նամակ նոյն մեծատան՝ որպէս զի իրեն ծառայութիւն ընէ։

2. Հօր մը նամակն գործատիրոջ մը. — Այս հայրն որդի մը ունի, որ դեռ նոր շրջանաւարտ եղած է. այժմ սոյն աղերսագրով կը խնդրէ գործարանատէրէ մը՝ որ ընդունի իր որդին գործերուն մէջ։

3. Երիտասարդի մը նամակն.— Երկաթուղիի վարչութեան մէջ մտնելու համար ազդեցիկ անձի մը միջնորդութիւնը կը խնդրէ անգործ երիտասարդ մը։

4. Ներում հայցել. — Կրթական պաշտօնեայ մը թերութիւն գործած է, եւ ասոր համար պաշտօնանկ եղած է։ Արդ զղջալով իր յանցանքին՝ կը խնդրէ որ վերհաստատուի իր նախկին պաշտօնին մէջ։

ԳԼՈՒԽ Զ.

ՎԿԱՅԱԳԻՐԵՐ

Վկայագիր ուսման։

Պ. Սողոմոն Շմաւոնեան իւր աշակերտութեան հնգամեայ շրջանին մէջ՝ (1883—1893) իր բարի վարքով և ջանասիրութեամբ գոհացուցած է մեզ։ Ո՛չ միայն իր պարտականութեանց մէջ թերացած է, այլ իր համբոյր բնաւորութեամբ և ուսմանց յառաջդիմութեամբ առաջին մրցանակներ շահած է։ Գիտէ ըստ բաւականին լեզուներ Հայերէն, Թուրքերէն, Յունարէն, գիտութեանց նախատարերքն, թուաբանութիւն, գիր և գծագրութիւն։

Կը յանձնենք յիշեալին՝ այս վկայագիր՝ լաւ ապայայ մաղթելով իրեն։

[Թուական] *Տեսուչ.*

Վկայագիր ուսուցչի։

Պարոն Գրիգոր Մելիքսէթեան իւր երեք տարիներ (1890—93) աշակերտելով ինձ Պէյքօզի թաղային վարժարանին մէջ, մայրենի լեզուին մէջ զարգացաւ ըստ բաւականին, մինչև քաջ խելամուտ լինել ընտիր ընտիր գրուածոց իմաստին և շարադրել յաջողապէս զանազան նիւթոց վրայ,

Իր աշակերտութեան ամբողջ ընթացքին մէջ փայ-

լեցաւ համեստ վարքով եւ ջանասիրութեամբ։ Իր աշխատասէր ոգին իր բարի վարուց օրինակին հետ պիտի ըլլայ ինձ համար յաւէտ քաղցր յիշատակ։

Կը հաւատամ թէ կենաց որ և է վիճակի մէջ եւս պիտի պահէ իր ձիրքերն և պիտի հանդիսանայ կարեւոր ոգի ամենուն և ընտանեաց։ Այս ջերմ փափաքով կը յանձնեմ Պ. Գ. Մելիքսոսեանի՝ սոյն վկայագիր։

[Թուական] Ռուսցիչ

Վկայագիր ծնողեան։

Դանիէլ Յովհաննէսեան, որդի ժամագործ Յովհաննէս աղայի և Խնկուհի տիկնոջ ծնած է 1869 Փետրուարին և մկրտուած է նոյն ամսոյ 14ին, Ռուսէլի Հիսարի Ս. Սանդուխտ եկեղեցւոյն մէջ կնքահայրութեամբ ճկնորս Սարգիս ոգայի։ Մկրտիչ քահանայն է Տ. Թադէոս քահանայ նոյն եկեղեցւոյ։

Առագերեց Բարս. Թաղ. Խորհրդոյ

* * * * *

Վկայագիր պաշտօնեի։

Պարոն Ստեփան Կոստանեան, ուսուցիչ Մաթեմատիքայի, իբր երեք տարի վարժարանիս մէջ պաշտօնավարութեամբ գոհ ըրած է մեզ։ Յաւէ մեզ, որ կը զրկուինք այսպիսի յաջող պաշտօնէի մը գործակցութենէն, նիւթական անճարութեան պատճառաւ։ Իբրև հայր կամ իբր երէց եղբայր կը վարուէր աշակերտներուն հետ։

Հմտալից դասախօսութեանցն յաճախ ներկայ ըլլալով, տեսած եմ թէ իր պաշտօնին խորին գիտակցութիւնն ունի և երբեք ժամավաճառ չըլլար անոտի շաղփաղփութեամբ։

Տեսչութիւնս կը յուսայ թէ Պ. Ստեփան սուղ ժամանակէն պիտի կոչուի դարձեալ ի պաշտօն մեր վարժարանին մէջ և ըստ առաջնոյն շարունակէ իր օգտակար դասախօսութիւններն։

[Թուական] Տեսուչ

Վկայագիր ծառայութեան։

Պ. Կարապետ Ոսկանեան 5 տարիներ ծառայելով վաճառատան մէջ իբրև գործակատար, գոհ ըրած է զիս իր վարժ և գործունեայ ընթացքով. հաշուոյ և դրամական խնդիրներու մէջ հաւատարիմ և անխարդախ վարմունքով արատ չէ բերած երբեք իր հընգամեայ ծառայութեան։ Այժմ փոքրիկ դրամագլուխ մը գոյացուցած է և կ'ուզէ ինքնագլուխ գործել։ Ուրախութեամբ կը հաւանիմ անոր և կ'ուզեմ տեղեկացնել առեւտրական հրապարակին թէ իմ, իր նախկին տիրոջ համարման և մեծարանաց արժանացած է ըստ ամենայնի, և կարող է հետզհետէ հասնիլ այն բարձրութեան՝ որուն արժանի են ամէն գործունեայ անձինք։

Պ. Կ. Ոսկանեանի ամէն յաջողութիւն մաղթելով՝ ան.որ յառաջդիմութեան ևս վստահ եմ։

Թուական]

* * *

ԳԼՈՒԽ Է.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՁՈՐՍ ՆԱՄԱԿՆԵՐ

Նամակ Ա.

Սիրելի՛դ իմ Գեղանույշ,

Կը փափաքիմ տեսնել զքեզ քու տանդ մէջ հաստատուած և երջանիկ. որպէս մ'էիր, զքեզ խնամեցի. լոյս սփռեցի այն սրտին մէջ, ուր սեւ գիշեր կը տիրէր։ Բայց կ'զգամ որ իմ խանդարեալ առողջութիւնս տակաւ կը խլէ ինէ այն յոյսն թէ օր մը քու երջանկութիւնդ տեսնեմ։ Ուստի չեմ ուզեր զրկել զքեզ այն տեղեկութիւններէն, զորս փորձառութեամբ ստացած եմ, և կը կարծեմ թէ քեզ օգտակար կ'ըլլան անոնք, քեզ՝ որ չունիս ո՛չ հայր, եւ ո՛չ մայր։ Զանազի անոնց վիշտը չզգացնել քեզ, սիրո՛ւն որբուհիս, եւ ուրախ թեամբ տեսայ թէ պարկեշտ, հրապուրիչ աղջիկ մը կ'ըլլաս։ Շնորհակալ եմ, որ իմ խնամքիս կը համապատասխանես. պարտք էր, զոր կատարեցի եւ պարտ էի զայն կիսկատար չթողուլ։ Խօսինք այժմ ի միտին ապագայիդ նկատմամբ։

Գիտեմ թէ օր մը ամուսնանալու օրինաւոր փափաքն ունիս, որպէս զի ունենաս պաշտպան մը, հաստատիմ բարեկամ մը, եւ կազմես ընտանիք մը։ Կը

հաւանիմ այդ խորհուրդին, եւ չեմ տարակուսիր թէ քու ազնիւ ձիրքերովդ պիտի կարողանաս լաւ ամուսին մը ունենալ։

Լաւ ընտրէ՛ ամուսին, սիրելի՛ աղջիկս, որովհետեւ այն է բոլոր կեանքիդ ընկեր։ Մի՛ խաբուիր ոչ արտաքին երեւոյթէ, ո՛չ հարստութեան ակնկալութիւններէ, եւ ո՛չ այնպիսի կացութեան մը՝ որ քու կինէդ վեր ըլլայ։ Սառն ք երջանկութեան երաշխիք չեն։

Քու ամուսինդ պէտք է ըլլայ երիտասարդ մը աղնուական, առողջ, բարեմտոյն, մտացի եւ իր արհեստին մէջ կարող։ Եթէ առանց վրայ աւելցնէ բարեւոք նկարագրի մը, սիրուն դէմքի մը առաւելութիւնները դուն պիտի դտնես դրեթէ կատարեալ ամուսին մը։ Որովհետեւ այդ կատարելութիւնը չիկայ աշխարհի մէջ, պէտք չէ մտքէ անցունել թէ պիտի դտնես ամուսնոյդ անձին վրայ վիպական դիւցազ մը։ Դուն թերութիւններդ ունիս, անշուշտ նա ալ իրենները պիտի ունենայ։ Ուստի Ձեր բախտը ուրիշի բախտին միացընելէ առաջ ջանացէք ի նկատ առնուլ թէ իրարու համար ստեղծուա՞ծ էք։

Սուտգիւ դժուար է այս, որովհետեւ նշանուելու պահուն երկու կողմն ալ իր փոքր թերութիւնները կը ծածկէ. բայց կան թերութիւններ, որք երկու կողմէն անտես թող չըլլան։ Դուն փոփիկութեամբ ուծցած ես, եթէ վայրենամիտ և կոշտ ամուսին մը ունենաս, պիտի տառապիս, դուն անկեղծ ուղղամիտ ես, եթէ ունենաս ետամէր և ագահ ամուսին մը, թշուառ պիտի ըլլաս։ Դուն երկիւղած ես բայց ոչ սնապաշտ, եթէ ամուսինդ քու կրօնասիրութեանդ հակառակի, քեզ բռնաւոր մը պիտի երեւի։ — Այսպէս լաւ քննէ՛ ընտրութիւնն, որչափ կրնաս, քու անձիդ և խոհական ու իմաստուն մարդոց միջոցաւ. զգուշացի՛ր շտապոտ

անձերէ, և ա՛յն առեն որոշում տուր, երբ սիրտդ միտքդ և բանականութիւնդ զոհ զգաս։

Երբ ամուսնանաս, ալ զղջումն անօգուտ է, պէտք է առնուլ ամուսինն այնպէս, ինչպէս որ է, եթէ կարելի է լաւացնել զայն գորովանօք, հաճոյակատարութեամբ և բոլորովին անձնուիրութեամբ. եթէ չյաջողիս, պատք է խախտիդ հպատակիս եւ մինչև վերջը կատարես քու պարտքդ ամէն պարագայի մէջ եւս։— Ես չպիտի խօսիմ քեզ հաւատարմութեան պարտուց վրայ. քեզ նման անբիծ և պարկեշտ աղջիկ մը հաւատարիմ կին մը պիտի հանդիսանայ, և չեմ վախնար թէ դու կ'ըլլաս զահավէժ այդ մոլութեանց մէջ՝ որոնցմէ ընտանիքներ կը կործանին. միմիայն միշտ զգուշացի՛ր այն բաներէ, որոնցմով ամուսնոյդ նախանձը կը շարժի։ Կան ամուսիններ՝ որք շատ կասկածոտ են այս մասին։ Բարի և խելացի կին մը կը յարգէ այս փոքր տկարութիւնն և նախազգուշութիւններ ձեռք կ'առնու տեղի չտալու մանաւանդ ամուսնութեան առաջին տարիներուն մէջ։ Այդ մասին ամուսինդ երախտապարտ կ'ըլլայ, և այդ բանը կ'ըլլայ ընտանիքի խաղաղութիւնը պահպանելու լաւագոյն միջոցներէն մին։ Իսկ դուն ալ ծաղրելի նախանձու տեսարաններ մի՛ պարզեր։ Եթէ անոնք անիրաւ են, կը կորսնցնես քու ամուսնոյդ սէրը և զանի կը չարացնես. եթէ անոնք արդար են, բանի մը զարման չեն ըլլար. ընդհակառակն. երկինք պարգեւած է քեզ թանկագին պարգև մը, այն է քաղցր բնաւորութիւն։ Պահէ՛ զայն մեծ խնամով, սիրելի՛ դուստր իմ, մի՛ զայրագնիր, մի՛ վշտանար ընտանիքի մօր կեանքի մեծ և փոքր թշուառութիւններով։ Այրուութեամբ ժուժկալէ հիւանդութեանց։ Միշտ ամուսինդ ընդունէ՛ այն

քաղցր ժպիտով՝ որ զքեզ սիրելի կ'ընէ այնքան։ Մի՛ ձանձրացներ զայն կենաց նեղութիւններուն վրայ տրտնջալով։ Անոր համար բաւ են իր աշխատութիւններն և իր յոգնութիւններ։ Եղի՛ր, որչափ կարելի է, անոր առջև վայելուչ, խնամոտ և ակնահաճոյ։ Զըլլայ որ կրես աղտոտ շրջազգեստ, ունենաս պէշ սանտրուած մազեր, կրունկը ծռած կօշիկներ անյարմար բաճկոնակներ։

Ամուսին մը, կ'ըսէր մեծ մայրս, պէտք է միշտ կարենայ բաղդատել իր կինը ճանչցած ուրիշ կիներուն հետ առանց անոնց վրայ առաւելութիւն գտնելու։ Թող քու տունդ և դուն և յետոյ քու զաւակներդ ըլլան միշտ ամուսնոյդ համար ամենէն աւելի սիրելի արարածներ, որոնց յիշատակն իրեն հետ ունենայ իր աշխատութիւնը քաղցրացնելու համար և անոնք երջանկութիւն պատճառեն իրեն, երբ երեկոյին տուն դառնայ։ Զանա՛ գրաւել իր վստահութիւնը յարատեւ քաղցրութեամբ և հնազանդութեամբ, և մանաւանդ միշտ ողջամիտ և յաճախ լուրջ երեւցիր։ Երբ տեսնէ թէ քեզի ապահով բարեկամ մը չկրնար ունենալ, կամաց կամաց պիտի վարժուի քեզ խորհրդակցիլ թէ ո՞ր միջոց ձեռք առնուլ լաւագոյն է։

Սակէ օգուտ պիտի քաղես զանի հանդարտեցնելու համար՝ եթէ բարկացած ըլլայ, խթան մը ըլլալու՝ եթէ անփոյթ է, հաշտեցնելու՝ եթէ խռոված է իր ազգականաց և բարեկամաց հետ։ Վերջապէս բարոյ համար գործածէ՛ այն ազդեցութիւնն, զոր քու արժանիքովդ պիտի շահիս։

Դուն քու օրական զբաղումներէդ դուրս բան մը մի՛ ըներ առանց անոր հաւանութիւնն առնելու, և նոյնիսկ անոր հետ ի միասին կարգադրէ՛ տան ներքին

գործերը, կարասիներու կամ հագուստներու գնումներ։ Այս փոքր բաներն ամուսինն իր կնոջ և տան հետ կը կապեն։

Երբեք մի՛ խոսվիր անոր հետ, նոյն իսկ իրաւացի պատճառներով։ Եթէ դուն բաւական ապահով ես իրաւունք ունենալուդ վրայ, յայտնէ ամենայն պաղարեւամբ, ինչ որ պիտի ըսես, և թող որ ամուսինդ հանդարտի պնդելէն առաջ։ Եռանդուն ես, և գիտեմ թէ այդ բանն քեզ դժուար պիտի ըլլայ. բայց տնական խաղաղութեան պահպանման համար, ոչ թէ այս փոքր զոհողութիւնն, այլ աւելի մեծերն ընել կ՚արժէ։ Հա՞րկ է միթէ ըսել քեզ թէ պէտք է որ համբերութեամբ և գորովանօք խնամես զանի իր հիւանդութեանց առեն, սփոփես զանի և օգնես անոր իր վիշտերուն մէջ։ Վերջապէս անոր հետ ի միասին ուրախանաս և տրտմիս։

Մանաւանդ անոր նկատմամբ ծածկամիտ և տարտիսոս մի՛ ըլլար։ Այս անմտութիւններ կը վերցնեն վստահութիւն և բարեկամութիւն՝ որոնք պարտին տիրել ամուսնոյ և կնոջ մէջ։ Լաւ է որ խոստովանիս անկեղծօրէն, եթէ մեծ կամ փոքր անյաջողութիւն մը գործած ես, հոգ չէ որ ծանր խօսքեր լսես, քան թէ այնպէս երեւնաս, որ ամուսնոյդ վստահութիւնը չարաչարկը գործածես։ Մի՛ տրտնջար անոր նկատմամբ բարեկամուհիներուդ և դրացուհիներուդ հետ, նոյն իսկ եթէ իրաւացի ըլլան տրտունջներդ։ Այն կիներն՝ որ ամէն մարդու կը պատմեն իրենց ներքին խոսվութիւններն, կը թերանան սիրոյ, արժանաւորութեան, և մեծարանաց մէջ, զորս պարտին իրենց ամուսիններուն։

Եթէ ամուսինդ ազգականներ ունի, ջանա՛ անոնց սիրոյն արժանանալ։ Անոր ծնողաց նկատմամբ ակնա-

ծութիւն և յարգանք ցոյուր, բարեկամութիւն և եղբայրական սէր անոր եղբայրներուն և քոյրերուն նկատմամբ։

Վերջապէս անձնասէր ըլլալ, հեռանդիլ, սիրել և մոռնալ անձը. ասոնք պէտք է ըլլան ամուսնացեալ կնոջ մը դերը անոր նկատմամբ, զոր աստուածային և մարդկային օրէնքներ իրեն տէր պարգեւած են։ Երբորդ նամակի մը մէջ պիտի խօսի՞ք քեզ որդւոյդ համար ունեցած պարտքերուդ մասին։

Լաւ խնամել իր փոքր տղան, սնուցանել կանի, մաքուր պահել. ահա բարի մօր մը եռանդեամբ կատարելու աշխատութիւնը։

Բ. Նամակ։

Տղայք կ'ըլլան յաճախ այնպէս, ինչպէս կը պատրաստեն զանոնք իրենց ծնողք։ Մտածէ՛ անգամ մը, սիրելի՛ զ իմ Գեղանոյշ, թէ ի՛նչ պատասխանատուութիւն ունին հայր և մայր։ Ոչ թէ միայն զաւակաց մարմինն է, զոր պէտք է զարգացնեն և չարչեն պանպանեն, այլ մանաւանդ անոնց հոգին, անոնց միտքն, անոնց բարոյականն ուշադրութեան պէտք է առնուն։

Հայր մը իր խղճով, և նոյն իսկ օրէնքով պարտական իր տղուն ապաստան, անուն և հանգուստ. ոչ նուազ պարտի կրթել և կազմաւորել հոգին և սիրտն այն փոքրիկ արարածին՝ որուն կեանք նուիրած է։

Մայրը նոյն պարտքերն ունի. անոնց վրայ կ'ան-

ելնան մայրութեան պարտքերն ալ։ Լաւ խնամել իր փոքրիկ տղան, սնուցանել զանի, մաքուր պահել, հակել անոր վրայ, որպէս զի ան զերծ մնայ հիւանդութենէ, երբ բոլորովին մատաղ է. ասոնք են այն պարտքերը՝ զորս ամէն բարի մայրեր դիւրաւ կը կատարեն հակառակ իրենց կրած յոգնութիւններուն։ Բայց բոլորն այս չէ։ Հայրը դուրսն է շատ անգամ իր աշխատութեան, իր արհեստին պատճառաւ. չունի ժամանակ և ոչ համբերութիւն իր զաւակաց դաստիարակութիւնը ուղղելու։ Ուրեմն մօրը կը վերաբերի այս գործին մեծագոյն մասը։ Նա կարող է կանուխէն ատոր ձեռնարկել, վասնզի կարելի է տղայ մը վարժեցնել անոր առաջին տարիէն իր ծընողքը յարգելու և անոր հնազանդելու։

Խնամով հակէ՛ այն փոքրիկ իմացականութեանց վրայ՝ որ աշխարհք կը մտնեն և քեզ յանձնուած են։ Դուն պիտի սորվեցնես անոնց բարին չարէն զանազանել. դուն պիտի սորվեցնես սէր և Աստուծոյ երկիւղ, բարութիւն, հնազանդութիւն, կամաբարութիւն, վեհանձնութիւն. ստակամ պիտի ներշնչես ստութեան և ամէն խարդախութեան դէմ։ Եւ յետոյ դուն ես որ պիտի ճանչցնես և կատարել տաս անոնց առ Աստուած, առ ծնողս, առ նմանս, նոյն իսկ առ ինքեանս ունեցած պարտքերը։ Քու մեծ պարտքդ է չարին անոնց մօտենալն արգիլել կարելի եղածին չափ և ջանալ որ անոնք կարենան դիմադրել չարիքին. աւելի մեծնալով այլ եւս քու հակողութեանդ տակ չըլլան։ Ուրեմն աշխատէ՛ հեռի պահել զանոնք չար օրինակներէ, յոռի բարեկամներէ, գէշ խորհուրդներէ, վատթար ընթերցումներէ, անպիտան խօսքերէ, և որովհետև չես կրնար յուսալ թէ անոնք պիտի վարեն

կեանք առանց այդ բաներուն հանդիպելու, զարգացո՛ւր անոնց մէջ բարոյական քաջութիւնն, ուղղամտութեան և ընտանեկան պատուոյ զգացումը։ Շահէ անոնց վստահութիւնը ներողամիտ բարութեամբ, այլ մի՛ ժառնար թէ հօր և մօր պարտական հնազանդութիւն և յարգանք ընտանիքի խարիսխն են։ Բարութիւն և հաստատամտութիւն անհաշտ չեն բնաւ միմիմեկու հետ։ Այս երկուքին միացումը կարեւոր է տան կառավարութեան մէջ։ Կան ծնողքներ այնքան դաժան և խստահապահանջ, որ կը յուսահատեցնեն իրենց որդիքը. ասոնք եւս կը փախչին հայրենի տունէն, ստահակներ կ'ըլլան. Ն ինպէս չփայած, անխնամ տղայք, որոնք բոլորովին իրենց կիրքերուն և նանրասիրութեան թողուած են, ոչ ուրեմն կ'անպատուեն իրենց ընտանիքը, նոյն իսկ իրենց անձերը։

Եւ սակայն թերութեանց երեք չորրորդ մասը, որոնք հօր և մօր մեծ վիշտ են, անոնց սկսրատմութենէն առաջ կուգան։ Տղայ մը՝ որ լաւ սկզբնաւորութիւն կ'ունենայ և հակողութիւն կ'ըլլայ անոր, լաւ ճամբու մէջ դրուած կառախումբի կը նմանի։ Նա ուղղակի կ'երթայ, և կը հասնի իրեն տրուած մզման։ Անշուշտ պէտք է հաշուի առնել բնական թերութիւնները, բայց երբ մայր մը խելացի է, անվեհեր, ամէն բան իր որդւոյ բարութեան կ'ուզէ. կը մտրակէ դանդաղը, քիչ մը կը սանձէ աչխոյժը, զբաղում կուտայ գործօն բնաւորութեանց, մեղմ բնաւորութիւններն աչխատութեան կը դրդռէ, կը հեռամտի լաւագոյնը գտնելու, և երբ կը գտնէ, զայն կը գործադրէ։

Մառաղ հասակի մէջ կան թերութիւններ, որք զարգուն հասակին կերպով մը ինքնին կուզուին։

Անոնց կարգէն են անհանդարտութիւն, քարկութիւն, հեռաքրքրութիւն, որկրամոլութիւն, անհանդարտութիւն, որկրամոլութիւն, անհնազանդութիւն, դըժկամակութիւն։ Խաղամոլութիւն և արբեցութիւն պէտք է խստիւ արգիլուին։ Լաւ է չատ կանուխէն տղայոց սովորեցնել այս երկու աղեսալի կրքերու մասին։

Հաւոր թերութիւն մը, որուն ներել անհնար է, սուտիւնն է։ Ճշմարտութիւնը արքազան բան մ'է, պէտք չ'է նոյն իսկ դոյզն բանի համար զայն այլայլել։ Տղոցդ մէկ փոքր սուտխօսութեան անգամ մի՛ հանդուրժեր, նոյն իսկ եթէ իբր կատակ զրուցուած ըլլայ։ Անոնց արհամարհանք ներշնչէ՛ սուտեան համար, մի՛ թողուր որ իրարու նկատմամբ սուտխօս ըլլան։ Երբ այդպէս բան մը պատահի, յանդիմանէ՛ զանոնք, անոնց ըսելով թէ մեծ յանցանք մ'է։ Եթէ անոնք գործած են որ և է անյաջողութիւն մը, մեծ կամ սխալ մը, և դան քեզ անկեղծօրէն խոստովանիլ, մի՛ յանդիմաներ զանոնք։ Այս կերպով անկեղծութեան կը վարժուին անոնք։ Գաւաթ մը կոտրել կամ դանակ մը կորսնցնել մեծ վնաս մը չէ, մինչդեռ սուտն մեծագոյն չարիքն է։ Ընդհակառակն երբ կը տեսնես որ անոնք կը սուտնն, պատժէ՛ զանոնք անմիջապէս եւ խստութեամբ։

Նոյնպէս խիստ եղի՛ր այն փոքր գողցողներուն համար՝ որոնց կը վարժին երբեմն տղայք իրենց դրսի ընկերներուն հետ։ գրիչ, թուղթ, մատիտ, սեղ կը գողնան իրենց քոյրերէն, կամ խնձոր, կեռաս, խաղող կը գողնան իրենց դրացիներէն։ Յաճախ կ'ըսուի։ էհ, սոնք անտառակութիւններ են, մեծ բաներ չեն։ Կը սխալի՛ն։ Այս անտառակութիւնները կ'այլայլեն փափուկ զգացումներն, և գնտակներ գող-

ցող տղան օր մը եւս հօրմէն կամ պաշտպանէն ստակ կը գողնայ։ Խաղի մէջ խաբել, փոխ առնուած բաները չյանձնել. ասոնք անպարկեշտութիւններ են։ Եթէ կ'ուզես որ քու տղաքներդ խղճի մտօք պարկեշտ ըլլան, մի՛ թողուր որ իյնան այս փոքր թերութեանց մէջ։

Մի՛ քաջալերեր երբեք յոռի կատակները, այն գէշ խաղերն՝ որոնք կ'ընեն միմեանց, չար խօսքեր, նենգամտութիւններ։ Այն ընտանիքներն՝ որոնք այս սովորութիւններն ունին, կ'արհամարուին իրենց բոլոր դրացիներէն։ Անոնք չունին ոչ բարեկամ, ոչ վարկ, և ակնկալելի մարդասիրութիւն, և արդարութիւնը այսպէս կը պահանջէ։ Արդիլէ՛ քու տղայդ զիրար նախատելէ. չգիտցուիր թէ ո՞ւր կրնան տանիլ երիտասարդութեան մէջ առնուած այս գծուծ և գէշ բարքերն։ Պէտք չէ միայն ուրիշին անձնականութիւնն, համբաւը, ստացուածքը յարգել, այլ նաև իր անձն յարգել։ Բարի մայր մը շատ արթուն է այս մասին և խստութեամբ կ'արգիլէ ամէն անպատեհութիւն։ Նա չթողուր որ իր զաւակները վազեն անպատկառ, կիսաշրկ, աղտեղութիւն ընեն ուզածնուն պէս, և ոչ անհաճոյ շարժումներ։ Մարդ այսպիսի թերութեանց մէջ իյնալով կը կորսնցնէ մարդկային արժանապատուութեան զգացումը և վայրենութեան մէջ կ'իջնէ։

Քու աղջիկներուդ համար մանաւանդ աւելցուր խստութիւն։ Թող քիչ կարելի եղածին չափ քիչ հեռանան, և շատ վստահելի անձանց միայն յանձնէ՛ զանոնք։ Յորչափ անոնք դպրոց երթան, անոնց վրայ հսկողութիւն ընել դիւրին պիտի ըլլայ քեզ։ Բայց երբ անոնք մեծնան, անոնք աջ ու ձախ պիտի ուզեն երթալ բարեկամուհեաց հետ։ Այդ բանին պէտք

չէ հանդուրժես։ Շատ մատաղ աղջիկներ այս կերպով կաբսուած են։ Պէտք չէ թողուս որ այդպիսի ունակութիւն մը գտնուի իրենց վրայ։ Վասն զի անգամ մը մարդ տեղի տալու տկարութիւնն ունեցած ըլլայ, այնուհետև ամէն անգամ որ մերժել հարկ ըլլայ, կռիւներ տեղի կ'ունենան։ Սակայն բնական է որ երիտասարդութիւնը սիրէ զբօսնուլ, և բարի ծնողք պէտք չէ այս մասին ծաղրելի հանդիսանան։ Եթէ քու տղաքդ փափաք ունենան որ և է հանդէսի երթալու, ուր դուն կրնաս զանոնք առաջնորդել առանց անպատեհութեան, հոն գնա՛ անոնց հետ։ Գէշութիւն մը չկայ անոր մէջ երբ քու աղջիկներդ պարեն քու աչքիդ տակ իրենց եղբայրներուն հետ։ մեծ անպատեհութիւնն այն է, երբ առանց քեզ՝ ժուռ գալու երթան անոնք, ո՞վ գիտէ ո՞ւր, կենան ո՞վ գիտէ որո՞ւ տուն, և ծանօթանան անոնց՝ որոնք կրնան զանոնք չարին առաջնորդել։

Պիտի ըսեմ նաև ընթերցանութեանց համար։ Թող քու տունդ չտեսնուին այն լկտի գրքերն, կամ պարզապէս անմտօրէն գրուած գրքերն, որք երիտասարդութիւնը կը մոլորեցնեն և կը հուսատացնեն անոնց հազարումէկ յիմարութիւններ։ Մինչև իսկ եթէ բոլորովին անբարոյական ալ չըլլան, դարձեալ առոնք վընասակար կրնան ըլլան, եթէ մատաղ աղջիկը զզուեցընեն իր հանապազօրեայ պարզ կեանքէն, և անոր մտքին մէջ դնեն աչխարհի վրայ բոլորովին սուտ և չափազանցուած կարծիքներ։ Իրական կեանց մէջ չիկան այնչափ մեծ ոճիրներ, որչափ այդ գրքերուն մէջ կը պատմուին, ոչ այնչափ մեծ կուարճութիւններ, ոչ այնչափ կատարեալ դիւցազներ, և ոչ այնչափ սրտա-

չարժ դիւցազնուհիներ։ Եթէ դուն ուրեք պատահի այնպէս, բոլորովին բացառութիւն մ'է։

Կը գտնուին այժմ գրեթէ ամենուրեք լաւ գրքեր, որք այնքան շահագրգիռ են և կրնան բարձրաձայն կարդացուիլ ընտանեաց մէջ։ Ընտիր ընթերցումներ միտքը կը լնուն և այնպէս կ'ընեն որ այլ եւս զրզուելի կը դառնան անհամ և թշնամական բամբասանք և շաղփաղփութիւններ։

Այս թերութեանց մին է որուն կը միտին աւելի մատաղ աղջկունք։ միւս թերութիւններն են պչրանք, որկրամոլութիւն և ծուլութիւն։ Բարի մայր մը. այս ամենուն կը յաղթէ հաստատամտութեամբ, քաղցրութեամբ և ողջմտութեամբ։ Եւ յետոյ յաւագոյն ուսումն, կը տեսնե՞ս, քու ընծայելիք բարի օրինակն է։ Այնպէս բարի, այնպէս արդար, ճշմարտախօս, անաչառ եղի՛ր, որ քու տղայքդ քեզ նային հիացմամբ։ Անոնց համար եղի՛ր այն ամէն բարեմասնութեանց կենդանի օրինակն, զորս կ'ուզես որ ունենան անոնք։ Այդ յատկութեանց արժանիքը չատ լաւ պիտի հասկընան, եթէ անոնք ամէն օր անոնց բարերար աղջկացութիւնը զգան։ Այն ատեն դու անոնց համար պիտի ըլլաս տեսանելի նախախնամութիւն մը, և անոնց աչքն ու մեծարանք հարիւրապատիկ պիտի փոխարինեն քու կրած նեղութիւններուդ։

Իր որդիները երջանիկ և իմաստուն տեսնել, ահա այն քաղցր վարձքը՝ զոր մայր մը աշխարհի վրայ կրնար ստանալ։

Կարգապահութիւն, սնափրութիւն, աշխատութիւն քարգաւաճման կարեւոր պայմաններն են։

Նամակ Գ.

Սիրելի՛դ իմ Գեղանոյշ,

Աշխատութիւն, կարգապահութիւն, խելացի տնտեսութիւն աշխատասէր ընտանիքի մը համար բարգաւաճման կարեւոր պայմաններն են։ Ես զքեզ կանուխէն աշխատութեան վարժեցուցի. այն քեզ համար երկրորդ բնութիւն մը եղաւ։ Դուն չպիտի կրնաս ապրիլ առանց աշխատելու, և քու ընտանիքդ լաւ ևս զարգացնելու համար պէտք է շարունակ աշխատիս։ Քեզ սորվեցուցած եմ բաժնել աշխատութիւնը եղանակին համեմատ, փորձառութիւնը աւելի պիտի հրահանգէ զքեզ։

Թող կարգապահութիւնը քու կեանցդ ամենամեծ հոգերէն մին ըլլայ։ Ցորչափ մարդ քիչ բան ունենայ, այնչափ կարգապահութեան սովորոյթներն մեծ պէտք է ըլլան։ Բան մը գտնելը մի՛ թողուր, և դուն ապահով պիտի ըլլաս բան մը չկորսուելուն։

Ամեն բանի հաւար տեղ մը եւ ամեն բան իր տեղը։ Այս բանը միշտ կրկնէ՛ դուն, և ոչ միայն զայն կրկնէ՛, այլ և գործադրութեան մէջ դի՛ր. կարգադրէ՛ կարասիներդ աչաց հաճելի եղանակով, որչափ կարելի է, մանաւանդ առօրեայ գործածութեան համար զիւրին։ Կախէ՛ խոհանոցի պղնձէ անօթներդ պատին դէմ հորիզոնական դիրքով գամուած իւղաներկ տախտակի վը-

բայ, ապունդով պէտք է մաքուր պահել զանոնք։ Դարանին մէջ չարէ՛ անօթները և տանդ նպարները տուփերու մէջ դի՛ր։ Մի՛ թողուր որ աւելցուք մնան պըտակներու մէջ, հացի օթեակ կեղեւներ դարանի մէջ, բանջարեղէններ կողովի մէջ։ Ասոնցմէ կրնան կերակրելիք անասուններ, կատուներ, շուներ, հաւեր, այծեր, ճագարներ։ Իսկ եթէ այդ կտորները այնպէս թողուս, պանդարանները կ'աղտոտին և կը խափանուին։ — Եթէ չունիս մուկ խորշ մը՝ աւելները, խոզանակները, փետրաւելները, ջնջաններ և այլն, դնելու համար, վերջապէս ամէն ինչ որ մաքրութեան կը ծառայէ, գեղեցիկ վեց ոտնաչափ վեր տախտակ մը դիր՝ ուր պիտի կրնաս դնել տուփեր և ծրարներ։ Պէտք է մինչև գետինը իջնող վարագոյր մը կախել երկաթէ դաւազանէ մը, որուն եռև կը ծածկուին բոլոր անգործածելի անօթներ և նոյն իսկ արկղներ՝ որ պարունակեն հանքածուխ, տաշեղներ և բանջարեղէններ, ևն։ Երբ անօթները շարուին, վարագոյրը կը քաշուի և ամէն բան կարգին կ'ըլլայ։

Սրթնաղուդ պէս անկողինդ շտկէ՛, և ստիպէ տըղաքներդ՝ որ իրենցը շտկեն։ Թող անոնք չբաւականանան գործը շուտ տեսնելու համար անկողինը ծեծել, սաւաններ քաշել, և վրան վերմակ դնել։ Պէտք է դարձունել անկողինը, խոտէ անկողինը ցնցել և թօթուել սաւանները, որպէսզի անկողինը օդ առնէ։ Պառկելու առեն, նայէ՛ որ տղաք հանուին փուքով և յիմարութիւններ չընեն, իրենց զգեստները ծալլածդնեն, իրենց անկողնոյն ոտքի կողմը աթոռի մը վրայ, և իրենց ոտքի ամանները սենեակէն դուրս։

Թող միշտ աղտոտ ճերմակեղէնդ ըլլայ վերնա-

յարկը կամ գոց սնտուկի մէջ, մի՛ թողուր որ ալտեղի քան մը ըլլայ սենեակներուն մէջ. թացարձակապէս այդ կը պահանջեն առողջութիւն, կարգաւորութիւն և պատշաճութիւն։ Իսկ մաքուր ճերմակեղէնն, երբ լուացքէն դարձած է, վերատին երկաթով ողորկելէ առաջ խնամով քնէ՛ ամէն կտորները. ծածկուած կողովի մէջ դի՛ր բոյոր անոնք, որք նորէն նորոյուելու պէտք ունին, ծածկէ միւսները հին սաւանով, որպէս զի երկաթով ողորկելէ առաջ չաղտոտին,

Կարկըտելու համար սկսէ ամէնէն փոքր նորոգութիւններէն։ Այսպէս կողովդ շուտով կը պարպուի։ Պատուոներուն բացուած տեղերը կցէ՛, կտորներ դի՛ր ծակծկուած պատուոներուն. թել թել քակուած խըծիպները նորէն շինէ՛, նորէն կարդ պակսած կոճակները, կապիչները, ժապաւէնները։ Բայց ժամանակ մի՛ անցուներ շատ հինցած ճերմակեղէնը կարկտելու, որ չի կրնար ընդունիլ նոր կտորներ։ Պէտք է շարել իրարու վրայ ազէկ լուացուած հին ճերմակեղէնը մաքուր պարկի մէջ, որպէս զի հիւանդութիւն պատահած կամ ողորմութիւն տրուած ատեն առնուի։ Լաւ կարգաւորուած ճերմակեղէնով դարան մը քարի տանտիկնոջ մը փառքն է։ Զոյգ զոյգ լաւ ծալուած սաւանները, անձեռոցները, ջնջանները, դոգնոցները, մարմնոյ ճերմակեղէնները, քառակուսի ուղիղ բարդերով՝ իրեն պարծանքն են։ Պէտք է դնել կտաւեղէններուն վրայ չոր հուսամի փնջիկներ և հիրիկի արժատներ, որոնք կուտան անոնց լաւ, առողջարար և հաճելի հոտ մը։

Կտաւեղէնի լաւ դարաններու մէջ կայ քանալիով գոցուած գզրոց մը։ Ապահով փականք մը սուղ չէ,

և դի՛ բաւ կը դրուի այս գզրոցին։ Հոն կը շարուին դրա՛մ, փոքր դոհարեղէններ, ընտանիքի արծաթեղէնքը և թուղթերը. ծծնդեան, ամուսնութեան և մկրտութեան վկայագրեր, խնայողական արկղի գրքոյկներ, մուրնակներ և արժէթուղթեր, ելն, ամէնքն ալ ատուարաթղթէ տուփի մէջ զետեղուած։ Երկրորդ ատուարաթուղթէ տուփի մը պէտք է պարունակէ տուքի, ապահովագրութեան, տան վարձուց անդորրագրերն. վերջապէս բոլոր թղթերն՝ որ կարեւոր են լաւ կարգադրուած տան մը մէջ պահելու։ Պէտք է որ բանալին դրուի ընտրուած ծածուկ խորշի մէջ, որ պէտք է ծանօթ ըլլայ ամուսնոյն և կնոջ միայն։ Դարանին վերի կողմն կրնաս գտնել բեղոյրի ատուարաթղթէ տփեր, հին ճերմակեղէնի պարկը, ուրիշ պարկ մը՝ որ կը պարունակէ կարկատելի առոնին զգեստներու կերպասի կտորեանք, ուրիշ պարկ մ՚ալ ուր կը դրուին ձեւուած ճերմակեղէնի նոր կտորեանք, այսինքն կտաւի, ատաղձի, առուակի, արքենուոյ պատառիկներ՝ որ կ՚իյնան նոր ճերմակեղէն մը ձեւելու առեն։ Տան մը մէջ այս ամէնը իր օգուտն ունի։ Բայց թող այս նախաղգուշութիւնք անկարգութիւն չպատճառեն, և չի դարձնեն փերթաքաղի խանութ մը. նոյնպէս պահէ՛ դարանիդ մի անկիւնը մի արկղ՝ որ պիտի ծառայէ քեզ իբր դեղարան։ Այսպէս ձեռքի տակ պիտի ունենաս վէրք կամ արկած պատահած ժամանակ ամէն ինչ որ քեզ օգտակար պիտի ըլլայ։

Թող միշտ կախուած և վարագուրով մը ծածկուած ըլլան քու վերարկուներդ, շրջազգեստներդ, քու որդւոցդ ու ամուսնոյդ զգեստները. եթէ անոնք դարանի մէջ չըլլան, քիչ ծախքով ընտիր ձորձակալներ կը շինուին փոքրիկ փայտէ ձողով մը, որուն մէջ օղագլուխ

գամ մը կը գամուի։ պէտք է անցունել առաջան մը այն գամին օղակէն և ամէնն ճանկաւոր գամերով տախտակէ մը կախել։ Այսպէս կախուած հագուստները պատուելու վտանգէն ազատ կ'ըլլան և գամերէ կախուածներու նման ձեւերնին չեն կորսնցներ։

Երբ հագուստները բոլորովին անգործածելի են, և կարելի չէ նորոգել դուրս դարձնել կամ նորոգել որեւէ կերպով, զանոնք աղքատայ տո՛ւր։ այս կերպով դուն երջանիկ պիտի ըլլաս ուրիշներն, թէեւ մեծ հարստութիւն չունենաս։ Կարգաւորութիւն և խնայողութիւն ի միասին կ'երթան։ մին միւսը կ'առաջնորդէ, և երկուքն ալ լաւ տուներ կը կազմեն։

Ամուսնանալուդ պիտի բերես լաւ օժիտ, քիչ մը կարասի, և ունեցած դրամդ։ Եթէ ամուսնանաս բարի գործաւորի մը, կոկիկ մարդու մը հետ, որ վարժ ըլլայ իր արհեստին կամ պաշտօնին մէջ, ձեր երկուքին շահածովը ապրելու համար պէտք եղածէն քիչ մը աւելի բան մը պիտի ունենաք, և որդիներ ծնանելէ առաջ դուք պիտի կրնաք ձեր տունը կահաւորել տակաւ և նոյնիսկ դրամ դնել խնայողական արկղն։ Սակայն այս բանը հաւատօրէն և խաղաղիկ ապրելու պայմանով կ'ըլլայ անշուշտ։ բայց ապահով եղի՛ր թէ երջանկութիւնը պէտք չունի ոչ պերճանքի և ոչ աղմկալից զուարճութիւններու։ Ուրեմն նախ և առաջ ձեր հաշիւն ըրէ՛ք, մարձաւորապէս հասկնալով թէ ի՞նչ պիտի ծախսէք հացի, մսի, ըմպելեաց, անոգեան, լուացքի, տաքնալու, և այլն ի համար։ Աւելի յստակ մտքով ըսելով, շինեցէք ձեր հիւսմոայոյցը այսպէս,

ՄՈՒՏՔ

Շահ ամուսնոյ

Ամսական	150 ֆր.	
Տարեկան	140×12	1800

Շաբաթական

Ամսական	50 ֆր.	
Տարեկան	50×12	600
Զանազան հասոյթք		200
Համագումար		2600

ԵԼՔ

Տան վարձք	ֆր.	250
Տուրք		10
Ըմպելիք		250
Սնունդ		950
Լուսաւորութիւն		30
Ջերմութիւն		50
Լուացումն		60
Ամուսնոյ զգեստ		150
Կնոջ զգեստք		100
Կարասեաց ծախք		50
Զանազան ծախք		200
Համագումար		2100

Այս ընելէ յետոյ այնպէս մը կարգադրեցէք ձեր կենցաղավարութիւնն, որ ծախուց կողմը նուազ ըլլայ քան մուտքի կողմը. որովհետև պէտք է հաշուի առնել հիւանդութեան օրեր, գործազուրկներ, արտասովոր ծախքեր։

Եթէ ամէն ամիս ամէն ինչ վճարելէ յետոյ ձեզ փոքր

գումար մը մնայ, առանց վարանման դիր խնայողական արկղը։ Մտիկ մի՛ ըներ անոնց՝ որ կ'ըսեն, պզտիկ գումարի մը համար ճեղուիլ չարժեր։ Մինչև իսկ եթէ միայն հինգ ֆրանք ունենաս մնացորդ, տար զայն. այս կերպով զայն ըստ հաճոյս վատնելէ փրկած պիտի ըլլաս, և հիւգ հինգ ֆրանքով խնայութեանց գրքոյկիդ մէջ բաւական կլոր գումար մը պիտի նշանակուի։ Տարուոյն վերջը ժուռքի և ելքի ճիշդ հաշիւը տե՛ս, որպէսզի դիտնաս թէ արդեօք չափէն աւելի չէ՞ կենացդ համար ըրած ծախքդ, կամ թէ արդեօք կարո՞ղ ես ամէն տարի դարձեալ փոքրիկ գումար մը աւելցընելով հանդերձ աւելցնել նաև քիչ մը առանին բարեկեցութիւնդ, կարասիքդ կամ հանդերձեղէնքդ։

Երբ քու տղայդ քեզ հասկնալու չափ բաւական մեծ ըլլան, մի՛ վախնար որ անոնք քու այս տեսակ փոքրիկ գործերուդ տեղեակ ըլլան։ Կան մարդիկ՝ որ կ'ըսեն. Պէտք չէ այս ամէն բաներով տղոց միտքը ճեղել։ Հաւատա՛ թէ կը սխալին։ Պարկեշտ և ժրաջան ընտանիքի մը մէջ ամէն անդամ պէտք է մասնակից ըլլայ հասարակաց շահու վերաբերեալ բաներու։ Առանց տղոց միտքը իրենց հասակէն վեր հոգերով անդանդիտ ընելու, կարելի է վարժեցնել զանոնք տակաւ հասկնալու թէ իրենց ուտեստը, հագուստները, գրքերը, խաղալիկները ինքնին չեն գար, թէ անոնց համար վճարուած դրամը հօր և մօր աշխատութեան պտուղն է, թէ կան օրեր, երբ դրամը սակաւապիւտ է, թէ պէտք է խնայել, և թէ բարի և անձնուէր տղայ մը պարտի կարելի եղածին չափ շուտ, շահելու վիճակին մէջ ըլլալ իր ծնողաց օգնելու համար։ Սկիզբը ըսի. Խելացի խնայողութիւն մը։ Արդարև պէտք չէ շփոթել խնայողութիւնն՝ որ լաւ բան մ'է, ապա-

հութեան հետ՝ որ անարդ բան մ'է։ Խելայի խնայողութիւն մը պէտք չէ դպչի ոչ առողջութեան, ոչ մաքրութեան, ոչ գթոյ։ — Այսպէս կարելի է խնայողութիւն ընել փափկակերութեան, որկրամոլութեան վրայ, բայց ոչ ընտանեաց ուտեստի քանաւոր ատակին և քանակին նկատմամբ։ Գէշ ունուդ առած այր մը և կին մը չեն կրնար աշխատիլ ոչ լաւ և ոչ շատ, և շատ դժուարաւ կը հանդուրժեն իրենց վիճակին յոգնութեանց, որով հիւանդութիւնք կը հասնին ու. կ'աւերեն տունը։ Հին առած մը կ'ըսէ. Բժշկի երբալեն առաջ լաւ է ջաղացի երբալ։

Մաքրութեան մասին խնայողութիւնը պարշելի և վնասակար բան մ'է։ Այսուհետև լաթ հագնիլ, ծակ կօշիկներ, խզոտ հագուստներ կրելն անձին արժանապատուութեան թերանալ է, վնասել է իր առողջութեան, իր զարգացման, և բարի անուան՝ զոր պարտի պահել իր ընտանեաց համար։ — Վերջապէս խնայողական պատրուակաւ պէ՞տք է միթէ խստասիրտ ըլլալ իր ընտանեաց, մերժել հաց կամ պնակ մը ապուր թշուառի մը՝ որ անօթութենէ կը տառապի կամ ծախել քիչ մը սոակի փոխարէն հին հագուստներ, որ դեռ ևս կրնան ցուրտի դէմ պաշտպանել կիսամերկ փոքրիկ թշուառ տղայք։ Ո՛չ, սիրելիդ իմ Գեղանոյշ, չգոյներդ մեր սիրտը այլոց տառապանաց դէմ։ Մենք ամէնքս ալ եղբայր ենք, ամէնքս ալ որդի՛ք նոյն հօր՝ որ երկինք է, և պարտինք միմեանց օգնել այն ամէն տուայտանաց մէջ, որոնցմով աշխարհի կեանքն լեցուած է։ Միթէ միեւնոյն տառապանքին մենք ալ ենթակայ չե՞նք։ Ամենէն մեծ հարստութիւններ յանկարծ կը կործանին. խորհէ՛ թէ մի քանի ամսուան մէջ ձախողութիւնը կամ մահն մինչև ո՛ւր կրնան իջնեցնել ա-

մենէն բարդաւաճ տուն մը։ Չեմ ուզեր այս դառն մը-տածմանց վրայ երկարաբանել, բայց միայն կ'ուզեմ ցուցնել թէ լաւ է երբեմն անոնց վրայ մտածել։ Անոնք կը տարվեցնեն խոհեմութիւն երջանիկ օրերու մէջ, և կը պատրաստեն անտրտունջ հպատակութիւն և քաջութիւն դժնդակ օրերու համար։

Այս նամակը կ'աւարտեմ այն պզտիկ պատմութեամբ, որ յարմար պիտի դայ ցոյց տալու թէ մինչև ո՛ւր կրնայ տանիլ պզտիկ բաներու մասին անփութութիւնը։

Բաց դրան մը վտանգը եւ խնայողութեան դաս մը։

Կը յիշեմ թէ գիւղն եղած տունս, տեսայ օրինակ մը այն փոքրիկ վնասներուն, որոնց կ'ենթարկուի տունը անփութութեան պատճառաւ։

Առ ի չգոյէ չնչին դռնիակի մը, հաւքակի մը դուռն՝ որ դաշտերու վրայ կը նայէր, յաճախ բաց կը մնար։ Ամէն եղող դուռը կը քաշէր, բայց զայն դոցելու համար, արտաքին ոնէ միջոց չըլլալով, դուռը բացիկիկ կը մնար։ Հաւքակին անասուններէն շատերը այս կերպով կորսուած էին։

Օր մը մատաղ և զեղեցիկ խոզ մը փախաւ դէպի անտառները։ Ահա դաշտին բոլոր մարդիկ, պարտիզպան, խոհարարուհի, հաւքակի ապատատար աղջիկներ փախչող կենդանւոյն ետեւէն հետամուտ ըլլալու եկան ադիէն անդիէն։ Առաջին անգամ պարտիզպանը նըշմարեց, և անոր անցքը արգիլելու համար փոսի մը վրայէն ցատկելու առեն վտանգաւոր կերպով ճմլուեցաւ, որով տաանևհինգ օրէն աւելի անկողնի ծառայեց։ Խոհարարուհին խանծած դռաւ այն ճերմակեղէնը զոր կրակին քով ճգած էր չոչնալու համար, և որով-

հետեւ հաւքակի սպասուհին անասունները կապելու ժամանակ չունեցած հեռացած էր դոմէն, կով մը անոր բացակայութեան ատեն քուռակի մը սրունքը կոտրեց, որ միւեւնոյն ախոռին մէջ կը պահուէր։ Պարտիզպանին կորուսած օրականները 60 ֆրանքի եզան, նոյնչափ կտաւին և քուռակին վնասը։ Ահա այսպէս չնչին դրդապատճառ մը չըլլալով մի քանի վայրկեանի մէջ հարիւր քսան ֆրանքի վնաս մը առաջ եկաւ այնպիսի մարդոց, որոնք շատ խնայողութեան պէտք ունէին, չհաշուելով հիւանդութեան պատճառած նեղութիւնները, ոչ անհանգստութիւն և ծախքէն դուրս եղած ուրիշ անպատեհութիւններ։ Ասոնք չէին մեծամեծ պէտներ կամ մեծ վնասներ. սակայն երբ դիտցուի թե անզգուշութիւնն ամէն օր այսպիսի պատահարներ կը պատճառէր, և ի վերջոյ փճացուր պարէշտ ընտանիք մը, ամէն ոք պիտի ըսէ թէ կ'արժէր այս մասին հոգ տանիլ։

Ժ. Բ. Սէց

Ազգականաց գալը, մանկան մը յաջողութիւններն ուրախութեան առիթներ են.

Նամակ Դ.

Բարեբախտաբար կեանքն չէ եղած աշխատութեան և հոգերու համար։ Հարստանիք, մկրտութիւն, ազգականի մը գալն, մանկան մը յաջողութիւնները ուրախութեան առիթներ են, զորս բարի ընտանեաց մէջ կը սիրեն տօնախմբել գումարումներով։ Այսպիսի պատգամի մէջ բարի ընտանիքը իր բոլոր տաղանդը կը

ցուցնէ, բոլոր տնեցիք կամաւ կ'օժանդակեն այս բանին. մանչերը ապապրուած բան մը կատարելու կ'երթան, աղջիկները սեղանը կը պատրաստեն, տունը կը զարդարեն. ամէն ոք իր ջանքը կը նուիրէ, և ամէնքը փափաքող են ընտանիքը պատուելու։ Տուներ կան, ուր բոլորովին կը չփոթին այսպիսի պարագայի մէջ, չգիտեն ո՛ւրկէ սկսիլ և ամէն ինչ ճախող կ'երթայ։ Այնպէս մի՛ լինիր, սիրելի՛ դ իմ Գեղանոյշ, պա՛տէ՛ քու պարարունութիւնդ գլուխդ կրակի մէջ եղած առեն, և քու ամենօրեայ կեանքիդ ճշդութեան և կարգաւորութեան սովորութիւնները զքեզ չպիտի լքանեն։ Կ'ուզեմ քեզ օգնել մի քանի խորհրդով։

Նախ և առաջ պէտք է լաւ հաշուել այն փոքր գումարը, որ կրնայ ծախսուիլ և զայն ողջմտութեամբ բաշխել. այնչափ մսի համար, այնչափ բանջարեղէններու և պտղոց համար, այնչափ աղանդերի համար, այնչափ գինւոյ և խառնուէի համար, այնչափ զանազան ծախսերու համար։ Մասնաւորապէս պէտք է զգուշանալ մեծածախ սեղաններէ և թերի պերճանքէ, ինչպէս օրինակի համար ամբողջ գնով իշխանաձուկ գնել, որ թարմ չէ, հոտելուսկսած որսի միս, կարկանդակ, օթեկ հաստեաներ, փոսած պտուղներ և դէշ ալքոլով և աղիտայով պատրաստուած Մատերայի գինի։ Այսպէս ընելով ոչ ոք գոհ կ'ըլլայ, ոչ հրաւիրեալները, որոնց կը հրամցուին խոտելի կերակուրներ, և որոնք կը խնդան քու յաւակնութիւններուդ վրայ, և ոչ նիւթական կարողութեանդ, որուն վրայ կը ծանրացնես կարգէ դուրս ծախք մը։

Եթէ կ'ուզես քու բարեկամներուդ հաճոյք պատճառել, տո՛ւր անոնց սեղան մը լաւ, խնամուած, հան-

գըստաւէտ, առատ ըստ բաւականին, որմէ ամէն հանդիսական ճաշակէ, և որուն մնացորդները դեռ հետեւեալ օրն ալ օգտակար կարենան ըլլալ։ — Եղանակին համեմատ պատրաստուած պարզ ճաշացուցակներ ընտրէ՛։ — Ըմպելեաց մասին երկրիդ մէջ սովորաբար խմուած ըմպելին, այսինքն գարեջուր, խնձորոզի, կամ չանչագինի պէտք է կարելի եղածին չափ առատ եւ լաւագոյն տեսակէն ըլլայ։ Ամառ ատեն պէտք է զով պահել զայն։ — Լաւ գինւոյ դալով լաւագոյն է շիշ մը Պորտոյի կամ Կիպրոսի գինի առնել ընտիր վաճառատունէ քան թէ նպարավաճառէ կամ գինետունէ յոռի տեսակէն երեք շիշ գնել։ Ճաշէն վերջ գաւաթ մը սուրճ միշտ հաճոյք կը պատճառէ. պէտք է մեծ խնամով զայն պատրաստել։ Այդպիսի օրերու մէջ պէտք է որ անխառն ըլլայ սուրճը։

Այրերը կ'ուզեն օրի եւս խառնել հանդիսին. քու դրամդ մի՛ վատներ այն վարդագոյն, կանանչ, դեղին յոռի դեղերու համար, որոնք կը ծախուին արեւստակեալ ձեւով շիշերու մէջ, որք թոյն են։ — Լաւ տեսակէն քիչ մը օրի բաւական է։ Երբ ճաշն աւարտի, մնացորդը եթէ չես ուզեր թափել, փոքրիկ շշի մէջ կը դրուի և քերանը խնամով կը գոցուի։ Հետեւեալ օրը տանտիկինը շիշն իր պահարանին մէջ կը դնէ։ Այսպէս ըրէ՛ ուրիշ առանին ըմպելեաց մասին։ Մեծ անմտութիւն է ըսել. շիշը սկսուած է պէտք է հատցունել զայն։ Այս կերպով մարդ կը սովորի ոգելից ըմպելիքներու և փոքրիկ որկրամոլութիւններու, որ թերեւս ամենէն աղեռալի սովորութիւնն է կնոջ մը համար. վասն զի այն է որ կը տանի զանի ամէն թերութեանց։ Մանաւանդ այս՝ ստակի շատ անհեղեդ վատնում մ'է։ Նոյն իսկ երբ տունէն ալ չինուի, ամենէն պարզ ըմ-

պելին սուղ կ'ելնէ դարձեալ. ամէն անգամ որ սկսուած շիշ մը լմնցունէք, 2 ֆրանք պատուհանէն դուրս կը նետէք։ Եթէ այս բանը տասն անգամ պատահի տարուոյն մէջ, 20 ֆրա՛նք, փոքրիկ բնակարանի մը վարձքին տասներորդ մասն է, ամուսնոյ մը համար վեց շապիկի գինն է, կնոջ մը համար փոքրիկ ասուեայ վերարկուի մը, ողջոյց համար երկու զոյգ լաւ մուճակի, բուրդէ ծածկոցի մը, զոյգ մը սաւանի, երկաթէ մահճակալի մը, սպիտակ փայտէ պահարանի մը, երկուսանեակ անձեռնոցի հանդերձ սփռոցով, անկողնի համար վարագոյրներու կազմածի մը, ասեղնագործութեան համար քաշ մը բուրդի, երկու քաշ բամպակեայ թելի, ուրիշ այնքան լաւ օգտակար, հաճելի, հանգստաւէտ բաներու, որոնցմէ տանտիկին մը յաճախ ցաւով կը զրկուի։ Այսպէս խոհեմ և իմաստուն ծնողք իրենց զաւակներուն չեն տար ոգելից ըմպելիներու ճաշակն։ Մտիկ չեն ըներ անոնց, որոնք կ'ըսեն. է՛, կաթիլ մը ի՞նչ վնաս անոր, պէտք է մանաւանդ որ մարդ ըլլայ։ Մարդ ըլլալ չէ՞, երբ չատ կանուխէն ալքոլի սոսկալի սովորութեան ճամբան կը բռնէ մէկը՝ որ կը լեցնէ դատարանները մուրացիկներով և անկելանոցները յիմարներով։

Ընտանեկան համախմբութեանց մէջ երբ տղայք աղանդերէ և համաղամներէ իրենց բաժինն առնեն, պէտք է մեկնին սեղանէն և երթան ուրիշ տեղ մը զբօսնուն։ Արդէն իսկ սուրճի ժամանակն է որ մարդոց գլուխը տաքցած կ'ըլլայ, լեզուները կը բացուին, և այնպիսի խօսքեր կ'ընեն՝ որ լաւ չեն գար մանկական լսելիքներու։

Ամուսինք ընդհանրապէս լաւ ապնջականութեան մը պատրուակով գինւոյ շիշերուն և ոգելից ըմպելիք-

ներու բաժակներուն թիւը շատցնելու կը նային։ Սա-
ռանց սմուանոյն հակառակելու բարի մայրը կը հակէ
որ այս փոքրիկ հանդէսները չուայտուլեան չդառ-
նան։ Կը ջանայ արգիլել վէճերը, բանակռիւները,
կրօնական պայքարները, շանու խնդիրները։ Շատ անգ-
ամներ պատահած է որ ընտանեկան ճաշերու վերջը
այսպիսի կռիւներ ելլան։ Պէտք չէ թոյլ տալ աղաղ-
և անպատշաճ խօսքեր։ Պարկեշտ կին մը պէտք է
միշտ յարգելի ընծայել անձը։ Հարկ չկայ ասոր հա-
մար երես թթուեցնել կամ մրմռալ կամ զայրագին
կերպարանք առնել։ Յարմար խօսք մը, լուրջ դէմք
մը, ցուրտ կերպարանք մը բաւական են միշտ հաս-
կընելու պատշաճութեան սահմաններու մէջ պահելու
համար անկիրթները։

Զանիէն աւելի ընտանեկան խաղերն պէտք է վը-
տարուին պարկեշտ տուներէ։ Կարելի է շատ զբօսնուլ
առանց իրար հրելու, հրմշտկելու, իրարու գէշ խաղ
մը խաղալու, հազար անճոռնի բաներ ընելու կամ ը-
սելու՝ որք կը նեղեն խոհական մարդիկը, և զուար-
ճանալու մասին առաւելութիւն չեն ընծայեր։ Մա-
քուր և անկեղծ զուարթութիւն մը այնքան շշնկոցի
պէտք չունի։

Մաս մը բախտի խաղ, կամ երեսուն եւ մեկ թուղ-
թի խաղը, մի քանի երգեր, ցուցք կամ երգեր, կամ
լաւ ընտրուած գրաւ բռնելու խաղեր շատ հաճելի կեր-
պով անցունել կուտան երեկոյթը։ Ապա գոհութեամբ
ամէն ոք կը բաժնուի իրարմէ։

Հացկերոյթ տալու օրն առաւօտէն պէտք է սլխել
մաքրել և կահ կարասիքը լաւ յարդարել։ Սովորական
աշխատութեան վերաբերեալ բան մը պէտք չէ թո-

զուլ։ Ուտեստի գնումները պէտք է կատարել նախընթաց օրերը։ Երբ ամէն ինչ լաւ աւլուած է, սրբուած, կարգաւորուած, պէտք է սեղանը դնել, ընտիր մաքրութիւն մը անհրաժեշտ է։ Շատ սպիտակ և արդուկուած կտաւ, գաւաթներ, անձեռնոցներ, ջինջ ապակեայ շիշեր, դանակներ, որոնց երկաթը փայլեցնելու համար կաշւոյ վրայ քսուած է, խնամով ծալլուած անձեռոցներ, համաչափ դրուած սպաներ՝ սեղանին կ՚ընծայեն զուարթարար և կոկիկ տեսք մը, որով կը պարարին աչքեր, և կոչնականաց ակումբը առաջուց կ՚ուրախացնեն։ Գիւղերը ամէն եղանակաց մէջ կարելի է սեղանը դնել ծաղիկներ և պտուղներ։

Քաղաքներու մէջ դժուարին է այս։ Բայց ծաղկանց տեղ կը պատրաստեն պտղոյ բրգաձև կոյտեր։ Խնձորներ, նարինջներ տեղ տեղ յունուար ամսոյ մէջ սուղ չեն։ Մամուռներով շրջապատելով զանոնք և ճաշակով գետեղելով սեղանին մէջը կամ երկու ծայրերը, աչքի հաճելի տեսք մը կ՚ընծայուի։ Ամրան ատեն կեռասներ, եղակներ, հաղարջներ, արքայամորեր իրարմէ զատ որթի տերեւներու վրայ շարուած սեղանին չորս ծայրերը դրուած պնակներու մէջ, հրապուրիչ ձեւ մը կուտան, մանաւանդ եթէ զարդարանքը ծաղկեփունջով և տերեւներով կատարեալ ըլլայ։

Եթէ արծաթեղէններ չիկան, աւելի լաւ է գործածել անգղիական մետաղէ սպաներ, զորս կաւիճով չփելով փայլեցնելու է քան թէ գէշ արծաթազօծ դըգալներ և պատառաքաղներ։ Սնոտի պերճանք է, վասն զի այս սպաներ աւելի գէշ ըլլալով հանդերձ աւելի սուղ են քան թէ մետաղի քաղաքրութենէ ամուր շինուած սպաներ և աւելի քիչ կը դիմանան։

Նոյնը պիտի ըսեմ նաև փղոսկրէ կամ եբեղնոսէ կոթով դանակներու համար, որոնց կարծեցեալ բերանը երկաթէ է և կոթը ոսկրէ կամ նեբկեալ փայտէ, և որ չուտ կը խախտին քիչ մը հաց կտրուելուն պէս։

Ցաճախ կը պատահի որ ազգականաց և բարեկամաց մէջ փոխ կը տրուին անօթ, գաւաթներ, սպասներ, կտաւներ, եւն. ընտանեկան յատկաւաթիւ գումարմանց մէջ։ Ցիշէ՛ թէ բարի տանտիրուհի մը ամենէն մեծ խնամքը կը տանի իրեն փոխ տրուած բաներուն, և պարտի կարելի եղածին չափ չուտ եռ տալ միշտ լաւ վիճակի մէջ. անօթը մաքրուած, դանակները յղկուած, բաժակները և անօթները լուացուած, ճերմակեղէնները լուացուած և ողորկուած։ Եթէ որ և է բան կոտրած է՝ կամ կորսուած՝ պէտք է անոր տեղը դնել անշուշտ, և կարելի եղածին չափ նման առարկայ մը։ Վերջապէս երբ ամէն ինչ պատրաստ է և կը մնայ միայն վայելել այն փոքրիկ զուարճութիւնները, զոր տանտիկին մը պատրաստած է, արդարացի է որ ինքն ևս մասնակցի։

Մեծ զուարճութիւն է տեսնել սեղանին չուրջ բարի և զուարթ դէմքեր ազգականներու և բարեկամներու։ Պէտք է ամենուն հոգ տանիլ, նայիլ որ ոչ ոք մոռցուի, լաւագոյն կտորներն ընծայել տարեց մարդոց կամ անոնց, որոնց կ՚ուզուի պատիւ ընել, բայց պէտք չէ ձանձրացուցիչ եղանակաւ մը հիւրերը ստիպել, ոչ ալ թախանձել որ ուտէ իր սիրած մէկ կերակուրէն և կամ դարձեալ առնել կերակուրէ մը, զոր կը սիրեն, բայց որմէ բաւական ունին։ Վերջապէս պէտք է համոզուիլ թէ ճշմարիտ քաղաքավարութիւնը կը կայանայ իր տունը՝ կարելի եղածին չափ ախորժելի ընծայել հրաւիրեալներու։

Երբեմն կը պատահի նոյնպէս ճաշել ուրիշներու տունը. պէտք չէ շատ կանուխ երթալ, որովհետև շատ կը նեղուի տան տիրուհին, և ոչ ալ ուշ, զի խորովածը կը չորնայ և միւս կոչնականներուն համբերութիւնը կ'սպառի։ Պէտք է լաւագոյն հագուիլ, վասն զի հիւրընկալները պէտք է պատուել և այսպիսի առիթներու համար է որ մարդ կը պահէ հանդիսական հագուստներ։ Եթէ տղայք ալ տարուին, պէտք է հոգ տանիլ որ մաքուր հագուած ըլլան, լաւ լուացուած, սանտրուած, ձեռքերնին մաքուր, եղունգներն մաքրուած և կտրուած, սպիտակ թաշկինակ մը իրենց գրպանը։ Եթէ ձմեռ է, պէտք է որ հետ առնեն փողապահներ, ցփսի, և լն. որովհետև ճաշի մը առեն ոգեւորուելէն և բազմութեամբ լցուած փոքրիկ սենեակներու մէջ փակուելէն. յետոյ արիւնը կ'եռայ և տաքէն պաղ անցնիլը կրնայ պատճառել հարբուխ, փողացաւ, ցնցղատապ, և այլն։

Յաճախ ծնողք քիչ մը անհանգիստ կ'ըլլան թէ իրենց տղայք ի՞նչպէս պիտի վարուին օտարականաց քով։ Ապահով եղի՛ր որ եթէ տղաքդ վարժեցուցած ես քաղաքավարութեամբ քու տանդ մէջ պատշաճութեան, լաւ ձեւերու, դուրսն ալ նոյնը պիտի ըլլան, ինչպէս տանը մէջ։ Տեղի չունիս վախնալու որ մի՛ գուցէ իրենց արմուկը սեղանի վրայ դնեն, մատերնին քթի մէջ խոթեն, և ձեռքերնին իրենց գաւաթներուն մէջ. թէ մի՛ գուցէ պատուղներու կուտերը սկաւառակներու մէջ ձգեն քերնիերնուն դուրս հանելով, փոխանակ նախ իրենց ձեռքին մէջ առնելու, անախորժ ձայներ հանեն ուտելու ժամանակ, իրենց քովը նստող սեղանակիցները ձանձրացնեն։ Բարձրաձայն ուզեն իրենց

առջև եղած ամէն բանէն կամ աղանդներ լեցուանն իրենց գրպաններուն մէջ։ Սովորաբար երես ելած տղայք երբեմն այսպիսի անմտութիւններ կը գործեն, և ծնողաց մեծ յիմարութիւն է կարծել թէ մեկնելէ առաջ խելօք կենալու երկայն պատուէրներ տալով բոլոր յոռի ունակութիւնները պիտի անհետանան իրենց հրաշքով։ Սակայն երբ տղայք խելացի և ուշիմ են, չեն ուզեր բաղմութեան առջև իրենց ծնողքը ամչցընել, և թէև ատոնց մէջ քիչ մը երես առած ըլլան, ընկերութեան մէջ աղէկ կը կենան։

Երբեմն տղայք ոմանք, մանաւանդ փոքր մանչերը անճարակ և վախկոտ կ'երեւան և կը մերժեն իրենց ծնողաց հետ երթալ։ Պէտք չէ մտիկ ընել անոնց, վասն զի մէկ կողմանէ շատ պէշ բան է տղաքը առանձին թողուլ, մինչև իսկ յանձնելով դրացիներու, որոնք վատահելի կը կարծուին և գուցէ չեն, և միւս կողմէ աղէկ բան է, մինչև իսկ կարեւոր է որ տղայք և պատանիք ընկերական յարաբերութիւն կոչուած բանին վարժուին իրենց ծնողքին աչքին առջև։ — Պէտք է վարժեցնել զանոնք յաղթելու կեղծ ամչկոտութեան, որ ներկային մէջ ընտանիքին անհաճոյ կ'ընէ զիրենք և ապագային մէջ կրնայ անոնց վրայ հրաւիրել ծանր տաղտկութիւններ։ Տղայութեան և պատանեկութեան մէջ է որ կ'ստացուին այն ունակութիւնք համարձակութեան, վստահութեան թէ՛ իրենց անձին և թէ այլոց վրայ, որով գործերն այնչափ կը դիւրանան։ Պարկեշտ պատանի մը պէտք չէ ժէկէ մը վախնայ, և իր համարձակ դէմքը, իր անխրոտով, պարզ և սիրուն կերպերը իր անձին պարկեշտութիւնը պէտք է յայտնեն։

Իսկ խիզախութիւն, լրբութիւն դուն ուրեք կը տեսնուին պատուաւոր ընտանիքի մէջ մեծցած տղայոց վրայ։ Քեզ կը ճանչնամ և չեմ վախնար որ քու աղջիկներդ կամ որդիքդ նմանին այն ստահակ պառաւներու կամ այն թեթեւամիտ պչրող աղջկանց՝ որոնց նայելով խելացի մարդիկ ուսերնին կը թօթուեն, և համոզուած եմ որ քուկիններուդ վրայ խօսուած ատեն՝ հօր և մօր ականջին հեշտալուր սա խօսքերը յաճախ պիտի յեղյեղուին։ Ահա արդարեւ բարեկիրթ զաւակներ։

[*Թարգմ.*]

ԳԼՈՒԽ Ը.

ԸՆՏԱՆԵԿԱՆ, ՄՏԵՐՄԱԿԱՆ, ԼՈՒՐՋ ՆԱՄԱԿՆԵՐ

Դիտողութիւն. — *Պարզ, համարձակ, հեշտ, նոյն իսկ զբաւարք ոճ մը պէտք է տիրէ ընտանեկան նամակներու մէջ. սակայն ոչ գրեհիկ կերպով։ Պէտք չէ խաբուիլ* **ընտանեկան** *մակդիրէն։ Պատշաճ է որ գրողն իր անհատականութեան, իր լեզուին դրոշմը տայ իր այս նամակներուն եւս։*

1. Մայր մը իր աղջկանը։

Սիրելի՛ աղջի՛կս,

Քեզ չտեսնե՛լ և քեզ հետ խօսելու հաճոյքէն

զուրկ ըլլալ, ի՜նչ ցաւ։ Ո՞րչափ մեծագնի է ինձ այս զոհողութիւնը. ամէն ժամ այն սէրն՝ զոր պարտիմ քեզ, կը խօսի սրտիս։ Կ'ըսեն թէ բարւոք դաստիարակութիւնն այն պատուական հարստութիւնն է զոր հայրն ու մայր կրնան տալ իրենց որդիներուն. և այս է զոր ամենէն աւելի կը փափաքիմ քեզ տալ։ Վերջապէս բաժնուած եմ քենէ, բայց քաղցրիկ յիշատակներ սիրտս քեզ հետ կը կապեն անքակտելի։ Ո՜հ, քանի՞ քաղցր էր օրուան տաղտկութիւններէն յետոյ տեսնել քեզ՝ որ բաղուկներուս մէջը կը թռչիս, և կ'ընդունիս դորովալից գգուանքներ, և ունկնդրել սիրելի խորհրդածութեանցդ, և լսել այն դասերը, զորս քեզ տուած եմ։ Եթէ կարելի ըլլար ինձ անձամբ ուսուցանել քեզ, հաճոյագոյն զբաղումը պիտի ըլլայ այդ ինձ համար. բայց լուրջ և հաստատուն դաստիարակութիւն մը կարելի չէ սուղ ժամանակի մէջ տալ։

Կը վախնայի թէ դպրոցն՝ որուն կը վստահէի, չպիտի կրնայ տալ փափաքած դաստիարակութիւնս. այժմ չունիմ այդ երկիւղն ո՛չ քու սրտիդ և ո՛չ քու մտքիդ համար։ Ամէն անդրադ ժամերուս քեզ գրելու պիտի դործածեմ. ատով պիտի սփոփեմ սիրտս, պիտի կարծեմ քեզ հետ խօսիլ, և այս քաղցր պատրանքը քու հեռակայութեանդ համար ունեցած վիշտս պիտի մեղմացնէ։

Եւ դու աղջի՛կս, յաճախ գրէ՛, գրէ՛ ինձ, ոչ թէ իբրև մօրդ, այլ իբրև բարեկամուհիի մը՝ ուրկէ մարդ բան չծածկեր։ Հաղորդէ՛ ինձ տագնապներդ, վշտերդ, տարակոյսներդ, կամ եթէ չունիս գրելու բան, գրէ՛ ինձ գէթ թէ կը սիրես զիս միշտ։

[Թուական]

* * *

2. Պատասխան։

Սիրելի՛ մայրս,

Ընդունեցի նամակդ և յափշտակութեամբ կարդացի զայն. կրկին կարդացի, ուրախութեան արցունքներովս ծածկելով զայն։ Ի՜նչ տարբերութիւն հեռակայութեանս առաջին օրերէն վերջ այժմու վիճակս։ Երբ հոս եկայ, ո՞րչափ յուզուած էի. արցունքի անզուսպ հեղեղներ կը պոռթկային սրտէս, որովհետև քեզ կը փնտռէի և ոչ մէկ տեղ կը գտնէի. կը յիշէի քաղցր գգուանքներդ, որոնցմէ զրկուիլ շատ ծանր էր սրտիս։ Այլ, մա՛յր իմ, թէև դժուարին է բաժնուիլ քենէ, բայց կը մնամ այս դպրոցին մէջ, որովհետև գիտեմ թէ իմ օգտիս համար զիս հոս դրած ես։ Խոստացած ես գրել ինձ յաճախ. միշտ թղթերդ կը հաստատեմ սիրուելու համար հեռաւորութեանդ վշտերէն։ Վստահաբար կը սպասեմ տեսնել կատարումն այն խոստման, զոր ըրած ես նամակներդ ստէպ գրելու մասին։ Վստահ եղիր հնազանդութեանս, խորհուրդներէդ օգտուելուս, մանաւանդ այն ջերմ սիրոյն՝ որով ի սրտէ կը գրկեմ զքեզ։

[Թուական]

* * *

---

3. Ընկերուհի մը իր ընկերուհիին։

Սրտակի՛ցդ իմ,

Կա՞յ արդեօք բառ մը՝ որ բացատրէ կրած բոլոր

տարնապներս քան հիւանդ բառն։ Հիւանդ եմ, ամէն ինչ մոայլ կը տեսնեմ, ամէն ինչ տխուր։ սենեակիս լռութիւնը կը խանգարի ընդհատ ընդհատ հառաչներով, բացականչութիւններով։ Չեմ այլ ուս այն զբաղարթ աղջիկն, դալկահար և բոլորովին հիւծեալ կը սպասեմ ժամէ ժամ յուսոյ հրնշտակին։ Մայրս, գորովալից էակ, կը խրախուսէ զիս կռուիլ քաջաբար ցաւոց դէմ, բայց ի՞նչպէս կարող է տկար օրիորդ մը կռուիլ։ Նա միայն աղօթել գիտէ, համակերպիլ անողոք բաղդին։ Այլ դեռ մարած չեն բոլոր յոյսերս, և միթէ կանուխ չէ՞ աշխարհէ մեկնիլ, հոն՝ ուր սիրելիներ ունիմ։ Կ'զգամ թէ յուսահատութիւնն ոճիր է, և կեանքն պարգև է երկնային, երջանկութի՛ւն, զոր ընդերկար պիտի վայելեմ անշուշտ և ապա գոհութեամբ պիտի մեռնիմ։

Կ'աղաչեմ որ նամակներդ ստէպ գրես։ ես չեմ կարող այս վիճակիս մէջ յաճախ գրել։ կը դողդոջեն ձեռքերս, և միտքս կը նմանի գրքի մը՝ որուն թերթերը ցրուած են։ Ներողամիտ եղիր։ Ի քաղցր տեսութիւն։

[Թուականն]

* * *

---

4. Պատասխան

Քաղցրի՛կդ իմ,

Այժմ աւելի կը տխրիմ հեռակայութեանդ պատճառաւ, վասն զի այս տառապագին օրերուդ մէջ կ'ուզէի գալ և սփոփել քեզ, խանդակաթ մօրդ հետ բաժնել ծառայութիւնն, զոր կը յուսայի մատուցանել քեզ։ Քեզ հետ ի միասին կ'ուզէի աղօթել և երկնա-

յին գթութիւն հայցել ապերջանիկ վիճակիդ համար։ Բայց թէպէտև հեռու, սակայն գիտեմ թէ կը հաւատաս հոգւոյս թրթռալն քու անարիդ վերև։ Հաւատա՛ նոյնպէս ի՛է երբ քանաս սենեկիդ պատուհանը. և գարնանաբեր ճառագայթներու հետ ներս գայ չունչ զեփիւռին հովահրելու տրտմալից ճակատդ, հաւատա՛, կ՝ըսեմ, քո՛յր իմ, թէ սիրելւոյդ չունչն է որ կը համբուրէ քեզ։ Ծաղկանց բոյրը չունի մեր սիրոյ քաղցրութիւնը։

Կը մաղթեմ որ յառաջիկայ նամակդ չգրես դողդոջուն ձեռքերով, և դրիչդ դարձեալ ընդ առաջնոյն բացատրէ ներքին զուարթութիւնդ՝ որ միշտ անմեղութեանդ յայտարար է։ Քոյդ յաւէտ

[Թուական]

* * *

5. Ընկերուհի մը իր ընկերուհիին։

Սիրեցեա՛լ ընկերուհիս,

Ձեր հեռաւորութեան միջոցին միակ փափաքս է նամակ ուղղել Ձեզ. այս կերպով միջոցն կտրել անցնիլ և գալ Ձեր մօտ, խօսիլ Ձեզ հետ և յաղեցնել հոգւոյս ծարաւը։ Ի՞նչ է արդեօք Ձեր լռութեան պատճառը. այս է որ գիս ուզի կը տխրեցնէ. ես ինձ կը հարցունեմ. ի՞նչպէս է արդեօք քաղցրիկ քոյրս. և ձայնիս ոչ ոք կը պատասխանէ։

Այսուհետև ատէպ չպիտի գրեմ նամակ, զի թղթակցութիւնն ալ պատրանք մ՝է, ես կ՝ուզեմ չունչ ի չունչ միանալ, մէկմէկու քով սրտէ սիրտ խօսիլ. ի զո՞ւր կը թափառին նայուածքներս բնութեան, երկնի-

Հքեզ տեսարաններուն վրայ. կուզեմ մանաւանդ որ մեր նայուածքներ իրարու մէջ ամփոփին, մէկ խօսքով ձեր մօտ ըլլալ կը ցանկամ։

Կը փակեմ թուղթս, անկեղծ սրտով համբուրելով Ձեզ։

[Թուական]

* * *

---

6. Մայտա Տիկին Սիրայի։

Տարաբաղդ Հրանոյշի օրերը վերջանալու մօտ կը թուին։ Մեր ընկերուհիները անոր համար անհրաժեշտ պէտք մ'եղած է. հետեւապէս երբ անկարելի է անոր շրջագայութեան երթալը՝ իր տանը մէջ կ'ընկերանանք իրեն։

Անընդհատ կը խօսի կոյս երեւակայութեան երազներուն վրայ որք կենաց երազին մէջ պիտի անհետանան։ «Աւա՜ղ, կ'ըսէր, երբէք կեանքն այնքան սիրելի չթուեցաւ ինձ որչափ արդ որ խոյս կուտայ ինձմէ։» Ուրիշ անգամ մ'ալ կը մրմնջէր. «Ես վայրենի անտառ մ'եմ որ իբր շող ճաճանչեցի միայն չանթերուն փայլը որ անոր գագաթը լուսաւորեց։ Կեանքս ճերմակ էջ մ'է ուր ո՛չ մի սիրտ անունը գծեց, այլ մահը միայն իր սեւ գրոչմը դրաւ հոն։ Գիտնայիք թէ ո՛րքան աղեւալի է հրաժարիլ կենաց բոլոր վայելքներէ։ Ես ալ հոգի մ'ունիմ ուրիշներուն նման, ես ալ երիտասարդ եմ, ես ալ գիտէի սիրել, գիտէի ժըպտիլ երկնից և ծաղկանց։ Եկայ, տխուր վկայ մը հանդիսացայ կենաց վայելից, և առանց մասնակցելու անոր, վշտերս ուսիս վրայ բեռնաւորած՝ մահուան մութ կայանը կ'իջնամ տրտմայոյզ»։

Օր մը իր վիճակը սաստկացաւ յանկարծ։ Ցուլիանէն տուն խրկեցի, և ես գիշերն ի բուն հակեցի հիւանդին վրայ՝ իբրև մայր իր սիրելի որդեկին։ Կը նայէր ինձ երախտագէտ աչօք և կ'ըսէր. «Ո՛րչափ պիտի պաշտէի զքեզ թէ ապրէի. բայց երկինքէն վըրաղ պիտի հակեմ։ Դու մեղմացուցիր ճակատագրիս դառնութիւնն այս վերջին օրերուս մէջ, և ես կ'օրհնեմ զքեզ ի փոխարէն զի չունիմ այլ ինչ նուիրելու բացի օրհասական հոգւոյ մը օրհնութիւններէն»։

Հէ՛ք աղջիկ, կարծես յուսահատութիւնը զինքը ամէն վայրկեան կը կեղեքէ։ «Ա՛հ, ըսաւ, կենացս հորիզոնը միշտ մթապատ և սպառնալից էր։ Երիտասարդութիւնս գարուն չունէր. մինչ ծաղիկներ կ'որոնէի, տեսայ յանկարծ փոս մը որ կը բացուէր ոտիցս ներքև. նայեցայ անդ, տեսայ մահը, որ կը ժպտէր ինձ, և դողասարսուռ աչքերս կափուցի։» Մահուան մերձաւորութիւնը այսպէս զգալ՝ հոգւոյն համար անյատակ անդունդին մէջ թաւալիլ է շարունակ։

[ՄՍՑՏՍ] ՍՐԲՈՒՀԻ ՏԻՍԱՔ

---

7. Ուսանողի մը իր մրցանակեն զրկուելուն առթիւ։

Սիրելի Պարոն,

Ինչո՞ւ ցաւիս, ինչո՞ւ տխրիս, միթէ նուա՞զ փութկոտ էիր, որ մրցանակէդ զրկումը քեզ վիշտ կը պատճառէ։ Եթէ չգիտնամ պատճառն քննութեանց օրերուն բացակայ ըլլալուդ, չպիտի զարմանամ տխրութեանդ համար։ Բոլոր դպրոցը գիտէ թէ դուն յառաջադէմ

ներէն մին եղած ես միշտ, և մանաւանդ առաջինն։ Անցեալ տարի Պ. Տեսուչն գոհութեամբ հրատարակեց քու յաջողութիւններդ մրցանակներու հանդիսին մէջ։ Եւ ես ու ինձ հետ բոլոր ներկայ եղողներն մանրամասնեցին աւիւնով ծափահարեցին քու բեմին առջեւ երեւիլդ։

Մի՛ վշտանար, սիրելի՛ պարոնս, այլ ընդհակառակը գոհ եղիր, որովհետեւ այս տարի, երբ Պ. Տեսուչը մի առ մի աշակերտաց անուանքը կը կարդար, շատեր իրարու կը հարցունէին. Ո՞ւր է Պետրոսը, անցեալ տարուան առաջին աշակերտը։ Ես շատ ուրախացայ որովհետեւ տեսայ թէ թէպէտ փոքր դեռ, այլ շահած ես ատոյգ արժանեաց համբաւ։ Անիսոյթ եղիր, թող ուրիշներ փառաւորուին. առիթ քու արժանիքդ երբեք չպակսիր։ Վայելէ ուրախ սրտով ամառնային մեծ արձակուրդը, և վստահ եղիր թէ յառաջիկայ տարին պայծառ դէմքով պիտի չահիս աշխատութեան անթառամներն։

Համբերէ՛, հեռու չէ դալ տարին, ժպտագին ընդունէ բախտին ամէն վիճակ, և թող սիրտդ անսասան մնայ ամէն դիպուածի առջեւ։

Բարեկամդ

[Թուական] ***

---

8. Հայր մը իր աղջկանցն։

Սիրելի՛ աղջիկս,

Քեզ կը յղեմ ահա մի քանի գրքեր՝ որոնց մասին ըսած էի երէկ գիշեր, և կը խնդրեմ որ ընդունիս զա-

նոնք իմ սիրոյս և յարգանքիս իբրև թեթև նշան մը։ Անոնք գրուած են գիւրին ոճով մը և կը պարունակեն շատ գործնական գիտութիւն։

Յորհուրդ կուտամ քեզ՝ կարդալ գրիչ ի ձեռին, և նշանակել փոքր տետրի մէջ կարճ ծանօթութիւններ անոնց վրայ՝ որոնց մէջ կը գտնես հետաքրքրական բան մը և կամ ինչ որ օգտակար կ՚երեւայ քեզ, և ահա այս պիտի ըլլայ գիւրին միջոց մը յիշողութեանդ մէջ տպաւորելու մի քանի տեղեկութիւններ։ Եւ որովհետև կան գիտական բառեր, որոնց գուցէ չես հանդիպած սովորական ընթերցումներուդ մէջ, և հետեւաբար չեն կրնար ընտանի ըլլալ քեզ, կը կարծեմ որ օգտակար պիտի ըլլայ ձեռքիդ մէջ ունենալ լաւ բառագիրք մը, որպէս զի նայիս այն՝ բառը՝ որուն ճիշդ իմաստը թերեւս չգիտես։

Յանդգնութ հայրդ

[Թուական]

* * *

---

9. Հոր մը նամակը իր որդւոյն ուղղուած։

Սիրելի՛ որդեակս,

Կարելի եղածին չափ հաճեցիր եղ, հաճեցողութիւնը այն լաւագոյն ձիրքն է՝ որուն կ՚ընկերանայ ստոյգ արժանիքն։ Հաճեցողութիւնը իրին կը գրաւէ ամէն սրտեր, մինչդեռ ինքնահաւանութիւնն և անտրեսութիւնը կը խորշեցնեն։ Սիրելի չըլլար այն մարդը՝ որ միշտ կը պարծի և չափազանց իր վրայ կը խօսի։ Ընդհակառակն այն որ կը ծածկէ իր արժանիքը, և այլոց արժանիքը երեւան կը հանէ, սակաւ կը

խօսի և համեստօրէն իր անձին վրայ, նա սրտեր կը շահի և յարգելի ու սիրելի կ'ըլլայ։

Բայց կայ նոյնպէս բաւական տարբերութիւն համեստութեան և չար ամօթին մէջ. որչափ որ համեստութիւնը գովելի է, այնքան չար ամօթը ծաղրելի է։ Պէտք չէ ըլլալ ապուշ մը, և ոչ աներես մը. պէտք է գիտնալ երեւիլն, խօսիլ անձանց հետ և պատասխանել առանց չփոթելու։

Դաշտաբնակ մը կ'ամչնայ, երբ ընկերութեան մէջ երեւի. կը չփոթի, չգիտեր ի՛նչ ընել, երբ իրեն հետ կը խօսուի և չփոթելով կը պատասխանէ գրեթէ կակղելով, մինչդեռ աշխարհի մարդը վստահաբար կը ներկայանայ, կը խօսի իրեն անծանօթ մարդոց հետ, առանց չփոթելու, գրեթէ բնականկերպով։ Ահա ի՞նչ որ կը կոչուի կենցաղապիտութիւն, որ շատ կարեւոր մասն է ընկերային յարաբերութեանց։

[Թուական]

* * *

(Թարգմ.)

---

10. Նամակ հիւանդ օրիորդի մը իր հանիին։

Սիրելի՛ հանիս,

Զգիտէ՛ք թէ ո՛րչափ լաւ է հոս. առողջութիւնս ամէն օր կը վերադառնայ։ Ժամանակէ մ'իվեր բաւական զօրաւոր եմ չորս էջեր մրոտելու համար, այլ եւս իրերը նոյն աչքով չեմ դիտեր։

Անշուշտ որովհետեւ Ձեզի հետս մեռնիլ շատ դառն պիտի ըլլար. գոնէ խնամքներ չպակսեցան և մայրս շատ անձնուիրութեամբ ծառայեց։ Ի՞նչպէս պիտի փո-

խարինեմ անոր։ Ցանձնարարած էք ինձ գրել Ձեզ թէ ի՞նչպէս է մեր տունը։ Հին չէնք մ'է այն, ուր առաջ չէի հաւատար թէ կարելի է բնակիլ։ Կոտրած սանդուղէ մը վերնագաւթակը կ'ելլուի, մեխակներ և պատուակներ կը սպրդին ամէն ծերպերու մէջ, և ճամբան պարտէզի պէս անուշ կը հոտի։ Տունը ծառերէն վեր կը բարձրանայ, սենեակները իրարու վրայ չեն. կ'ըսուի թէ երկրորդը մինչև գետնայարկը կ'երթայ երկրաշարժի ատեն. Այս թոհ ու բոհին մէջ պէտք է Ձեր աղջիկը փնտռել, սիրելի՛ հանիս։

Սենեակս տան լաւ փակուած սենեակն է, մեծ է և վերէն վար իւղաներկ. ներկը թղթէն աւելի կը սիրեմ, անկողինս, աթոռներս և թիկնաթոռս լաւ կարգի դրուած են, պատուհաններս արեւելքի և հիւսիսի կողմն են. օդն և լոյսը տունս կը մտնեն առաւօտեան 9ին ժամէն։ Կ'ելնեմ, կը հագուիմ և մի առ մի պատուհաններս կը բանամ, որպէսզի ծովուն օդը խըստութեամբ չիգայ։ Տասներորդ ժամուն պարտէզ կ'իջնեմ և կը սկսիմ զուարթութեամբ ծառուղիներու մէջ շրջիլ ծաղկանոց մէջ։

Ո՜րչափ գեղեցիկ է երկիրը, ի՜նչպէս ամէն երեւոյթ երանաւէտ է. և ի՜նչ տխուր պիտի ըլլար թողուլ այս հեշտալի աշխարհը, զոր Աստուած ստեղծած է մարդուն հաճոյից համար։ Թռչուններ իրենց քոյները կը դնեն ծառերուն մէջ, կապոյտ ծովը մեղմով կը խըստըզէ ափերու աւազը. արեգակն իր ոսկի ճառագայթները կը պարզէ ժժգոյն և նիհար իմ խեղճ ձեռքերուս վրայ. կը զգամ թէ արիւնն երակներուս մէջ կը հոսեցնէ Ձեր ձայնին պէս ապդու. և քաղցր օդ մը։

Սիրելի՛ հանիս, վայրկենապէս կ'երեւակայեմ թէ

այս արեգակը, այս ծաղկեալ ծառերն, այս երգեցիկ թռչունները բարեկամներ են որ ինձ համար շնորհակը հայցեն և չպիտի թողուն իսկ մեռնիլ։ Իրաւ է որ քիչ տեղ կը գրաւեմ, բայց չեմ ուզեր մեռնիլ։

Մնա՛ս բարով, մեծ մայր իմ, այլ թէ էք ինձ տա-
ճարէ (Թարգմ.)

---

11. Տիկին Սեվիճեէ իր աղջկան։

Աղջի՛կս,

Ի՞նչ օր էր որ մեզ մի կամէ՛կէ հեռացուցիր։ Ի՞նչպէս երեւցաւ Քեզ, իմ ես զգացի զայն անչափ դառնութեամբ և ցաւով, ա՛րչափ կ՚երեւակ ուէր, և որոնց համար երկար առեն կը կասկածէի։ Ի՞նչ վայրկեան էր այն՝ որ մեզ իրարմէ բաժնեց։ Ի՞նչ մնաս բարով և ի՞նչ տխրութիւն՝ մեկուսանալ, մինչ այնչափ հաճելի է միասեղ գտնուիլ։ Աւելի խօսիլ չեմ ուզեր այդ մասին և ոչ հուշակել այն մոռածումներն՝ որոնք սիրտս կը ճնշեն, կ՚ուզեմ միայն բարի Քեր ընչութիւնս և ամէն ինչ որ ըսած էիք ինձ այս մասին, որուն համար կը հիանամ Քեր վրայ։ Սակայն և այնպէս ինձ թուեցաւ թէ դուք փոքր ինչ յուզուած էիք զիս գրկելու պահուն։ Իսկ ես Փարիզ դարձայ, ինչպէս կրնաք երեւակայել։ Պ. ու Գուլանժ վշտակից է վիճակիս։ Գացի Ռէցի կարտինալին քով, ուր վիշտս կը վերանորոգուի. մարդ խրկեցի դուրս ապաչելու զիս առնելու եկող Պ. լա Ռոշֆուգոյի, Տիկին ու Լաֆայեթի, և Տիկին ու Գուլանժի՝ որ հաճին այդ պատիւն ինձ չընել։ Մարդ պէտք է իր տկարութիւնները ծած-

ԿԷ զօրաւորներու առջև։ Պ. Կարտինալը կարեկից ճեղաւ իմ ակարութիւններուս. այն բարեկամութիւնն՝ զոր ունի Ձեզ համար, զինք շատ զգայուն կ՚ընէ Ձեր մասին։

Մի՛ պարսաւէք, աղջի՛կս. ինչ որ զգացի, երբ տուն դարձայ. ի՞նչ տարբերութիւն, ի՞նչ մենութիւն, ի՞նչ տխրութիւն. տեսնել Ձեր սենեակն, առանձնասենեակն, Ձեր պատկերն, և չգտնել Ձեր սիրեցեալ անձն. Պ. Կրինեան լաւ կը հասկնայ ինչ որ կ՚ուզեմ ըսել և ինչ որ զգայի։ Հետ եկայ օրը, այսինքն երէկ, ժամը 5ին արթնցայ, դայլ Գորբինէլլին առի, որպէս զի դայ հոս աբբային հետ։ Անդադար կ՚անձրեւէ, և կը վախնամ թէ Պուրիոնների Ձեր ճամբանները աւրուած չըլլան։ Հոս կը կարդանք առածներ, զորս Գորբինէլլի ինձ կը մեկնէ։ Նա կը բաղձայ սրտիս զգացումները սանձելը ինձ սորվեցնել։ Եթէ այդ գիտութիւնը ստանամ, իմ ուղեւորութենէս մեծ բան մը շահած պիտի ըլլամ։ Վազը կը գտնամ, այս հանգստեան վայրկենին պէտք ունիմ, գլուխս քիչ մը հանդարտեցնելու և կնրպով մը անձիս տէր ըլլալու։

---

12. Նամակ մօր մը իր աղջկան։

Ինչ որ ըսիր ինձ Օր. ...ի նկատմամբ քու նամակիդ մէջ, ինձ կարծեցուց թէ դուն գեղեցկութիւնը մեր սեռին մեծագոյն արժանիքը կը համարիս, և թէ կին մը այն առեն միայն յարգելի է, երբ գեղեցիկ է։ Այդ բան՝ երիտասարդներու և նաներամիտ մարդոց սխալանքն է, որոնք իրենը իրենց արտաքինէն կը գտնեն։ Արդարև ի՞նչ օգուտ ունի կնոջ մը արտաքին

ամէն շնորհներով լի ըլլալը, եթէ չքնաղ տրտաքին երեւութի մը տակ յոռի նկարագիր մը և վատթար սիրտ մը ծածկէ։ Նոյնչափ պիտի սիրէէ գեղեցիկ պատկեր մը կամ արձան մը, որովհետև անոնք իմ նայուածքս կը զօշտեն, բայց խորշելի չեն զար մտքիս, մինչդեռ այս հպարտ ու սէգ գեղեցիկ կիներն ընդհանրապէս կը զզուեցնեն իրենց շուրջը գտնուողներն. արդ որովհետև իրենց անձերը տեսակ մը գիցուհիներ կը համարին, կ'երեւակայեն թէ ամէն ոք պարտի խոնարհիլ իրենց առջև, թէ ամէն ոք պարտի զիրենք պաշտել։ Ընդհանրապէս անոնք միմիայն իրենց անձերը կը սիրեն ու կը յարգեն, և բոլոր մնացեալն կը դիտեն գթոյ և արհամարհանքի նայուածքով։ Բայց մարդ անոր փոխարէնը լաւ կուտայ. եթէ երբեմն անոնց սէր ընծայուի, այդ շատ անգամ ուրիշ բան չէ բայց եթէ մառուցում մը, որ ոչ այնչափ մարդոց այն մասին ունեցած յարգանքէն յառաջ կուգայ, որչափ պատշաճութենէ և մարդոց իրենք զիրենք յարգելէն։

Գեղեցկութեան փայլը յաճախ համեմատուած է վարդի փայլին հետ, և շատ իրաւացի է այս։ Հիւանդութիւն մը բաւական է զայն եղծանելու համար. կը փայլի այն կենաց գարնան մէջ, ուրկէ յետոյ կը խամրի։ Եւ այն ատեն ի՞նչ կ'ըլլան այն կիներն, որոնք իրենց գեղեցկութենէն զատ ուրիշ արժանիք չունին, և որուն շնորհիւ միայն կը մնծարուէին. կամ ծաղրելի կը դառնան կարծելով ինքզինքնին և կամ ուզելով երեւալ պարձեալ այնպէս, ինչպէս չեն այլեւս, և կամ եթէ շիտակը խորհելով՝ կ'որոշեն ահա հրաժարիլ աշխարհէ, որ իրենցմէ կը խորշի և կ'արհամարհէ զիրենք. այն ատեն նախանձը կը կրծէ զիրենք, տողտուկը կ'ընկճէ և դայրոյթը կը տանջէ։

Այսպէս չէ սակայն անոր համար որ իր չունեցած դէմքի գեղեցկութեան տեղ ստոյգ արժանիք ստանալու հետամուտ է։ Արդարև եթէ նուազ կը մեծարուի, նը-ւազ վտանգներու ենթակայ է. եթէ փառքը նուազ չքեղ է, բայց աւելի ամրիծ է. եթէ անոր վրայ նուազ կը խօսուի, բայց աւելի կը գովուի, եթէ անոր այն-չափ նայուածքներ չեն ուղղուիր, բայց աւելի կը յար-գուի. եթէ իր բարի յատկութիւնները կ'ընծայեն անոր տեսակ մը ազդեցութիւն սրտերու վրայ, բայց այդ ազդեցութիւն երբեք վաղանցիկ չէ որպէս գեղեցկու-թեանը։ Ժամանակը, որ կը խափանէ գեղեցիկ կնոջ մը փայլն ու գեղն, ընդհակառակն նոր փայլ մը կու-տայ առաքինի և սիրելի աղջկան արժանիքներուն. մարդ ընդհանուր կը ճանաչայ դէմքի հրապոյրներուն զգայուն ըլլալէ, բայց իմաստութեան և բարութեան հրապոյրներուն միշտ զգայուն է։

[Թարգմ.]

---

13. Որ մը նամակն իր աղջկան:

Սիրելի ս,

Նամակդ զիս ուրախութեամբ լեցուց և համոզուե-ցայ թէ բարի սիրտ մը կը կրես, և այդ բանին միշտ կը փափաքիմ քեզի համար։ Ստոյգ է որ սրտի բա-րութիւնը երկնքի մէկ պարգեւն է. ըստ իս պատուա-կանագոյն է այն, և քու նամակովդ հասկցայ թէ եր-կինք զայն շնորհած է քեզ։ Նա՝ որ ի քնէ բարի սիրտ ունի, զգացող է այն բարիքներուն՝ զորս կ'ընդունի

և կը զգուշանայ, զի մի՛ պուցէ ուրիշներու փոր ինչ-ինչ պատճառէ։ Զարախոսութեան անձնատուր չըլլար։ Իր ընթացքին կանոն կ'առնէ քրիստոնէական գութն։ Երբ մարդ բարի սիրտ ունի, ոչ միայն չշատանար ուրիշներու համբաւին խնայելով, վշտացուցիչ բան մը անոնց չըսեր, այլ հետամուտ կ'ըլլայ անոնց օգտակար ըլլալու, ամէն բարիք ընելու անոնց, որչափ որ կրնայ, տկարներուն նեցուկ կը հանդիսանայ, տառապեալներուն սիրտն է, և ուրիշին երջանկութեան համար ամէն բանի հոգ կը տանի։

Կը փափաքիմ որ խայթող խօսուածքի և հնարագէտ չարամտութեան տեղ՝ որոնցմով ոմանք կը ջանան իրենց անձը կարեւոր ցուցնել աշխարհի մէջ, իգական սեռի անձեր, որոնց ընդհանրապէս վիճակուած կը համարուի քաղցրութիւն, երեւնան միայն քաղցրաբարոյ ձեւերով, հաճոյական դէմքով, սրտագեղումներով այնպիսի բարութեան մը՝ որ իրենց շուրջը բոլոր պտնուողներուն վրայ տարածուի։ Բայց շատերը երկչոտութեամբ կամ պատշաճութիւններ չկատարելու վախով, չեն համարձակիր իրենց բնածին բարութեան հակամիտութեան հետեւելու և կը համոզուին թէ յարկելի ըլլալու համար պարտին կեղծիքով ցուցնել անտարբեր և անուշադիր կերպարանք մը, մանաւանդ երբ այրերու ընկերութեան մէջ ըլլան։

Ճշմարիտ է որ անոնց հետ միշտ զգուշաւոր վարմունք ունենալու ենք, վասն զի երբ կը տեսնուի մատաղատի կին մը և մանաւանդ ծաղկահասակ օրիորդ մը, որոնք այրերու խօսակցութեան կը խառնուին, հաճելի կերպով կը ժպտին և անոնց ընտանենալուն թոյլտուութիւն կ'ընեն շատ ընտանի կերպով, գէշ պաղա-

փար մը կը ծնի մեր մէջ։ Բայց կարելի է ըլլալ բա-
րի, հաճոյակատար, սիրուն, առանց ծայրայեղու-
թեանց մէջ ըլլալու։ Կարելի է ցուցնել քաղցրու-
թիւն, պարկեշտութիւն, առանց դոյզն նշանը տալու
պչրողութեան. և ոչ միայն այլ սիրելի յատ-
կութիւնները մեզք մը չ'կտուր, երբ արդար սահ-
մաններու մէջ բովանդակուին անոնք, այլ միշտ կը
դուէ զանոնք։

Գիտես, աղջի՛կս, թէ քան մը պակաս չըրի քու
հաճոյքիդ համար, բայց քու փափաքներուդ աւելի կա-
մաւ մոխիկ պիտի ընեմ, երբ գիտնամ թէ քու քաղց-
բացդոյն հաճոյքիդ կարդը կը դասես այն գոնութիւնը՝
զոր մարդ կ'ունենայ սիրելով ուռուապեալները։ Այն
ատեն սիրաս պի՛ի ընդարձակուի, ձեռքս պիտի բաց-
ուի, և քու փառքդ ապահովող պարկեշտները նուազ
պիտի համարիմ, երբ դուն ուրիշին երջանկութիւնը
տաս։

(Թարգմ.)

---

15. Մանկան մը ուղղուած նամակ։

Երկար ժամանակէ ի վեր Ձեզ պատասխան մը
պարտիմ. բայց կը տեսնէք, աչքերս ակար են, ուստ
ի պէտք է զիս չքմեղացնէք։ Բժիշկները կ'արգիլեն
ինձ գրել. կը հնազանդիմ բժիշկներուն, ինչպէս դուք
կը հնազանդիք Ձեր մօրը։ Կեանքը հնազանդելով
կ'անցնի։ Մի՛ մոռնաք այս բանը։ Բայց դուք որ
փոքր էք, ինձմէ աւելի երջանիկ էք։ Ձեր հասակին
մէջ հնազանդութիւնը միշտ քաղցր է. իսկ իմ հասա-

Կիս մէջ երբեմն գառն է։ Կը տեսնէք, որովհետև ինձ Կ'արգիլուի Ձեզ գրել։ Ողջո՛յն, փոքրիկ բարեկամս։ Եղի՛ք մեծ և իմաստուն միանգամայն։

Վ. ՀԻԿՕ

ԸՆԴԼԱՑՆԵԼԻ ՆԻՒԹԵՐ

1. Հիւանդ ընկերոջ մը ուղղեալ նամակ. — *Ձեր ընկերներէն մին չէ կրցած դպրոց գալ, որովհետեւ հիւանդութեան պատճառաւ ստիպուած է սենեկէն դուրս չելնել։ խնդրած է ծեզմէ՝ որ իրեն իմացնէք ամէն օր այն դասերն՝ զորս կուտայ ուսուցիչն իր։ բացակայութեան միջոցին։ Այս կերպով պիտի կրնայ հետուէն հետեւիլ դասերուն՝ իր ունեցած գրքերուն շնորհիւ։ Իրեն կը պատմէք նամակով մը ինչ որ պատահած է երէկ դասարանին մէջ։ Կը վերջացնէք մաղթելով որ շուտով ապաքինի։*

2. Դրատիս բարեկամներ. — *Ձեր անցեալ տարուան ընկերներէն մին ցակոբ շատ օրերէ ի վեր դպրոց չի գար. ամէնքդ ալ կը փափաքիք գիտնալ պատճառը։ Ձեր ուսուցչին հարցուցիք թէ ինչո՞ւ չի գար. եւ նա կ'ըսէ. ցակոբ աղքատ է, շնորհքով ըզգեստ չունի, որ դպրոց գայ։ Այն ատեն հանգանակութիւն կ'ընէք եւ զգեստ առնելու համար պէտք եղած դրամը կը ժողվէք։ Այս պատմութիւնը ուզածնուդ պէս աւարտեցէք եւ այս ամէնը գրեցէք Ձեր բարեկամներէն մէկուն։*

3. Փոքրիկ տղեսիրուհիին. — *Ձեր մայրը հեռու տեղ մը ճամբորդած է. իր բացակայութեանը տունը դուք կը կառավարէք։ Ձեր բարեկամուհիներէն մէկուն նամակով մը կ'իմացնէք թէ ի՞նչպէս կը կատարէք Ձեր այս նոր պաշտօնն։*

4. Ֆմեղաւորի գիր. — *Ընկերոջ մը. — Պարագայի մը մէջ, զոր կը նշանակէք, բարկացած էք ձեր ընկերներէն մէկուն դէմ եւ իրեն հետ կոշտ կերպով վարուած։ Արդ կը զղջաք եւ նամակով հաշտութիւն կ'առաջարկէք իրեն։*

5. Սղեսալի ուխտեմորիւն մը. — *Սոսկալի փոթորիկ*

մը պատահած է քիչ ժամանակ առաջ ձեր բնակած տեղը. ձեր դպրոցական ընկերներէն մին՝ որ նոյն միջոցին դաշտին մէջ կը պտըտէր, անխոհեմութեամբ ապաստանած է ծառի մը տակ եւ շանթահարուած է։ Այս դէպքը պատմեցէք ձեր բարեկամներէն մէկուն։

6. — Ուսուցչի մը հիւանդութեան առթիւ ուղղուած նամակ։

7. Քաղաքն եւ գիւղը. — Ձեր նախկին ընկերն Պօղոսէներեք տարիէ ի վեր քաղաքը կը բնակի եւ նամակաւ մը Ձեզի կը յորդորէ որ դուք ալ քաղաքը բնակիք. բայց դուք չէք ընդունիր իր առաջարկն. կ'ուզէք գիւղ մնալ, ըսէ՛ք թէ ինչ պատճառներով նախամեծար կը համարիք գիւղը բնակիլ։ Պօղոսին պատասխանեցէք։

8. Օգտակար անասուններ. — Ձեզ ծանօթ ընտանի կենդանիներու մէջէն ընտրեցէք երեք հատ, զորս ամենէն աւելի օգտակար կը համարիք մարդուն եւ ցոյց տուէք այն ծառայութիւնները՝ զորս անոնք կը մատուցանեն։

9. Ձամբեցեք ձեր բերութիւնները խոստովանելու. — Պետիկ, փոքրիկ դպրոցականը դասարանին մէջ ջորեակներ թռուցած է. այս դէպքը մեծ աղմուկ յարուցած է աշակերտաց մէջ։ Ուսուցիչը ուզած է իմանալ թէ ո՞վ է յանցաւորը։ Պետիկ չի համարձակիր զայն ըսելու, բայց տունէն վերադառնալուն իր ուսուցչին կը գրէ իր յանցաւոր ըլլալը, կը յայտնէ զղջում, կը խնդրէ իր պատիժը. եւ միեւնոյն ատեն կ'ուզէ իր դասընկերները ազատել ընդհանուր պատժէն։ Կը խոստանայ որ ապագային այդպէս բան չպիտի գործէ։

10. Բարեկամուհիի մը. — Իմացած էք թէ ձեր բարեկամուհիներէն մին շատ յարգանք չընծայեր իր մեծ մօր նկատմամբ։ Կը գրէք նամակ մը՝ որուն մէջ կ'ընդլայնէք սա առածը. «Քու ծնողքիդ ծերութեան ատեն յիշէ՛ մանկութիւնդ»։

11. Ձեր մօրը. — Յայտնեցէք որ յանցաւոր եղած էք. — Իմացուցէք ձեր յանցաւորութիւնը եւ ներում խնդրեցէք։ — Ըսէ՛ք ձեր յանցանքը. — Դուք կը ցաւիք ասոր համար, որովհետեւ գիտէք թէ ինչո՞ւ համար ձեր հայրը ձեզ դպրոց դրաւ։ Խոստացէք այլ եւս յանցանք չգործել։

12. Նամակ հօր մը ուղղուած. — Հայր մը ամսէ մը ի վեր ուղեւորած է գործերուն պատճառաւ. իր որդին կը գրէ անոր

եւ մօրը ու եղբայրներուն ու իր վրայ լուրեր կը հաղորդէ։

13. Մայր մը իր աղջկանը՝ որ հեռու տեղ աշակերտ եղած է. — *Քու նամակդ մեզ շատ հաճոյք կը պատճառէ։ — Ամէն ծառայութիւն կատարէ՛ որչափ կրնաս. ընդունէ դիտողութիւններ եւ նոյնիսկ կշտամբանք. կը ցաւինք որ քեզի չենք տեսներ. — Աշխատէ՛ միշտ։ Մնաս բարով. Վերջաւորութիւն։*

14. Հրաժեշտի նամակ. — *Ձեր ուսուցչուհին դպրոցէն կ'ելնէ ուրիշ տեղ պաշտօնավարելու համար. ձեր ընկերուհիներն ձեզի կը յանձնարարեն անոր գրել յանուն ամբողջ դասարանին։ Ըսէք ձեր սիրելի ուսուցչուհւոյն թէ ո՛րքան ցաւ կը պատճառէ ձեզ իր հրաժարականն եւ խոստացէք իրեն թէ երբեք չպիտի մոռնաք իր աշակերտուհիներուն եւ ի մասնաւորի ձեզ համար ունեցած բարեսրտութիւնն։*

ԳԼՈՒԽ Ը.

ՉԱՆԱՉԱՆ ՏՈՄՍԱԿՆԵՐ

Ծնունդ :

Անհուն ուրախութեամբ կ'իմացնեմ Ձեզ թէ երէկ գիշեր արու զաւակ մը պարգևեց ինձ Աստուած ։

Մայրն ու աղեկը շատ լաւ են ։

[*Թուական*]

* * *

Մահ ։

Անհնարին ցաւով կ'իմացնեմ Ձեզ քաղցրիկ որդւոյս մահն ։ Անողոք փողացաւը խլեց զայն մեր գրկէն ։

Յուզարկաւորութեան ոխտը հանդէսը վաղը պիտի կատարուի ժամը ...։

Հարսնիքի հրաւիրագիրներ:

Տ.

Տիկին ... պատիւ ունի ծանուցանել Ձեզ ամուսնութիւն իր որդւոյն ... ընդ Օր. ...ի և խնդրել որ հաճիք Ձեր ազնիւ ընտանեօք ներկայ գտնուիլ Ս. Պատակի խորհրդոյն՝ որ պիտի կատարուի յառաջիկայ

Երկուշաբթի, Մայիս 31, ժամը 7ին ...ի բնակարան ... փողոց թիւ 10։
Պէյքոզ, 15 Մայիս 1931

Ուրիշ օրինակ (երկու կողմէն հրաւիրուած).

Տիկին Պայծառ Խանճեան պատիւ ունի ծանուցանել Ձեր Ազնուութեան իւր որդւոյն Պետրոս Խանճեանի ամուսնութիւնն Օր. Զարուհի Կիւմիւշեանի հետ։

Տէր եւ Տիկին Կիւմիւշեան պատիւ ունին ծանուցանել Ձեր Ազնուութեան իրենց դստեր Օր. Զարուհւոյ ամուսնութիւնն Խանճեան Պետրոս Էֆէնտիի հետ։

Եւ կը խնդրեն որ հաճիք **ընտանեօք** *ներկայ գտնուիլ Ս. Պրսակի արարողութեան՝ որ պիտի կատարուի Երկուշաբթի, Հոկտ. 2՝ ժամը 14ին Ղալաթիոյ եկեղեցւոյն մէջ։*

Շնորհաւորութիւնք պիտի ընդունուին Խանճեան բնակարանն Ղալաթիա, եկեղեցւոյ փողոց։
Ղալաթիա, 1931 Հոկտ. 6

Մահագրեր։

ԿԱՐԱՊԵՏ Էֆ. ՍԱՄԱՆՃԵԱՆ

Ցեռ կարճառեալ հիւանդութեան ինքեց իր մահկանացուն ի հասակի 59՝ ամաց, ի խոր սուգ համակելով իր ընտանիքը, ազգականներն և բարեկամներն։

Յուղարկաւորութեան տխուր հանդէսը պիտի կատարուի վաղը, երեքշաբթի, ժամը 8ին, Ս. Յովհաննէս եկեղեցւոյն մէջ։

Կէսիկ փաշա, 7 Յունիս 1932

ԳՐԻԳՈՐԻԿ

ՈՐԴԻ ՓԷՔՄԷԶԵԱՆ ՍԱՐԳԻՍ ԱՂԱՅԻ

Հանգեաւ ի Տէր հնգամեայ դեռածալիկ հասակին մէջ։

Յուղարկաւորութեան ոխտը հանդէսը պիտի կատարուի այսօր ժամը 10ին, Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյն մէջ։

Պալատ 8 1930

Պալեան, Սարգսեան, Թումաճանեան ընտանիքներ ..

ը ցաւ ի սիրտ կը ծանուցանեն դառնադէտ մահը

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՍԱՆԴՈՒԽՏ ՊԱԼԵԱՆԻ

իրենց քրոջ, զոքանչի, 70 տարեկան հասակին մէջ։

Յուղարկաւորութեան ոխտը հանդէսը պիտի կատարուի վաղը, ժամը 16, Ս. Յարութիւն եկեղեցւոյն մէջ։

15 Մարտ 1929, Բերա

Հրաւէրի տոմսակներ։

Տէր և Տիկին Բ. ... յարգանօք կ'ողջունեն Տէր և Տիկին Ս. ..., որոնց կ'ապաչեն որ հաճին գալ վաղը ժամը 9ին՝ միասին ճաշելու։

Պատասխան։

Տէր և Տիկին Ս. ... պատիւ կը համարին ուրախութեամբ ընդունելու Տէր և Տիկին Բ. ...ի հրաւէրը և կը խոստանան որոշեալ ժամուն ներկայ ըլլալ, ի միասին վայելելու հաճելի ժամեր։

Ուրիշ հրաւէր։

Սիրելի՛ բարեկամս,

Մեծ շնորհ մը կ'ընէք ինձ Ձեր ներկայութեամբ պատուելով մեր խոնարհ բնակարանը և մանաւանդ սեղանակից ըլլալով մեզ։ Ձուարթ և պարզ հոգիներ զարդ են այդ սեղանին։ Եկէ՛ք ուրեմն վաղընդեմոյթ։ Դուք պիտի աւելցնէք սեղանին հրապոյրը։

Պատասխան։

Սիրելի՛ բարեկամս,

Ոչ նուազ ուրախութիւն է ինձ վայելել այն պատիւը՝ որուն կ'արժանանամ այս անգամ եւս Ձեր կողմէ։ Հոգ տարէք որ գինին լաւ ըլլայ, որպէս զի մեր քանասուեղծութիւնը նոր թռիչ առնէ։ Սեղանին հրապոյրը կ'աւելնայ, երբ Ձեզ կ'ունենամ սեղանակից։

Հրաւէր ընտանեկան ոճով:

Լաւ խորոված հնդկահաւ մը, համեղաճաշակ լաթ-թակ, Սելանիկի գինի, արծաթծուն շմինէ մը, մանաւանդ ազնիւ ճաշակիցներ։ Բոլոր սառն-ք, սիրելիդ իմ Կարպիս, բաւական չե՞ն քեզի հրաւիրելու։ Ուրեմն եւ կո՛ւր չուտ. գեղեցիկ երեկոյթ մը պիտի ունենանք։

Ուրիշ օրինակ

Տիկի՛ն,

Սովորութիւնը, մանաւանդ զբօսանքի սէրը ինձ կը հարկադրեն վաղը պարտանդէս մը տալ. ոչինչ պիտի խնայեմ, որպէս զի այն արժանի ըլլայ ամէն ա-նոնց՝ որոնք իրենց ներկայութեամբ պիտի պատուեն զայն։ Բայց Դուք, Տիկին, Ձեր չնորհներով պիտի ըլ-լաք գլխաւոր հրապոյրը։ Ձեզմով պիտի գեղեցկացնէք երեկոյթը։ Ուրեմն մի՛ մերժէք ինձ այս պատիւը։

Հարսանեկան ծանուցագիր:

ՀՐԱՆՏ ԱՃԷՄԵԱՆ պատիւ ունի ծանուցանել Ձեր Ազնուութեան թէ այսօր կատարուեցաւ Պոյաճի գիւղի Երից Մանկանց եկեղեցւոյն մէջ իւր որդւոյն ԿԱՐԱՊԵՏ ԱՃԷՄԵԱՆի ամուսնութիւնը Օր. ՍԻՐԱՆՈՅՇ ՎԱՐԴԵԱՆի հետ։

Պոյաճի գիւղ 30 *Յուլիս* 1931

Կիրակամուտ օրհնակներ։

Նոր տարի մաղթել։

Գարեր Գաբրահամեան

Վ. Շ. Ն. Տ.

Ծնունդեան տօնի առթիւ։

Կը մաղթեմ որ Ծնունդը ծնի Ձեզ նոր բախտ, երջանկութիւն։

[Թուական]

Շնորհակալութիւն

Անուան տօնին առթիւ։

Ի սրտէ կը մաղթեմ Ձեզ ամէն երջանկութիւններով լեցուն կեանք մը։ Ամէն տարին թող աւելցնէ Ձեր փառքն, Ձեր յաջողութիւններն։

Հարսանեկան հանդէսի առթիւ:

Ձեր հարսանեաց հանդէսին կը յղեմ չքնաղ ծաղիկներ. կոխոտեցէք զանոնք եւ մտէք երջանկութեան դրախտը։

(Թուական)

Մտերմական:

Մեծ. . . .

Ես եւ Պ. Դարբինեան կ'ողջունենք Ձեզի: Իցի՛ւ երջանիկ պատեհութիւնն ունենանք Ձեզի տեսնելու:

(Թուական)

Ճամբորդ բարեկամի:

Զինջ եւ անամպ երկինք, զուարթ եւ կենցաղագէտ ուղեկիցներ, գործերուդ յաջողութիւն՝ Մաղթէ բարեկամդ

(Թուական)

* * *

Ընտանեկան ոճով:

Մեծ...

Անզգա՛մ, ինչո՞ւ չեկար երէկ գիշեր: Միթէ ժամադիր եղած չէ՞ինք։ Երեկոյթը ըսքանչելի եղաւ։ Քու բացակայութիւնդ զիս տխրեցուց։

(Թուական)

* * *

Հրաւէր

Ռեթէոս Սամուէլեան պատիւ կը համարի հրաւիրել, պ. ..., որ հանի գալ վաղը ժամը 7ին իր գրասենեակ.

[Թուական]

ՆՈՅԵՄԻ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Ոգոնէ Ճնորհքեան

Սիրոն Պապպեան

Գերա, Մթոբ փողոց

ԳԼՈՒԽ Ժ.

ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ՄԻ ՔԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐ

30 Հոկտ. 1888 թարիզ

Աղնիւ միւսիւ Փանոսեան,

Առի և սիրով կարդացի նամակդ, զի երբեմն հանդիպած ըլլալով ոտանաւորներուդ՝ ուրախութեամբ տեսած էի որ բանաստեղծի կոչումն ունիս։ Ես այն ոտանաւորներդ շատ աւելի կը սիրեմ քան այս երգիծանքդ։ Իմ բանաստեղծս, թերեւս գիտես արդէն, Լամարթինն է և Լամարթին չէր սիրեր երգիծանքը. չէր սիրեր կծու ծիծաղն ու քամահրանաց քահքահը. մարդկային շրթանց վրայ հաճելի կը հաճէր տեսնել ժպիտը, քաղցր ու քիչ մ'ալ մելամաղձոտ ժպիտը։ Իրաւ է որ իբրև գրաւէր մարդ չեմ կրնար ապախտ առնել այդ տեսակը որ այնքան աւիւն վառած է և այնքան անուն հանած, և դու անտարակոյս հասարակ երգիծաբան չես, ինչպէս մանաւանդ չես և պէտք չէ ըլլաս հասարակ բանաստեղծ մը. զի՝

«Քերթողաց ոչ դիք ոչ մարդ սիւնք ցերեց լինել միջակ։»

Եւ ասոր համար պէտք չէ որ փոքրկացնես հոգիդ. վերէն նայէ՛ շատ բաներու վրայ. մի՛ յածիր, մի՛ քաշքըշեր աւիւնդ ալ ճախճախուտ կամ տափարակ տեղեր.

բարձր տեղերու օդ ծծէ՛. մի՛ թեթև կամ գծուծ իրք արժանի գատեր քու խանդիդ. մեծ նիւթեր ընտրէ՛ որ մեծութեան հետ ընտելանաս։ Ոչինչ աւելի փոքր է քան քէնն ու ոխն ու չարութիւնը, և իբրև գրական մարդ եթէ խորհրդածել ուզես, գիտցի՛ր որ ներողամտութիւնը ո՛չ թէ միայն առաքինութիւն է այն նաև պարտաւորութիւն այն մարդուն համար որ կենաց հակառութիւններուն իրազեկ եղած է։

Ու երբ բարձր մտածութիւններով անած, սիրտդ թափես չափելու ու յանդեալ տողերու մէջ, գիտցի՛ր որ ինչ որ արտադրի քենէ՝ միշտ սիրով ու թերեւս օր մը հիացմամբ պիտի կարդան, ընդ որս և ես։

Գ. Ս. ՕՏԵԱՆ

Զմիւռնիա, 29 Դեկտ. 90

Մեծանուն Ռիթէոս էֆ. Պէրպէրեան

Կ. Պոլիս

Գերազնիւ և սիրելի բարեկամ,

Ո՛չ, չեմ գանգատիր Ձեր լռութենէ. լռութիւնն ալ, ինչպէս կ'ըսէ հելլինակ մ'իր խորհրդաւոր ճարտասանութիւնն ունի. դուք չէք խօսիր ուղղակի մեզ, բայց Ձեր գրիչը, Ձեր գործերն, Ձեր հոգին կը խօսին մեզ և մեր սրտին ու մտքին նոր աշխատութիւն կ'տան և մեզ խօսելու կը գրգռեն։

Նոր տարւոյն հետ նոր լոյս մը կ'երեւի Ձեր ըն-

տանեկան հորիզոնին վրայ։ Ի՜նչ գեղեցիկ զուգադիպութիւն։ Անտարակոյս հոգեզմայլ կը դիտէք այդ սիրոյ և առաքինութեան ծնունդ, հանճարիկ մի փայլակն, Ձեր անգնահատելի, լուսաբեր վաստակոյ արժանի տրիտուրն ու սիրոփոփը։

Համբաւը բերաւ մեզ շնորհալի աւետիսն և մեզ անհուն խնդութեամբ լցուց։ հոգւոյդ թագուհին, շնորհագեղ Զարուհին, տուաւ Ձեզ անգին պարգև մը, հրեշտակ մ'որ քան ամեն ամանորական շնորհ քան ամէն գոնար, չքնաղագոյն է և հոգեպարար։ Կ'երեւակայեմ, կ'զգամ թէ ո՛րքան կ'փառաւորուիք, ո՛րքան ուրախ և զուարթ էք, սիրելի՛ Պէրպէրեան, և իրաւունք ունիք, զի Ձեր երանութիւն պարտաճանաչ գրուվալի հոր մ'երանութիւնն է, պատրաստ ամեն զոհողութեանց։

Խնդակից եմ Ձեզ, ոչ միայն Ձեր մեծանամբաւ վարժարանով, այլ և Ձեր ընտանեաց շրջանի սիրայոց կազմաւորութեամբ, ընտանեկան ոգւոյն օրինակելի տիպար մը կը հանդիսանաք։ Ապրի՛ք, հազար ապրի՛ք և վայելէք յաւէտ անմոռայլ Ձեր սիրասուն զաւակաց գեղակազմ հաճաստեղութեամբ շրջապատուած, որոնց կենսատու արեւն էք, անխառն ու անապառ երջանկութիւն։ Այս է բարեկամիդ փափաքն, այս է իր շնորհաւորական բարեմաղթութիւնն, զոր ի սրտէ կ'ուղղէ Ձեզ։

Իմ ջերմագին մաղթանքս կը նուիրեմ նաև առաջնուասիրտ կենակիցն Ձեր, և կ'հայցեմ ի Տեառնէ որ միշտ քաջառողջ լինի և շատ ու շատ տարիներ վայելէ իր սիրելիներու հետ երանաւէտ կեանք։

Նամակս կ'աւարտեմ, զի չէ ժամանակ խօսիլ Ձեզ հետ այլ խնդրոյ վրայ, քանի որ մեծ ու կենսական

խնդրոյն Ձեզի համար նորածին Պէրպէրեանն է, զոր գրկացդ մէջ առած ջերմագին կը հոմբուրէք, և անշուշտ իմ կողմէ ալ մի համբոյր տալու շնորհը չպիտի զլանաք ինձ։

Սիրով և կարօտիւ Ձերդ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Առ Գարեգին էֆ. Տէմիրճիպաշեան

22 Նոյեմբեր 1887

Իւսկիւտար

Ազնիւ և սիրեցեալ բարեկամ,

Կ'ուզէի միտիթարել զՁեզ Ձեր վշտին մէջ, բայց կ'զգամ թէ չեմ կարող։ Աւա՜ղ, ո՞ր սիրտ աշխարհի չէ վշտացեալ, ո՞ր սիրտ չէ ծակուած մահուան անապատոյն նետերէն, և ի՞նչպէս ցաւակիրն կարէ սփոփանք տալ ուրիշին։ Եւ ի՞նչ ըսել. կարելի՞ է մոռցընել այն դառն կորուստը զոր ըրիք. կարելի՞ է երբեք մոռնալ զայն որ մեր գրկերէն կը բաժնուի ու կ'երթայ գրկել սեւ հողն։ Կարելի՞ է երբեք լնուլ սրտի մէջ սիրելւոյն կորստեամբ գործուած պարապը, բուժել վէրքն որ կը բացուի անդ մահուան ձեռքով և որ պիտի աւրինի յաւէտ։ Աւա՜ղ, գիտեմ զայս բազմապատիկ փորձերով. ես որ վեցամսեայ որբ մնացած եմ ի հօրէ, որ քսանեմիամեայ կորուսի մայրս, և ոյր սիրոյ առաջին պտուղն կորզեցին վաղ ատուերք գերեզմանին։ Կրնա՞մ

զՁեզ մխիթարել Ձեր եղբօր կրօնական համար։

Այո՛, ազնի՛ւ բարեկամ, սոսկալի է մտածել թէ ո՛չ եւս է անդ, քովդ, շուրջդ այն սարփելի էակն զոր կը կոչէիր միոմն ի սիրելեաց անուանդ՝ որք կը հընչուին երկնից տակ՝ ոյր վերայ կը հնչուին երկնից տակ, ոյր վերայ կը գուրգուրայիր որպէս աչացդ բիբն վերայ, որոյ սէրն մին էր կենացդ մնունդը կազմող տարրերէն, որոյ երջանկութեան անձնուիրիլ մին էր հոգւոյդ վայելումներէն ու գոյութեանդ պայմաններէն, և թէ ո՛չ եւս պիտի նայի քեզ, ժպտի քեզ, խօսի քեզ, ո՛չ եւս պիտի պտըտի առջեւդ, երկնից արեւուն տակ, ընտանեկան յարկին տակ. յոյսին մէջ, օդին մէջ, ծաղկանց ու դալարեաց վերայ, այլ թէ հո՛ն է, մութ վէմին մէջ, անդգայ, անկենդան, հոգի սիրելիներէ, ձիւնին տակ, անձրեւին տակ, խճին ու աւազին մէջ, այն քնքոյշ մարմինն զոր կը պաշտէիր, զոր ամէն փափկութիւններով կը շրջապատէիր...։ Կը մտածես թէ ի՞նչ եղաւ այն հոգին որ այդ փարելի մարմինը կը շնչաւորէր, որ այդ աչերուն մէջ կը ժպտէր, որ այդ գանկին մէջ կը խորհէր, որ զքեզ կը սիրէր, որ չըքնաղ ձրիւք կը զարդարուէր որ յոյսեր ու փափաքներ կը տածէր յինքեան, յո՛յս ու փափաք՝ երա՛զ ու մոխի՛ր ամենայն։

Ո՜հ, գէթ մնայր մեզ մեր հարց հաւատքն, որով սոքա ցուրտ ու սեաւ հողէն յերկին կը վերցնէին իրենց աչերն, հոգւոյն աչեր, և անդ լուսեղէն ամպերու մէջ լուսազգեաց լուսաժպիտ կը նշմարէին փախըստեայ հոգին, և սփոփանքը՝ իբրև նշոյլ աստուերաց մէջ կ'իջնէր իրենց սրտին մէջ. բայց այդ մխիթարիչ ու հոգեզմայլ տեսիլներուն վրայ քող մը ձգեց գիտութիւնը, թանձր քող մը որոյ վրայ նկարուած կը մը-

հայ անջինջ ժանտատեսիլ մահն, ահեղ գերանգին ի ձեռին ու դժոխային ծիծաղ մ'իր կմախային այտից վրայ։

Այս է Ձեր հոգւոյն վիճակը։ գիտեմ, կ'զգամ աղ-ջամուղջն որ կը լնու զայն։ Ի՛նչպէս կրնամ ըսել թէ սրբեցէք Ձեր արտասուքը, ոչ միայն Դուք կ'ողբաք հէք Գալուստը, այլ և ամէն անոնք որք կը ճանչնան զինքն, ազնուաբարոյ, բարեհամբոյր, բարեկիրթ, ուսեալ, տաղանդաւոր, քանասուեղծ Գալուստն, Տէմիրճիպաշեան ծաղկաւէտ գերդաստանին ընտիր շառաւիղներէն մին։ Իւր անակնկալ մահն սարսեցուց ամէն հոգիներ, ամէն մարդ զգաց իրեր խուրձ մը կայծերու որ կը ցնդէր կը մարէր պատարկութեան մէջ։ Երիտասարդն վշտակից եղաւ Ձեզ, զի ինքն ալ կը կրուանէր եղբայր մը։ և ծերունիք որ կ'ընկերանային իր դագաղին՝ ընկճեալ էին հարուածին տակ, հաղորդ Ձեր թշուառ հօր և մօր դառնակսկիծ ցաւոյն։

Կուլաք, կուլանք, կուլան։ այսպէս կ'անցնի մարդկային կեանքը։ վիշտն անհրաժեշտ պայմանն է սիրոյն՝ որ կ'առատադրէ կեանքը։ Սպրելու համար ի սէր կը դիմենք, կը կազմենք սիրոյ կապեր, ծնողաց՝ որդւոյ՝ եղբօր և քեռ, ամուսնոյ քաղցր հանգոյցներով կը միանանք, այլ և այնքան առաւել զգայուն ա՛յնքան առաւել վիրաւորելի կը գործեմք մեր սրտերը։ Իսկ առանց սիրոյ հնա՞ր է ապրիլ։ — Ո՛չ, առանց վշտի կա՞յ սէր։ — Ո՛չ, կը տեսնէ՛ք թէ չէ հնար դուրս նկնել այս երկաթէ շրջանակէն։

Միայն մի՛ թարութիւն մը կայ, այս է՝ երբ կը տառապինք, պատահիլ վշտակից հոգիներու որք իրենց արտօսրը խառնեն մերինին։ ինչ որ կայ, ամենէն անարկու է լալ ամայութեան մէջ՝ դուցէ։ Հա-

զարաւոր հոգիներ ոգբակից ունիք Ձեզ որ Ձեզ հետ արտասուեցին ու կ՝արտասուեն Ձեր վաղամեռիկ եղբօր դա Ղրանին վրայ։ Թ՛ող միխիթարութիւն մ՝ըլլայ այս Ձեզ։

Ի մէջ դիւրաւորց, ոգակից է Ձեզ և տրտմութեամբ կը համբուրէ Ձեր ճակատն

Ձեզ հաւակրող ու զՁեզ սիրող

Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

---

20 Ապրիլ 1893, Սրմաշ

Սիրեցեալդ իմ Պ. Ս. Գ.

Նամակիդ իբրև պատասխան կ՝գրեմ և ո՛չ իբրև ուսումնասիրութիւն։ Կ՝հարցնես ինձ թէ «Ի՞նչ հրապոյր ունի վանական կեանքն և թէ ի՞նչ տեսլական ունիմ ես վանականոյ համար։» ահա իմ կարծիքս։

Ընկերական կեանց մէջ թէ՛ ի հարկէ և թէ՛ բնական իմն բերմամբ երբեմն կուգան ապրելու զանազան ձեւեր կամ կերդաղներ. վանական կեանքը հարկի մը ստեղծումն է և ո՛չ էական պայման մը ապրելու։ Հին աշխարհի մեղկ և անկարգ բարոյականը կը թելադրէր երբեմն զբրիատոնեայս հեռանալ ընկերային շրջանակներէ և ապրիլ յառանձնութեան։ Այդ եղանակն մեր մէջ ալ կանուխ ժամանակօք ընդունուեցաւ, և վանքերու անհամամասն բազմութիւնն մեր եկեղեցական կեանքի ամենէն գործունեայ երեւոյթը կ՝դնէ մեր առջև։ Վանքին հրապոյրն հո՛ն կ՝ակսէր ուրեմն երբ մարդ ձանձրացած աշխարհէն և անոր վայելքներէն՝ կ՝ուզէր

յիներ ամիսներով և անձուկ միջոցների մը մէջ սեղմուելով՝ ասելի ուժգին պայքար մ'առնուլ դէպ ու այն՝ յոր կ'հաւատար և որում կ'կարծէր հաճոյ լինել, ցորչափ չնչէր մաքուր ու անխառն օդ մը և աղօթէր հանդարտիկ։ Իսկ այժմ՝ վանական կեանքն կորուսած է իր նախկին գոյութեան պատճառը և չունի հրապոյր մը՝ որ յատուկ լինի իրեն։ Սնոնք որ կ'համակերպին այս կամ այն կենցաղական պայմաններուն՝ յայտնի է թէ կ'չինեն մի ո՛ր և է հրապոյր՝ թէ՛ մատուռական լինի այն և թէ հոգեւոր։ Ի՛նչ տարբերութիւն կրնայ ունենալ այժմեան եկեղեցականն թէ՛ վանքին մէջ ապրի նա թէ քաղաքին. թէ վանական ի՛ աղօթէ՝ չաղօթի՞ր ընկերութեան մէջ ապրող եկեղեցականը. թէ վանականն կը կարդայ կամ կը գրէ, ո՞վ կ'արգելու զմիւսնոյն բանն ընելէ. և մինթէ մեր վանականք չե՞ն թողուր հահութեամբ իրենց բոյնը՝ երբ բարձի մը կոչումն զիրենք հրաւիրէ յ'այլ աթոռ։ Այն օրն՝ յորում կը հեռանան վանքէն, ի՞նչ ամայութիւն կ'զգան իրենց ներսը. ո՞ր փերթ կը փրթի իրենց կողէն. ոչինչ։ Քիչեր կան անշուշտ որ կամ անգործութեան կամ անկարողութեան և կամ չահախնդրական կապերու չնորհիւ կը մնան գաւթին մէջ, մինչ բազմագոյնք առժամանակեայ հանդրուան մը կը նկատեն զայն։ Ըսէ՛ հիմա, որո՞ւն հրապոյրն՝ ասելի կը կշռէ այս տեսութեամբ։ Ի հնումն զաշխարհ կը թողուին փակուելու համար ի վանս, և հիմա վանքը սկզբնական մը կը դառնայ կամ արձակարան մը՝ ուստի յառաջ պիտի նետուին կրկէսին մրցանակն խլելու հետամուտ ոգիներ։ Ոչ, ոչ ուրիշներ ձանձրացած է աշխարհէն՝ որ վանքն ընտրէ իբրև մնատան. թերեւս ապաշխարողներն միայն՝ եթէ մարդոց ներկայութենէն կը չառագունին՝ վանական խցիկ մը հրապուրիչ պիտի գտնեն՝ իրենց խղճին ու Աստու-

ծոյն հետ առանձին մնալու համար։ Վերջո՛ւր կրթութեան ոգին ու պաշտօնը վանքերուն վրայէն, և անա՝ ո՛չ մի հրապոյր պիտի գտնես անոնց մէջ ըստ ազգի իւրում (sui generis)։ Չեմ կրնար հաւանիլ անոնց՝ որք յուսահատ արտի մը յանկարծական բերմամբ հառաչելով՝ վանքի մը լռութիւնն ու ամայութիւնը կը փնտռեն...։ Հոլուական կեանքը՝ գիտես դու՝ ի՛նչ գեղեցիկ և անուշաբոյր ազդումներ կը թողու իւր սիրուն պատկերներով՝ երբ ընապաշտ բանաստեղծի մը գրչին տակ ոգեւորի, ի՛նչ թարմութիւն՝ կ'ըսես իւրովի։ Զգացիր անշուշտ թէ յոյժ յաւատեսիկ հարցում մը ուղղած ես ինձ, թերեւս զի՝ դու վանքի մէջ չբնակած առենս՝ վանականի մը յատուկ եղող պարապմանց մէջ տեսած լինելով՝ կ'ապասէիր որ հիմա քու յարկին տակ գտնուելուս շնորհիւ՝ գեղեցիկ հորիզոններ ցոյց տամ քեզ. դժբաղդաբար տակաւին՝ նոր փարձ մը կամ նոր գաղափար մը չեմ առացած. ես արդէն կամայական աւանդութեամբ ծրագրուած՝ սեղմուած՝ միով բանիւ՝ պատնիշապակ կեանքէ շատ հաճոյք չեմ զգար. ինձ համար՝ իմ նակ ձեւամբ ոլորած բժոժս աւելի լայն կը գտնեմ՝ քան այլոց ընդարձակ վանդակը. առաջնոյն մէջ կրնան թեւեր բանալ երկրորդին մէջ փետրաթափ կը բեկանի թռիչը։ Եւ տակայն՝ չեմ ատեր ո և է կեանք՝ որ օրտակ որ լինելու յարմարութիւններէ զուրկ չէ բոլորովին։

Գալով վանականաց տեսականին՝ զարմէ իմ կարծիքս կ'ուզես լսել՝ արդէն փոքր ի շատէ բան մը կրցար հասկընալ ցարդ բուն էս։ Բայց քիչ մ'ալ աւելի որոշ խօսիմ։ Վանքը դպրոց մ'է կամ պէտք է լինի. եկեղեցական ուսմանց և կրօնական դաստիարակութեան համար սահմանեալ պատշաճագոյն վայրն է՝ ուր

պէտք է կրթուին ամէն անոնք որք պիտի ծառայեն Եկեղեցւոյն, այդ կրթութեան հանգամանքներ ոակայն հա՛րկ է որ փոխուին ըստ պահանջման ժամանակաց և ըստ լաւագոյն ոգւոյ դարուն։ Վանական դաստիարակութեան ամենէն աւելի ակնյայտնի թերութիւնն եղած է ցարդ մեր մէջ՝ ի մասնաւորի՝ չկրնալ կազմեցնել միտք մը որ սեռն ու սերտ հաւատքը յաջողի հաշտեցնել իմացական յոյսերու հետ։ Կը ներշնչենք կղերական հպարտութիւն մը, արհամարհանաց զգացումներն կ'խօսեցնենք այն ամէն բանի համար՝ որ վանական չէ, հակառակ տեսութեանց կամ կարծեաց հանդէպ կը պատրաստենք յաղթասէր բրտութիւն մը, գործնական կեանքի նկատմամբ ապաժամանակ փոյթութիւն մը դժուարաթեք, և քիչ մ'ալ անձնասիրութիւն առանձնասիրութեան հետ, եւայլն։ Բայց ահա՝ այս ամէն թերութիւններն պիտի դարմանուին ինքնին, եթէ վանական դաստիարակութիւնն ծառայէ ո՛չ թէ վանքի մը խորշը մնալու, այլ ընդհանրութեան օգտին անընդմիջաբար ապասաւորելու համար, որովհետև քրիստոնէական ոգին չնեղեր որ մակաբոյծ կեանքեր աճեալ գտնեն եկեղեցւոյ գործարանաւորութեան մէջ և անգործ ապրելու պայմանին հետ ա՛յնքան հաշտ ընթանայ ուխտի մը վերապրուած գուզնաքեայ առաքինութիւնը։ Այսպէս՝ իմ տեսակետս — քու. քառոզդ — կը դայանայ, այս տկարութիւններն արմատաքի խլելու աշխատութեան մէջ։

Մնամ ալօթարար

ԵՂԻՇԷ Վ. ԴՈՒՐԵԱՆ

Ամ մեծարոյ Տէր,

Թադէոս պատուելի Կէօզիւրեան,

Գիրքը՝ քու թարգմանութիւնդ՝ զոր ինձ ձօնեցիր, Պատուելի՛, կնոջս վրայ կը խօսի, երկար ապրելու միջոցներուն վրայ։ Մակագրէն գիտեմ զայդ, քանզի չը կարդացի մատեանդ։ Այդ տեսակ գործեր չահեկանութենէ զո՞ւրկ են այլ եւս ինձ համար։ Կնոջս երկարութեան ո՞չ ապաքէն կը փափաքի ա՛յն, որ ընտանիք մ'ունի պահպանելու կամ իրմէ՝ ընտանիք մը կազմելու. ապրիլ՝ ի մի բան՝ ո՞չ ապաքէն ա՛յն կը բաղձայ միայն որ կը սիրէ կեանքն, որում անծանօթ է ձանձրոյթն։ Արդ, ի՞նչ ընտանիքս ինձ հետ պիտի վերջանայ, և ոդիպահելու ոչ եւս ունիմ ոք երկրի վրայ. իսկ խորհուրդ ու ձեռնարկ՝ ունա՞ւ։ Է՞ր ուրեմն ընթեռնում ա՛յնպիսի գործեր, որք գիտցածս արդէն ինձ պիտի ըսեն, կամ չգիտցածս յանդգնա՞ւս ինձ պիտի ուսուցանեն։

Ես փոխանակ կարդալու թարգմանութիւնդ, ո՛ր յոյժ օգտաւէտ անշուշտ ու յանձնարարելի գործ մ'է, կը խորհիմ թարգմանչին իսկ վրայ։ Կը խորհիմ, Պատուելի՛, թէ մշտնջենական բանտարկեալ մ'ես դու յաշխարհի։ Սա՝ այն իսկոյն կը յարեմ. «Իր հոգւոյն բանտարկեալն է թադէոս աշազուրկ Պատուելին։» Բանտարկեա՛լ մի հոգւոյ, բանտիդ շրջանակն յաւէտ դու կ'ընդլայնես, և չնորհնալ իմացական կարողութեամբք արգելանդ անսահման աշխարհի մը կը փոխարկես. արտաքին աշխարհին բարիք ու փառաւորութիւնք՝ որոց վայելմանէն զրկուած ես, ի ներքս ի քեզ զայնս խ-

նորոյ կը ստեղծեն։ Եւ մինչ քիւրուց ի քիւրս տրա-
ծոց կու լսէին արիւնի ճաճանչք և ստողնի նշոյլք,
ի քեզ՝ զքեզ զ միայն լուսաւորելու համար՝ արեգակ
մ՚ողջոյն և աստեղաց հոյլեր ունիս դուն, — Երազ՝
զոր և ոչ տիեզերական մ՚իրացուց երբեք յաւիտեա՛ն։
Ներքնաշխարհիկ ովկէանդ, որոյ մօտ թմբեւս լճակք
են երկնագնդոյս և երկնագնդէ՛ն ովկէանք, յիւրն ա-
ւազանի միակ միանման հանդիսատեսիդ առաջի կը
պարզէ խառն կամ խաղող իւր տարածն հրաշափառ։
Ներքնակատար բարձանց քնակ՝ քոյինաստեղծ արծը-
ւոյդ երկնատլայիկ ճախրանաց բարձրութիւնն ալ երբ
կիւղածօրէն կը մրցի զերաթռիչ հոգւոյդ վերատաց-
մանց։

Յորժամ հանդիպինք միմեանց ու դու լեռ ձայնս,
թուի թմն ձեռինդդ ձայնիս ուղղութեան կը հեռուին,
և՝ երեւոյթն ունիս յայնժամ մարդո՛ց՝ յորոց ձեռանէն
թռչուն մը կը խուսափի՛։ Ձայնս արդարև ձեռացդ չո-
շափմանէն վրիպելով՝ աներեւակ հաւ անունա՛բաղձ՝
կը խոյանայ հոգւոյդ մէջ։ Եւ հմայքն՝ որով զգեցեալ
անոի կ՚ելնէ դուրս, ա՛ա այդ հմայքն է, Պատուելի՛,
որ ի ներքս ի քեզ անցած սքանչելատրաշ անճա՛ռ ի-
րողութեանց վրայ գազափար ինձ կուտայ։ Եւ անոի՝
տենչն իմ մեծ՝ յաճախ մօտուստ ընդ քեզ ձայնի՛ւ խօ-
սելու։

Բայց աւելի քան բաղձանք մ՚ունիմ յաւէտ. —
ունկն դնել ամայի քնակարանիս և համօրէն ամայու-
թեանց լռութեան, որ կուտայ հոգւոյս նախաճաշակն
անէութեան։ Ինձ այնպէ՛ս կը թուի թէ լաւ եւս կը
լսեմ, երբ աչուխս խփեմ։ Եւ ստէպ՝ ես աչքերս կը
փակեմ արեգակն զէմ։

Մերթ ես մեքսամաղձութեամբ կը հարցնեմ ես ինձ,

«Նա՛ եւ արտեւանունքն առ յաւէտ չէ՞ կափուցած, որպէս զի լա՛ւ եւս լսէ և յարաժա՛մ լսէ ներքին ձայ-ներ»։ Հարցումս զքէ՛ն խորհելով կ՚ընեմ, և աչերս աւելի պինդ կը փակեմ...։

Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Գաղըքէօյ 18 Դեկտ. 1891

Մտերմական ճամակ.

Փետրուարի 13

Իմ առաջին ներկայացման յաջողութեան մասին անշուշտ տեղեկութիւն ունէք և կարդացած կը լինէք Մոսկուայում հրատարակուող Ռուսաց երկու գլխաւոր թերթերի մէջ, բոլոր թատրոնների դերասաններն այն-տեղ էին և իւրաքանչիւրը զատ զատ սենեակս կու-գային բարեմաղթութիւններ անելու։ Ներկայացումից յետոյ պարահանդէս կար թատրոնի մեծ սրահին մէջ։ յոգնած էի սաստիկ, բայց բռնի ինձ տարան սրահ, ուր հաւաքուած էին թատեր հանդիսականները, շատ էլ ռուսեր և ուսանողներ, բոլորը միաձայն սկսան ուրախ կանչել և ծափահարել։ Դուք երեւակայեցէք իմ դրու-թիւնս, գնտինը պատռուէր տակն անցնիմ, կը մտա-ծէի։ Դուք ինքնիրենդ անշուշտ կը հասկնաք, թէ ինչպէս ներսից ուրախ (այս կը խոստովանիմ), բայց միանգամայն դրսից ամօթահար եղել եմ, հասկնալի է, որ մեծ ուրախութիւն է դերասանի ծափահարուիլ բե-մի վրայ, բայց կեանքի մի պարահանդէսի մէջ... կարող էք ըմբռնել թէ ի՛նչ զգում եմ. դուք որ եթէ

մէկը ձեր երեսին գովեստ տայ, կը նեղուիք։ Այս բո-
լորն ինձ գրել չի վայլեր, բայց խոստացել էի գրել
ամէն ինչ մանրամասնօրէն և միայն ձեզ կարող և
պարտական եմ գրել։ Ծանօթացայ բոլոր գլխաւոր դե-
բասանաց և դերասանուհեաց հետ։ Ծանօթացրին ինձ
նոյնպէս Աթէրովակու հետ. շատ սիրով վարուեցաւ
հետս, հրաւիրեց ինձ իրեն մօտ ճաշի, երբ լսեց որ
Արդիւնաւոր պատսօն բիէսան թարգմանուած է հայերէն
և ես ներկայացրել եմ ժատովը, սաստիկ ուրախացաւ։

Եկած օրէս ի վեր՞ ո՞րքան տկարութիւն որ ունիմ,
մէջտեղ եկան։ Տեսէք բաղդը, դալ Մոսկուա, այսպիսի
մի անուն և յաջողութիւն գտնել և միշտ հիւանդ լի-
նել...

Առաջին հասոյթից գոյացաւ 1200 ռուբլի։ Երկրորդ
ներկայացմանը երեկոյին շատ դերասաններ կային, միշտ սենեա-
կումս էին անդրադարձները, ի միջի այլոց Սվապոտինա,
Պարիշէվա, Ռիուզի, Տակմարովա դերասանուհիք եւս
սենեակս եկան և խնդրեցին ինձնից իբրև յիշատակ մի
տերև ուսանողների ինձ ընծայած պատկից, որն որ
տուի մեծ ուրախութեամբ։ Այս երեկոյ հրաւիրուած եմ
տոնակով Ռուսաց դրամատիքական թատրոնը Ապե-
ռախս սարիֆ անուն նոր բիէսան տեսնելու, և յետոյ
չայի գնալու իրենց մօտ։

Այստեղ ծանօթացայ խիստ շատ Հայերի հետ։ Եր-
կու լուսանկարներ եկան խնդրեցին, որ գնամ իրենց
մօտ պատկերս հանել տալու։ Հինգ օրից վերջին ներ-
կայացումը կը տրուի և ես հիւանդ՝ չեմ կարծեր որ
կարողանամ մնալ այս տեղ, գուցէ ուղիղ Նախիջևան
գամ։

Անանովի մօտ հանդիպեցայ Այվազովսկուն, երեւելի նկարչին, որ ինձ ուզեր էր տեսնել։ Զորս վայրկեանի մէջ մի ծովային տեսարան ուրուագծեց գրչով և ինձ նուիրեց։ Կարող էք երեւակայել թէ ո՛րքան ուրախացայ. յետոյ ուզեց որ մի բան արտասանեմ, արտասանեցի Դարբինները, իբրև ի փոխարինութիւն իւր Բանկագին ուրուագծին, սակայն իմս անցաւ, նրանը մնաց։ Այո՛, այնպէս է. նկարիչներից, երաժիշտներից, արձանագործներից և բոլոր գեղարուեստէրերից աւելի շուտ և բարոյապէս կը մեռնին թատերասէրք, այսինքն դերասանները. առաջիններուն գործերը մահից յետոյ ապրելով, կ'ապրեցնեն նաև իրենց հետ հեղինակներուն անունները էլ, այլ խեղճ դերասանաց միայն յիշատակը կը մնայ, այն էլ եթէ ունենան սրտի տէր բարեկամներ, նրանց սրտին մէջ կ'ապրին։ Այլ թատերասիրաց համար միայն կը յիշուին այն տեղ, ուր որ կենդանի ժամանակին ծափահարուած են այսինքն թատրոնում։ Եթէ մի Հայ թատերասէր իմ մահիցս յետոյ, հանդիպի մի ուրիշ դերասանի, որ ներկայացնում է այս ինչ խաղը շատ վատ կերպով, անշուշտ ինձ կը յիշէ, բայց թատրոնին դռնէն դուրս ելլելուն պէս կը մոռնայ։ Եթէ մանկութիւնից ինձ լաւ բացատրէին թէ ի՞նչ է կեանքը, գուցէ ուրիշ ճանապարհով մտնէի նորա մէջ։

16 Դեկտ. 1812

ՊԵՏՐՈՍ Ց. ԱԴԱՄԵԱՆ

(Այլ հեղ)

Բարիզ 7 Ապրիլ 1882

Սիրելի Եղիա,

Հազիւ երկու ժամէ ի վեր շոգենաւս հեռացած էր Վոսփորի ափունքէն. արեւը մարը մտած էր արդէն և մութն կը թանձրանար տակաւ տակաւ. նոյն օրն մեծ ցնցումը կրած էր հոգիս. լալով բաժնուած էի, առաջին անգամ լինելով, ընտանեաց գրկէն, և միայնակ, դեռ ոչ իսկ քանամեայ, ես կը հեռանայի այն սպանչական յարկէն, որ տակ անցուցած էի մանկութեան և պատանեկութեան տարիներս, տարիներ՝ որ անմեղութեան և երանութեան. կը հեռանայի . . . ա՛լ անարիս մօտ չպիտի գանէի հոգատար մայրիկս, ա՛լ շուրջս չպիտի տեսնէի խանդաղատանքի ժպիտներն, ա՛լ զրկուած պիտի մնայի ընդերկար ընտանիքէս և բարեկամներէս, կ'երթայի հեռու, շատ հեռու քաղաք մը, ուր, ո՞ գիտէ, ի՛նչ փորձութիւնք և ազէտք ինձ կը սպասէին. ուր, անփորձառու և առանձին, պիտի ստիպուէի մ'արտ մղել ինձ սպառնացող անհամար հրապուրանաց դէմ. այս տխուր գաղափարներն, գիշերուան մթութիւնը և Ս. ծովու ներդործած առաջին տպաւորութեան հետ խառն, սոսկում ազդեցին ինձ. յանկարծ ուզեցի ետ դառնալ, դառնալ խորտակութեան գիրկը, զոհելով ուսումն ու ապագայն. այլ Տանգաէ յառաջ կը խիզախէր և անիւին անձնիւր շրջանն կը հեռացնէր զիս ծննդավայրէս. աչքս յառած էի այն կողմն, ուր դեռ կը տեսնէի Ֆէնէրի կանթեղին լոյսը, որ տակաւ կ'աղօտանար, տեսայ թէ ա՛հնար էր ետ դառնալ, բայց հա՛րկ էր մարդ լինել. որոշեցի վանել

ան խորհուրդներս՝ ընթերցմամբ. ձեռքս գրպանս տա-
րի և անդ գտայ նամակդ, երթաս բա բեռւի միակ
գիրն, զոր ստացայ քաղաքէդ մեկնելէս յառաջ, կար-
դացի զգայուն տողերդ, որք սիրտիցին զիս, մանա-
ւանդ այն տողն ուր գրած էիր. «Գնա՛, հետիկդ ըլլայ
Աստուած...»։

Այո՛, Եղիա, ըսի ինքնին. իրաւունք ունիս,
պէտք ունիմ Աստուծոյ օգնութեան, այլ քանի որ քեզ
պէս առաքինի սրտէ մը այդպիսի մաղթանք մը ինձ
կ'ուղղուի, Աստուած հետիկս է. պիտի պաշտպանէ
զիս...

Նոյն օրէն ի վեր այդ նամակդ ծոցս կը պահեմ և
երբեմն կը կարդամ զայն. նոյն տողերը միշտ կը զօ-
րացնեն սիրտս և խրախոյս կուտան ինձ։

Վեց ամիսէ ի վեր կը հետեւիմ իրաւագիտական
դասերուն. կ'աշխատիմ որքան կարելի է, գիշերն
խառնելով ցերեկուան. չգիտեմ պիտի յաջողի՞մ, այլ
խիզճս հանդարտ է, քանզի պարտքս կը լնումս։ Բա-
րիզ չհրապուրեց զիս, կը տեսնեմ թէ կամք ունեցող
երիտասարդի մը համար հնար է ատ ապրիլ անվնաս
և առանց վէրքի ազատիլ ամէն կողմէ արձակուած
թունաւոր սլաքներէն։

Եղբայրդ

ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ

Հարսանեկան շնորհաւորագիր։

16 *Փետրուար* 1898 *Ժընէվ*

... Սիրեցեալ բարեկամ,

Ուրախութեամբ կարդացի Ձեր նամակը, որով կ'աւետէիք ինձ Ձեր երջանիկ ամուսնութիւնը։

Ձեզմէ աւելի ե՛ս բարեբախտ պիտի համարէի ինքզինքս կարենալով անձամբ ներկայ ըլլալ Ձեր հարսանեաց հանդիսին ու բանիւ բերանոյ յայտնելով իմ իղձերս Ձեզ ու անոր զոր կենակից ընտրեցիք Ձեզ։

Պէտք է ըսեմ թէ Դուք իմ շատ սիրած բարեկամներէս մին էք, ու միանգամայն այն պաշտօնակիցներէ զորս ամենէն աւելի կը գնահատեմ իրենց խղճամիտ գործունէութեան, իրենց յառաջադէմ ճգանց, արդիւնաբար վաստակոց ու բարոյական աղնիւ հանգամանաց համար։

Աւելորդ է ըսել թէ ո՛րքան փափաքող էի ու եմ միշտ Ձեր երջանկութեան։ Այն սրտագեղ ուրախութիւնը որով կը ծանուցանէք ինձ Ձեր հարսանիքը՝ ցոյց կուտայ թէ Ձեր սրտին ու Ձեր իղձերուն համաձայն է միութիւնը զոր կազմեցիք և թէ Ձեզ ու Ձեր տան համար երանութեան աւետաբեր հրեշտակ մը կը տեսնէք այն էակին վրայ որ իր բախտը կցեց Ձերինին հետ։

Ձեր ուրախութեան սրտովին հաղորդ, կը մաղթեմ որ Ձեր կնքած ամուսնական դաշնը իրացնէ լիովին Ձեր պարկեշտ ու բարեկիր հոգւոյն բոլոր իղձերը։

Իցի՛ւ Ամոլքդ սիրայօդ ձեռն ի ձեռն քայլէք միշտ

ընդ երկայնութիւն կեանքին, իրարու քայլերուն քաղցր զօրութիւն ու նեցուկ թանկագին, վարդեր քաղելով ու վարդեր իրարու նուիրելով, ցաւոց փուշերէն Ձեր մատներ ու ոտներ անխոց ու անվէր, ու Ձեր գլխոց վերև Ձեր երկնքին աստղեր միշտ շողուն անաստուեր, Ձեր առաջին օրերու ուրախութիւնքն միշտ թարմ տեւական, ու միմեանց սիրոյն մէջ Ձեր գտած երջանկութիւն աճեցուն այն քաղցրութեամբք զոր Ձեզ տան անոյշ պտուղք Ձեր սիրոյն, ան բիծ պատկերք Ձեր հոգւոյն։

Ահա՛ այն անկեղծ ու ջերմ բարեմաղթութիւնքն, զորս Ձեր նոր կեանքին համար կը նուիրէ Ձեզ բարեկամ մը օտարութեան՝ բայց նաև արտագին սիրոյ խորէն։

Իմ զգացմանց մասնակից է և Տիկին Պէրպէրեան, որ նոյնպէս այս բարեբաստիկ առթիւ իր յարգանքն ու մաղթանքից շնորհաւորութիւնքն կը մատուցանէ առ նորապսակ Ամոլդ։

Ի վերջոյ, շնորհակալ ըլլալով Ձեզ Ձեր նամակաւ առ մեզ յայտնած Ձեր սիրոյն ու իղձերուն համար,

Կը մնամ Ձեզ ընդմիշտ բարեացակամ

Ռ. Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Նամակ առ Սրժ. Տ. Յովհ. Եպիսկ. Մկրտչեան, Ցորա Յակոբիկ որդւոյն մահուան առթիւ :

Ողեկոծեալ Հա՛յր,

Գարնան զուարթաբեր առաւօտ է, Ծաղկազարդի ատենն էր, մինչդեռ աշխարհ կը ծաղկազարդէր, քո ծաղիկդ խամրեցաւ, ո՜հ, և մինչ մանկտին ձիթաստանեաց լիրան վրայ Ովսաննա՛յ կ'երգէր, մինչ եկեղեցին կը հրճուէր, դու Յակոբիկդ կուլաս և ինձ գոյժ կուտաս որ իբրև զհայրդ կը սիրէի զինքն, և ո՞վ չէր սիրեր այդ անմեղն զաւակդ, որ իւր ամէն ազնիւ ձիրքերով սիրելի եղած էր ամենուն։ Եւ գիտեմ, դու անհնարին կը վշտակրիս և կը խոովիս թէ ինչո՞ւ համար շուտ խամրեցաւ նորաբոյս գարնան ծաղիկդ։ Դու կը հաւատա՞ս, Հա՛յր, թէ ծառերու և ծաղիկներու զարդուրիչ մշակը՝ նոխախնամութիւնն է, և նա է որ մահկանացուաց աշխարհէն կը տեղափոխէ անմահութեան աշխարհին և դրախտին մէջ կը տնկէ, և ո՞վ կարող է կամ իրաւունք ունի նոխախնամողին ձեռք բռնել, որ իսկապէս ծաղիկներուն գարմանիչ տէրն է։

Մի քանի օր առաջ զՅակոբիկդ տեսայ, նա գիտես թէ կուուեր իւր անձին դէմ և երկնից դէմ կ'ոգորէր։ Հոգին ներքուստ կը հեծէր, շրթունքները կափկափելով կը պաղատէր։ «Տէ՛ր իմ, կ'ասէր, դեռ մատաղ մանուկ եմ, նոր եկայ աշխարհը, թող որ տեսնեմ թէ, ի՞նչ կայ։ Ես լոյս կը սիրեմ, առաքինութեան ապարէզ նոր մտեր եմ, ի բոլոր սրտէ յառաջդիմութիւն կը սիրեմ։ ո՜հ, մրցանակս մնաց, թող տուր ապրիմ նպատակիս հասնիմ, մրցանակս առնում և ապա

մեռնիմ։ Յառաջդիմութեան սիրահար Յակոբը, ա՜հ, մինչև քու տագնապի և մահուն օրը գիր սիրեցիր, ու գրիչ սիրեցիր և յառաջդիմութեան կարօտով մեռար։ Յակոբին գրիչը՝ ձեռքը տուէք, այնպէս դրէք ի գերեզման. թող երթայ երկնից դպրութեան մառանը, հրեշտակներու հետ պարապի, երգէ ու գրէ։

Հա՛յր, կ'աղաչեմ, ողջոյն տուր Յակոբիկիդ, ես չեմ կարող ժամանել. և չեմ հանդուժել նորա դագաղը տեսնալ։ Համբուրէ՛ այն պայծառ ճակատը, որ յառաջդիմութեան նշան կուտար և մահուան ժամեր ձեռքն եղծեց զայն։ Համբուրէ՛ այն գրասէր աչերը որ ընթերցմանէն լուսանուաղեր էր. և գիտեմ թէ քանի՛ անձկութեամբ կը սպասէր, որ իւր վաստակաւոր մատանց երկասիրութիւնը(*) տեսնայ և այնպէս մեռնի և միթէ ուխտո՞ր էր մանկտուոյն ընծայ մը տալ և մեռաբարով ըսել։

Սորա համար, Հա՛յր, քո վիշտն անկշիռ է և ո՞վ կարող է զքեզ և քու ցաւերդ սփոփել։

Այլ միխիթարեա՛ց, միխիթարեա՛ց, դու Քահանայ Տեառն ես, Քահանայ ես Քրիստոսի եկեղեցւոյն, անմահութիւն և արքայութիւն կը քարոզես, ձեր մեծ կոչումն է, որ սպաւորները միխիթարես։ Ուստի դեռ՝ սեղանոյն առաջ զոր կը պաշտես դու, քու ձեռքերդ վեղտամբարձ տարածէ՛, յի հաւատով դոչէ Ոսկեբերանին վերօրհնութիւնը.

«Փա՛ռք քեզ, Աստուած, փա՛ռք քեզ, յարդարամեծնայնի». Դարձի՛ր ի տուն, սիրէ Յակոբիկին սգաւոր մայրիկը, որ քան զքեզ առաւել կ'աղեկիզի և կը մորմոքի. զի մայր է, և մօր գորովն ահեղ է։

1876 Մարտ 28 ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

(*) Նախաշաւիղ Գիտութեանց եւ Արուեստից։

Դարձեալ ցաւակցական նամակ առ Տ. Յ. Աւագ քահանայ Մկրեան՝ նորա Համասփիւռ աղջկան մահուան առթիւ։

Տէր Հա՛յր,

Ձեր շնորհալի դստեր Համասփիւռին հիւանդութեան, մահուան և թաղման օրերուն գտնուեցայ առ Ձեզ, բայց գիտնալով վեր առաքինութիւնը, Ձեր արդէն վշտակրութեան վարժութիւնը, և Ձեր խաչակիր պաշտօնին հետ՝ կեանքի ձախորդութեանց, ցաւոց առջև կուռ արիութիւնդ, որոց կը տանիս քրիստոնէական և օրինակելի համբերութեամբ, ի՞նչ էրնայի խօսիլ Ձեզ։

Դուք Աւետարանը գիտէք, Աստուածաշունչէն ներշնչեալ էք, յաւիտենական կենաց բանին աշակերտ, և աշխարհի յոյժ զօրագլխոյն կամաւորն ու պաշտօնեայն էք. սիրտ ունիք, միտք ունիք, հոգի կը կրէք, կ'ուսուցանէք, կը հաւատաք, կը գթաք և կը մխիթարէք։

Եւ, ինչպէս առատ էք դուք Ձեր բարեկրօնութեամբ այնքան առաքինութեանց մէջը, նոյնքան առատելութեամբ կը փոխարինուի՛ք նաև առաքինասէր դասերէ. ամէն անգամ երբ պատճառ ունեցած էք լալու, հազարաւոր ականջի՛ք իր արտասուքներ խառներ են Ձեր լացին, հազարաւոր սրտեր վշտակցած են Ձեր վշտակիր սրտին։

Կարեկցութիւն՝ տիտրանք մ'է ցաւ ունեցողին, և քարեկամին արտասուքը սպեղանի է խոցեալ հոգիներու։

Կ'ըսեն թէ կղերն անկարեկից է, մանաւանդ կու-

սակրոն կամ ամուրի կղերը։ Սո՛ւտ է։ Միթէ քարէն ծնած է նա։ Ո՞չ ապաքէն մօր մը սանդնքէն ունած է, անոր արիւնն ու կաթն կեանք տուած են իրեն. քոյրերու և եղբայրներու խանդաղատանքը տեսած է. իր տանն ու դրկիցին, բարեկամաց ու ազգականաց բերկրանքն ու ցաւերը կրած է. մանաւանդ երբ ժողովրդեան մէջ ապրած ոք է, ծնողէ մ'աւելի ընդարձակ և և խոր կ'զգայ ցաւն ու վիշտը։

Ես մանուկ էի, և երբ մեր այգեստանեաց նորատունկ խաղողոյ որթերը կը յօտէին, կաթիլ կաթիլ ղուլալ ջուր կը կաթէր կտրած որթէն. մայրս կ'ըսէր թէ «Այս որթին մայրը, խաղողին կոճղն է կուլայ, անոր արցունքն է որ կը թափի»։ Երբէք չեմ մոռնար այս գթասրտութեան քնքուշ բարոյականը. միշտ կը յիշեմ այս գորովական մայրական դասն, երբ կը տեսնեմ հօր մը և մօր մը աչքի առջև ինկած իրենց զաւկին դիակը։

Միթէ այդ որթի փայտէ աւելի անզգա՞յ է կրօնաւորի մը սիրտ. ոչ, ոչ, Տէր Հայր, սրտին երկու վիճակ կայ, երբ յանհունս կը զգածուի զղայուն սիրտ մը, կամ չափազանց փղձկելով կ'արտասուէ ու ցաւագին ողբեր կ'արտասանէ, կամ իր կսկծանաց խորագոյն ծովին մէջ կ'ընկղմի, աչքերը կը ցամքին, լեզուն կ'ընդարմանայ, և զգայնութիւնը կը հեղձնու։ Բայց անըզգայ լինել անհաւատալի է։ Ես ի քեզ նայելով, այս վերջին վիճակն ունէի. դեռ այսօր կդկտուր քանի մը տող աւասիկ կը գրեմ Համասիւռիէ յիշատակին, չի հանդուրժելով խոսիլ Քեզ բերան աւ բերան, այլ սրտէ սիրտ, ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ միխիթարութիւնը մաղթելով թախծագին ծնողական Քեզ սրտի խաչակիր Տէրտէրիդ և խաչաչարչար Տիրուհւոյդ։

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Գուզկունճուք, 1884 Յուլիս 2

Հոգւոյ անմահութիւն։

Սիրելի՛ Մամուրեան,

Տխո՛ւր, շատ տխուր տպաւորութիւն ունեցաւ սրտիս վրայ՝ շնորհալի հարսիդ՝ ազնիւ Մարիին մահուան լուրը։ Արթնցան յիշողութեանս մէջ իւր մանկական հասակի, իւր դպրոցական կեանց չքնաղ յիշատակներն — զուարթութիւնն, սրամտութիւնն, զգօնութիւնն, պարզասիրութիւնն, գեղեցկախօսութիւնն, արթնութիւնն և ամեն կատարելութիւններն, որոնք կը փայլէին իւր վրայ իբր շնորհաց ցոլմունքներ։

Ազնիւ էր իւր վարք ու բարքն, քաղցր էին իրեն համար կրօնական և բարոյական դասերն։ Այնպէս որ, կարելի է ասել թէ կ'աւրուածէր ինչ որ արդէն ունէր՝ քան թէ նոր բան կ'ուսանէր։ Անշուշտ կը յիշէք և Դուք, Սիրելի՛ Մամուրեան, որ թէև աւարտած էր իւր ուսման ընթացքն, բայց դպրոցէն չէր հեռանար։ Կրթասէր Օրիորդաց Ընկերութեան կ'անդամակցէր և իւր բարեհամբոյր ընտանութեամբ ամենուն համակրանքն կը գրաւէր։

Այս վիճակին մէջ էր շնորհաշուք Մարին, երբ ես Իզմիրէն մեկնեցայ։ Մեծ եղաւ ուրախութիւնս, երբ յետ ժամանակաց լսեցի թէ՝ նշանախօսուած է Ձեր ազնիւ զաւակին՝ Հրանդին հետ։ Սիրոյ և ճանաչողութեան նշանախօսութիւնն էր այդ, ինչպէս որ եղան ապա նաև սիրոյ և ճանաչողութեան ամուսնութիւն, հեռի ամէն շահասիրական միտումներէ, հեռի արտաքին որեւէ ազդեցութենէ, որոնք շատ անգամ պատուանդան կը լինին ամուսնութեան և շա՛տ անգամ կը դառ-

նացնեն այն քաղցրութիւնն, զոր սիրոյ Աստուածն հաճած է դնել ամուսնութեան մէջ։

Ա՜խ, ո՜րչափ ուրախ էի, երբ կը շնորհաւորէի այս ամուսնութիւնն։ Ի՜նչպէս կը խայտար սիրտս և կը սահէր գրիչս, քանզի Հրանդ և Մարի սաներս էին և անպատում էր ցնծութիւնս։ Իսկ այսօր, ո՜հ, այսօր, ստիպուած եմ մխիթարական գրել Մարիի մահուան առթիւ։ Ի՜նչ դժուարին պաշտօն, արտասո՞ւք արբել՝ թէ մխիթարական գրել. լա՞լ թէ սփոփել։ Ո՜հ, որչա՜փ հոգեւոր զօրութիւն պէտք է, որ մարդ, մարմնոյ մի գեղեցիկ և կենդանի շինուածքն քայքայուած տեսնելով, կարող լինի նորա հանդէպ բարձրացնել, պատկերացնել հոգւոյ անմահութեան գեղածիծաղ տեսարանն և առ այն դրաւել սգաւորներու թախծեալ սրտերն ու արտասուաթոր աչքերն։ Ո՜րչափ դժուարին է նեղիչայի աղեցութենէն կորզել, յափշտակել սիրոն և յաստղային սեւեռել։ Ո՜րչափ տկար է այս մասին մարդն և որչա՜փ տկար էին մանաւանդ հին աշխարհի զօրաւոր կարծուածներն անգամ — Սոկրատ, Պղատոն, Արիստոտել և այլք։ Արդարև մարդ տ՛ւար է ինքնին, յոյժ տկար, մարմինն կը ծանրանայ իր վրայ, հոգեղէն յարկն կը հա՛ղէ իւր միտքն և չթողուր բարձր թռիչներ առնելու։ Բայց կը զօրանայ մարդ և կը յաղթանակէ հոգին, երբ զօրավիգն կը կոչէ իւր տ՛ւարութեան Աստուծոյ օգնութիւնն, հաւատոյ, յուսոյ և սիրոյ ոգեւորութիւն, երբ կը խոստովանի թէ՝ Աստուած իւր սիրելի Որդւոյ մահուամբ և յարութեամբ պարգած է մարդկային կենաց մթութիւնն. փարատած է այն ոսկրումն, որով մարդ կը սոսկար, կը զարհուրէր պագաղին հանդէպ, գերեզմանական խորխորատին հան-

դէպ։ Լուծած է այն պաղանիքն, որ կը կոչուէր կեցաց եւ մահու գաղտնիք։ Իւր Աւետեաց գրքով — իւր Աւետարանաւ— մխիթարութիւն սփռած է. մահն՝ մարմնոյն յաւակացուցած է, իսկ կեանքն՝ հոգւոյն։ Մարմինն կը մահանայ. իսկ հոգին կը շարունակէ իւր կեանքն դանութիւնն նոյն իսկ յետ մահուան։ Հոգն կը հոգանայ. իսկ հոգին, աստուածային շունչն առ Աստուած կը դառնայ։

Ինչո՞ւ մեռնի հոգին. ինչո՞ւ անհետի բարին, ճըշմարիտն, գեղեցիկն։ Ինչո՞ւ իրենց բուրումներն չծաւալին թէ՛ աշխարհիս վրայ և թէ՛ անդր քան զայս աշխարհ։ Ինչո՞ւ սահմանուի, ինչ որ անսահման է։ Ինչո՞ւ հոգին մէջ պարփակուած կարծուի, ինչ որ մարմնոյ դագաղին մէջ իսկ չէր պարփակեր — կը խոյանար, կը սլանար, տիեզերքն կը զննէր, կեանք կը քննէր, կը հաւատար, կը յուսար, կը սիրէր, և ինչո՞ւ անսահման չշարունակուի այս հոգեւոր կեանքն։

Այո՛, այո՛, սիրելի Մամուրեան, հոգին չմեռնիր, կը շարունակէ իր կեանքն անդր քան զգերեզման։ Հոգեւոր կենաց պտուղներն մահ չունին։ Բարութիւնն, քաղցրութիւնն, մարդասիրութիւնն գերեզման չունին. կը մնան արտաքոյ գերեզմանին. կը յիշուին խանդաղատանօք; կը յիշատակուին տարիներով և դարերով և ահա սկիզբն է այս անմահութեան, սկիզբն է յաւիտենական կենաց։

Արդ՝ սիրելի՛ Մամուրեան, յոգնութիւն կոչենք մխիթարութեան Ս. Հոգին, որ կարող է զօրացնել մեր տկարութիւնն, փարատել մեր վհատութիւնն, ըսփոփել մեր սիրտն, պարարել մեր հոգին անմահութեան ուրախութեամբ, յանձնել զմեզ Աստուծոյ և կրկնել—

Կամք Տեառն օրհնեալ եղիցի։

Ինչ որ Ձեզ կը գրեմ, սիրելի՛ Մամուրեան, կը գրե՛մ ապնիւ Հրանդին, զգայուն Մարիամին, Վահէին, և հանգուցեալոյն բոլոր արենակցաց և մերձաւորաց։

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԵՊԻՍԿ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Քաղաք - Քէօյ, 12 Յունիս 1896

Բարիզ 1 Սեպտեմբեր 1882

Պզտիկ Լեւոնիկ,

Ո՞վ ես դուն հայիմ որ քեզի նամակ գրեմ, ո՞ր-չափ ատեն եղաւ որ կաթ չես ուտեր կոր։ Դու հօրդ մօրդ գրկէն վար իջած չունիս. հօրդ գիրկը քու աթոռդ է։ Երբ կը քայլես աներեւոյթ ոգիներ կը թեւապարեն ու կը պահեն քեզ որ վար չիյնաս։ Դուն չես խօսիր, այլ կը ճլուրտաս, դուն չես մտածեր այլ կ'երազես, դուն երբ բաներ կ'ըսես՝ երկնքի հրեշտակները կը հասկնան զանոնք. թոչո՞ւն ես թէ հրեշտակ. կուլա՞ս թէ կը խնդաս, այն ալ յայտնի չէ, լալով կը սկսիս, երգելով կը վերջացնես։ Երբ աչքերդ մեծ մեծ կը բանաս՝ երկնքի՞ն կը նայիս թէ մարդոց, ո՞վ կրնայ ըսել։ Երբ թաթիկներդ կ'երկնցնես՝ հայրիկդ կը կարծէ որ իրեն համար է, այլ ես գիտեմ որ գլխուդ վերեւը կապոյտ կը տեսնես, անո՛ր կ'երկննաս։ Երբ պարտէզ իջնաս՝ ոչ փշոտ վարդ կ'ուզես որ քաղես, ոչ թեթեւ թիթիռնիկ կ'ուզես որ բռնես, լուսի՛նը կ'ուզես որ տան քեզի ու չես մտածեր թէ ո՛րչափ

քարձր է անի։ Քեզի համար ամեն բան կարելի է ու կը զարմանաս իրաւամբ թէ ի՛նչ ուրիշ լաւագոյն բան կրնան ընել մարդիկ քան թէ միայն քեզ սիրել ու քու ամէն կամքդ կատարել։

Իրա՞ւ է արդեօք, իմ ճանչցած Լեւոնս այսպէս էր։ Բայց անկէ ի վեր երկու տարիներ եւ չորս ալ ամիսներ անցան։ Կարծեմ հիմա այն տարիքն ես, կամ ոչ շատ հեռի, ուր Երուանդ իմ տունս եկաւ։ Մեծցար ուրեմն։ Բայց դուն ո՞ւր ես, ես ո՞ւր։ Դուն տակաւին մարդուն՝ու հրեշտակին մէջ անորոշ բան մըն ես։ Դուն վարդէ շրթունքներ ունիս վրայէն հպելու համար կեանց բաժակէն որ վրա՛ն միայն անուշ է։ Դու զմայլմանց մէջ կ'ապրիս, քու երկնքիդ վրայ աստղունք կը փայլին անհամար, դու խնծիղն ես ու կայտառ, քու՝

Ի ճակատդ աղնիւ
Եւ ոչ մի կնճիռ
Եղբնգամբ ժըպիրհ
Ոչ գըրեց վաղիւ։

Հապա՛ Երուա՞նդը, պիտի՝ ըսես հիմա։
Ա՛հ, Երուանդիս՝ խօսքը՝ մի՛ ըներ...
Անի վէրքերը՝ ունի։
Սառուած Զեզ պահէ՛։

Գ. Ս. Օտեան

Ազնիւ Թէոդիկ,

Ի՛նչ սիրտքանք կրնան տալ վշտիդ իմ տկար տողերս։ Աքսորանքիդ առաջին օրերուն էր, իրեն պատահեցայ Բերայի Հայոց Գերեզմանատան ճամբուն վրայ, ու երբ իրեն հարցուցի թէ ի՛նչ լուր ունէր քու մասիդ, խորհրդաւոր ժպիտով մը գաղտնիքի մը քօղը բանալով ինծի՝ ըսաւ. «Ինքը լաւ է և գիտենք թէ ո՛ւր է, բայց մեռածի համբաւ հանած ենք իր մասին, որպէս զի չհետապնդուի...»։

Ողջ Թէոդիկը պան մը մեռած էր իրեն համար։ Դրամային ընդելուզուած զաւեշտով մը կը զուարթանար ուրեմն Արշակունիիդ եղեբայրանջ հոգին, բախտն ունեցաւ սակայն զքեզ վերստին տեսնելու —, բայց անողոք հիւանդութիւնը չուշացաւ իրր առժամապէս և յետոյ յաւերժաբար բաժնել զինքը քեզմէ, — կը խորհիմ։ Եթէ երբեմն՝ ողջ ըլլալով դուն մեռած եղար իրեն համար, ինքն ալ հիմա մեռած ըլլալով չի՞ կրնար արդեօք՝ ողջ ըլլալ քեզ համար։ Զառանցանքէ մը չէ՛ որ կը տարուիմ, կը կարծե՞ս թէ ա՛լ չիկայ Արշակունին։ — Ոչ մէկն անոնցմէ՝ որոնց կախաղանը կամ Գողգոթան դիտեցիր մօտէն գունդ գունդ ոգեկոչելով զիրենք արտասուաթուրմ էջերուդ մէջ, ոչ մէկն անոնցմէ չէ մեռած ու պիտի չմեռնի մեր յոյսերուն ու հմայքին մէջ։

Մի՛ յուսահատիր, պիտի գտնես զինքն օր մը, իր հոգիովը պայծառացած, իր տենչերով արբեցած, առաջին խօսքդ պիտի ըլլայ իրեն. «Մեռած կը կարծէի զքեզ, Արշակունի, ողջ ես եղեր ուրեմն ու երջանիկ. ա՜խ, սա մարմին դարձած մարդերը, որ հոգիներուն դերը կ'ուրանան։ — Մխիթարուէ՛, եթէ այս հզօր հաւատքն ունիս այժմէն։

Երուսաղէմ

Վշտակից աղօթարար՝
ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊ. ԴՈՒՐԵԱՆ

Սուրբ Գարեգին Եպիսկոպոս Սրուանձտեանց

Հայր Հնորհափայլ,

Շատ գաւառին մէջ ծնաք որ այնքան շատ ունիք եռանդ և աւիւն և այս ո՞րչափ քան դիտէք հայութեան վերաբերեալ։ Կը շրջիք, կը շրջիք և միշտ նոր քան մը կը գտնէք, նոր համ մը կ'առնուք, նոր հոտ մը կը բուրէք։

Ձեր ղրկած գիրքն է իրաւցընէ համով հոտով լիք, համն անուշակ Սրդամեռ խնձորին, փափուկ, կաթնորակ, հոտն անուշահոտ ուրցուն(*), դաղձուն(**), յեթենուոյն։

Ձեր ոճին մէջ Հայոց կրապաշտական գարերուն մոգութիւնն ու դիւթութիւնը կայ, Ձեր զգացումները ու մտածութիւնները քրիստոնէական գարերու սրբութիւնը ու կուսութիւնը ունին։

Գլգլացող առուներէն, խոնաւ հողերէն, թուփին ու տերեւին մէջ սասփող հովէն կը քաղէք արտօր և հառաչ — մնջիկ աղաւնոյն աղու մրմունջներն, աղու Եղնկայ նախանձընդդէմ պայքարաւ։

Դուք ոչ իբրև բնագէտ և բնալոյծ կը պտտիք և և դատէք ծառն ու քարը, հողն ու ջուրը, դուք հոգի կը տեսնէք ամէն բանի մէջ, և եթէ բան մը հոգի չունի, հոգի կուտաք անոր։

Գ. Ս. ՕՏԵԱՆ

(*) Ուրց, շքենածաղիկներու սեռէն անուշահոտ տունկ՝ (քէքիք օղու) thym։

(**) Դաղձ, վայրի անանուխ։

Թղթովանք
Երախտապարտ սրտի
Ուղղուած մեծ ուսուցչին և փառաշուք Յոբելեա-
րին Առաքելաշնորհ Տ. Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկ.ի
Դուրեան։

Պատրիարք Հայոց Ս. Երուսաղէմի

Երջանիկ հայր,

Պարիկ մը ցոյց տուաւ քեզ իմաստութեան աղ-
բիւրը, երբ դուն, շնորհալի մանուկ, շատ կանուխէն
ման կուգայիր շուարուն և ապշահար, Իւսկիւտարի
բարձունքին վրայ, լքած ոգաւոր խրճիթդ, ուր բա-
նաստեղծ եղբայր մը իր վերջին շունչին և օրհնասակա-
նի վերջին հոնդիւնին հետ քեզ աւանդեց իր քնարը
ըսելով. առ այս, Միհրանիկ, ահա իմ ժառանգու-
թիւնս, ես անով ՍԷՐԸ երգեցի, դուն երգէ ԱՍՏՈՒԱԾ։
Եւ դուն, տարիներով գրկած այդ քնարը, սրբազա՛ն
աւանդ և քաղցր յիշատակ եղբայրական, սրբութիւնը
տաւղեցիր, իմաստութեան աղբիւրէն կշտապինդ յա-
գեցած՝ ուրիշներու ալ պտպակը անցուցիր, օրհնեա՛լ
ըլլաս։

Սիրելի ուսուցիչս, կը հիանամ քու վայելած ան-
հուն սիրոյն և իրաւունք կուտամ համակիրներու
հակայ թափորին խանդաղատանքին, որովհետև դու
մարդեցիր բարձրագոյն աթոռներու արժանաւոր սա-
ներ, դուն ընտրեցիր այն ճանապարհը, որ մեր ազգա-
յին մատենագրութեան սուրբերուն ոտքի հետքերը կը
կրեն, այդ ճանապարհը դափնիներով և ծաղիկներով
ծածկուած կ'առաջնորդէ դէպի անմահութիւն։ Երրանի,

այն ազգին՝ որ կը ծնի մեծ մարդեր, այն կ'ապրի անսասնման ժամանակներ, հեգնելով աշխարհաւեր փոթորիկը աւեր և վերահաս աղէտներ։

Դարեր առաջ Սափա թագուհին, Սողոմոնի իմաստութեան հոչակով խելայեղ, ծանրագին նուէրներով յոյց եկաւ մեծ թագաւորին, ներկայիս ալ հայութեան հոգին իր բազմահազար զաւակներով կուգայ այցելու նուիրական քաղաքին և կը շրջապատէ պատրիարքական գահոյքդ ու կը գոչէ, ո՞վ մեծդ, քու իմաստութեանդ համբաւը սթափեցուց զիս հոգիս ալեկոծող երազներէ և զաւրթացուց զիս։ հայրիկ, ես զուրկ եմ Սափայի մը ճոխ գանձերէն, միայն ջերմ մաղթանք մը ունիմ քեզ նուէր և կ'ողողակեմ, չա՛ռ ապրիս։

Այս պահուն Սրբոց Յակոբեանց մայրավանքին շքեղ գահլիճին մէջ և այլուր մրրիկի պէս դոռացող լեղուներ կը բացուին դրուատալից բացագանչութիւններով քեզ նուիրուած, ամէնէն կարող քեմբասացներ պիտի կրնա՞ն գտնել բառ և իմաստ՝ խորաչափելու իմաստութիւնդ։ ես կը կարծեմ թէ անոնք ի զուր պիտի փորձեն շունչ տալ իրենց զգացումներուն։ բայց դու անոյշ քմծիծաղով մը և ազնուական ներողամիտութեամբ պիտի ընդունիս ամենուն խօսքերը, դուն որուն գաղտնիք չեն երբեք պերճախօսական սլացքներ և թռչիքներ գեղեցիկ դպրութեանց։ Այդ ամենուն հետ ուրեմն հոգէ ընդունիլ քու նախկին մէկ աշակերտիդ այս տկար ուղերձը իբրև մրգուղ միջատի ժը բզզիւն։ թէև այժմ ես պիտութեան աստուծոյն երկրպագու քժիշկներէ անհրաման՝ որոնք չեն ներեր ինձ անմեղ ապատրութիւններս թղթին յանձնել և կը յափշտակեն դրիչը ձեռքէս, բայց ես կ'աղերսեմ

անոնց, ո՛հ, թող տուէք ինձ, պահիկ մը միայն, որ ապրիմ իմ անոյշ մոռածումներուս հետ, որովհետև եթէ լռեմ, աւելի պիտի զայրացնին ցաւերս, գուցէ չաթաշուք հիւանդութիւնը իր մագիլները ցցէ ինձ դէմ. խնայեցէք ինձ, կ'ուզեմ ըլլալ պատմութեան մէջ հաչակուած այն աւնտաքնր բամբերն, որ մրտրակուած հայրենասիրութենէ մէկ շունչով մզոնները սլացաւ անցաւ և ուր ուրնմն չնչասպառ ինկաւ յաղթող եցիք գոչելով, ու աւնտեց այնպէս Մարաթօնի յաղթութիւնը ևս ալ կ'արհամարհեմ վայրկեան մը մահառիթ տարտափը և ներքին ձայնիս անսալով յառաջ կ'անցնիմ ահա ի ծուռը խոնարհած, ո՛ հայր, փառքիդ մեծութեան պատուանդանին առջև կը կրկնեմ. մեծ է յաղթանակդ, օ՛ն քեզ փառք յաւէտ,

Ջերմիկ համբոյրներ շաւղացդ լուսահետ,
Վեհ իմաստութիւն լոկ սիրեցիր դուն,
Կեցցես յաւիտեան, հոգիս քաջարթուն։

25 Հոկտ. 1929 Ամենախորին մեծարանք առ քեզ
Գուրթուլուշ խոնարհ աշակերտդ
ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԹՂԹԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Թղթատարութիւնը հասարակաց մեծ գործ մ'է. իւր պաշտօնն է նամակներու փոխանակութիւն, որ անհրաժեշտ է վաճառականութեան և ճարտարութեան պիտոյից։ Նա հաւասարապէս գոհացում կուտայ թէ՛ ընտանեկան և թէ բարեկամական շահերուն։ Վերջապէս կը դիւրացնէ ժողովուրդներու մէջ յարաբերութիւններ։

Ուրեմն իրաւամբ ըսած է Վոլդեռ. «Թղթատարութիւնն ամէն գործերու, ամէն վաճառականութեանց կապն է. անով բացականներ ներկայ կ'ըլլան։ Այն՝ ափոփանք է կեանքին»։

Թղթատարութիւնը ստիպողական պէտքէ ծնած է և այդ պէտքն է մարդոց իրարու հետ թղթակցիլն, անոնց՝ որ երբեմն միացած էին, իսկ այժմ բաժնուած են։ Ուրեմն կարելի է ըսել թէ քաղաքակիրթ աշխարհի պէս հին է այն։

Յունական հնութեան պատմագիրներ կը խօսին ձիաւոր սուրհանդակաց հանգոյցներու մասին (relais), զորս Կիւրոս կարգաւորեց Յիսուս Քրիստոսէ 550 տարի առաջ, իւր հրամաններն հասցնելու համար իւր ընդարձակ պետութեան ամէն կողմ։

Սատուածաշունչը, Եսթերի գրքին մէջ, առնասարակ քանի մը ծանօթութիւններ կուտայ թղթատարական կազմակերպութեան մասին, որ Պարսից թագաւորին օրով կը բանէր երագաձի սուրհանդակ-

ներու միջոցաւ։ Հռովմայեցիք եւս, երբ հաստատեցին իրենց անհուն պետութիւնը, զգացինկարեւորութիւնն իրենց բոլոր երկիրները հաղորդակցութեան մէջ դնելու։ Անոնց շնորհիւ զանազան թղթատուններ հաստատուեցան, որոնց բազմաթիւ հետքերն մեր օրերն իսկ կ'երեւան։

Բայց ընդհուպ բարբարոսներու արշաւանքը Հռովմէական կայսրութեան անկումը առաջ բերաւ, իբրև կոհակ տարածուեցաւ և մարեց ամէն քաղաքակրթութիւն։ Ինչպէս ուրիշ հաստատութիւններ՝ թղթատարութիւնն անհետացաւ։

Մեծն Կարոլոս ջանաց իւր կայսրութեան դաւառներուն մէջ հաղորդակցութիւններ հաստատել։ Բայց անոր մահէն ետք յաջորդները թղթատարութիւնն անկեալ վիճակի մէջ թողուցին։

Որովհետեւ այն ատեն բոլոր ճանապարհները ապահով չէին, կարելի չէր կանոնաւոր ծառայութիւն մը հաստատել։ Թղթատարութիւնն այս խռովեալ ժամանակներուն մէջ դրեթէ այլեւս գոյութիւն չունէր։ միայն յատկապէս խրկուած սպասաւորներ կամ մէկ քանի տակաւաթիւ անձեր պատգամաւորներու պաշտօն վարելով՝ նամակներ կը տանէին վտանգներու դիմադրաւելով։

Սակայն բազմաւոտեսակ պէտքեր զգացուցին թէ թղթատարութիւնն պէտք է հիմնովին բարեկարգել։ այսպէս այն ընդունեցաւ մեծամեծ բարեփոխումներ մինչեւ մեր օրերն և արդի ընկերութեան պէտքերուն համաձայն եղաւ։

Այսօր թղթատարութիւնն դրեթէ կատարեալ գործ մ'է ամենուրեք և կանոնաւորուած է 1878ի Բարիզի

Միջազգային թղթատարական Համաժողովէն, նոյնպէս 1892ի Պէռնի մէջ գումարուած Համաժողովէն, ուր Օսմ. կառավարութեան կողմէ պատուիրակ ներկայացաւ Ազն. Մելքոն էֆ. Իւզպաշեան։

Այսպէս շնորհիւ հիանալի տնօրինութեանց՝ թղթատարութիւնն կ'ապահովէ այժմ աշխարհի հինգ մասանց բնակիչներու արագ, դիւրին և խնայողական յարաբերութիւններ։

Աչքի առջև ունենալով թղթատարութեան արդի մեծ դիւրութիւններն, տեսնենք այժմ քէ ի՛նչպիսի սուրհանդակներ կային երբեմն Փոքր Ասիոյ մէջ, քաղելով Charles Texierի Universի «Փոքր Ասիա» անուն հմտալից գործէն։

«Պարսիկները ի Խրիսուպոլիս (յԻսկիւտար) հաստատած էին սուրհանդակներու կայան մը, որ հրամաններ կը տանէին կայսրութեան բոլոր երկիրներուն մէջ, և հռովմէական կայսրութիւնն այս հաստատութիւնը խնամով կը պահէր։ Օգոստոս կայսրն Պարսից օրինակին հետեւեցաւ հաստատելով Վեռետառիներու (թղթատար) արհեստապետութիւն մը՝ որ կայարաններ ունէին յիսուն մղոնը անգամ մը, հոն կը գտնուէին պահեստի ձիեր՝ որոնք յոգնած ձիերու տեղ կը գործածուէին, նոյնպէս երկանիւ կամ քառանիւ կառքեր՝ որոնք մինչև հազար լիպրա ծանրութիւն կրնային կրել։ Լծուելու սահմանեալ կենդանիներուն՝ ձիերուն կամ ջորիներուն թիւը որոշուած էր կանոնագրութիւններու միջոցաւ։

«Երկանիւ կառքերն 500 լիպրա կրնային տանիլ. սուրհանդակին ձին 50 լիպրա աւելի կրնար տանիլ։ Ամառը ութ ջորի կը լծուէին, ձմեռը տասը. երկանիւ կառքերուն երեք ձի կը լծէին։ Վաղենտիանոս թող

չառաւաւ որ այս վերջնոց մէջ՝ երեք հոգիէ աւելի նստին։ Փոխադրութեան այս միջոցներէն զատ կային վէոեսի կոչուած արշաւի ձիեր, որք տնտպին հեռաւորութիւններ կը կտրէին կ'անցնէին մեծ արագութեամբ։ Եթէ թամբին ու սանձին ծանրութիւնը 60 լիպրայէն աւելի ըլլար, տուգանք կար։ Իւրաքանչիւր կայարան պէտք էր պատրաստ ունենալ քսան ձի, և երբեք առանց ձիու չմնալ։ Պատրիկները իրենց ձիերը ճոխ կազմածներով կը հանդերձէին, սանները ու պաշտօնները ոսկեզօծ էին։ Վերջապէս հասարակութեան կողմէ վճարեալ անասնաբոյժ մը կայարանին մէջ պաշտօն ունէր։

«Սէն տարի ձիերու թուոյն մէկ քառորդը կը նորոգուէր, և անոնց տեղ նոր ձիեր կուտար նահանգն։ Այս սուրհանդակներու շնորհիւ լուրերը կը տարածուէին ամենաաւելի արագութեամբ։ Ձիերը թամքերու համար միշտ պատրաստ պերիներ կային։ Պաշտպարտած շտեմարաններ կը ծառայէին ոչ միայն սուրհանդակի ձիերու, այլ և այն ձիաւորներուն՝ որոնք ջոկատ առ ջոկատ կը ճամբորդէին։ Կայսրերը իսկ փոխադրութեան այս միջոցը կը գործածէին։ Տիտոս հիւանդացաւ սուրհանդակաց կայանի մը մէջ։

«Մանաւոր անձինք կայսերաց փոխադրութեան համար ի գործ դրած միջոցը կրնային գործածել պրեսորներու պետին մէկ մանաւոր հրամանագրով։

«Պլինիոս, Բիւթանիոյ պրեսորը, շատ խստապահանջ ըլլալ կը թուի այս հրամանագրերը տալու մասին, և Տրայիանոսի կը գրէ թէ քայլարձակապէս կարեւոր պարագայի մէջ միայն կուտայ։ Նոյն ինքն իր նահանգին մէջ պտըտած ատեն ձիով չէր ճամբորդեր, այլ կառքով. այս կերպով գնաց Եփեսոսէն ի Պերկա-

մա. բայց այս ճամբորդութիւնը շատ յոգնեցու զինքը. և Պերկամայի նահանգիատէն Պիտանայ նաև նոտաս Բիւթանիա երթալու համար։

«Հասարակաց սուրհանդակներու (Անկարի) այս հաստատութիւնն տակաւ կը սկսէր դադրիլ Բիւզանդական կայսրութեան օրով, պանդոկապետները կողմնակցութեան և կամ դրամով՝ սուրհանդակաց կրնային ծառայել, և ուղղին իրենց ձիերը վարձու կուտային։ Ճամբաները պէշ ըլլալուն համար սայլերու գործածութիւնն անպէտ դարձած էր։ Վարչութիւնը կը սկսէր խառնակիլ, երբ Օսմանեան թիրացան երկրին։ Սոնք ձիաւոր ժողովուրդ ըլլալով՝ իրենց իշխաններն անգործութեան մէջ չձգեցին հաստատութիւն մը՝ որուն մէջ ձի գլխաւոր դերը կը կատարէր։ Հռովմէական Մանսիոնեներուն յաջորդեցին Մէնզիլխանեները, զորս Սուլթան Սիւլէյման բարեկարգեց։ Պրեսորներու պետին կողմանէ յանձնուած հրամանագիրներուն տեղ (diplome) անցան պոյրուլտուները, զորս փաշան կուտար և կառավարութեան գործակատարները միայն իրաւունք ունէին ձի գործածելու։ Բայց փոխադրութեան այս հաստատութեան մէջ վաճառականութիւնն ալ դեր ունէր։ Մինչեւոյն ժամանակ քարվանսարայ անուամբ սքանչելի պալատներ հաստատեցին, այսինքն կարաւաններու պալատներ։ Այս հաստատութիւնները գեղեցիկի վրայ ունէին ընդարձակ ախոռներ, ապրանաց համար մթերանոցներ և առաջին գատիկոնին վրայ ճամբորդներու համար սենեակներ։ Ընդհանրապէս այս հաստատութիւններն իրենց յատուկ եկամուտ ունէին, այնպէս որ կարաւանները չնչին գումար մը տալով կ'ընդունուէին։

ՀԵՌԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՍՏԵՆՆԵՐԸ

«Բայի կայսերական հրամանները ցամաքի ճամբով փոխադրելու եղանակէն, Բիւզանդիոյ վեհապետները օդային - գիշերային հեռագրական թել մը հաստատած էին Տարսոնի և Սկիւտարի մէջ։ Առաջին կայանը հաստատած էին Պուլկուրլու լերան վրայ։ Այս՝ հեռագրաթելը կը հաղորդակցէր Կոստանդնուպոլսոյ հետ։

«Այս տեսակ հեռագրական նշաններու գիւտը շատ հին ժամանակներէ կը սկսի։ Տրոյայի առումը աւետուեցաւ Յունաստանի՝ գիշերային նշաններով՝ որոնք իրարու փոխանցուեցան մերձ առ մերձ բոլոր լերանց գագաթներուն վրայ։ Կեղտացիք ալ գիտէին թղթակցութեան նոյն միջոցը, բայց հեռագրական նշաններու կանոնաւոր կազմակերպութիւնը բուն Իններորդ դարէն կը սկսի. այս նշաններն կատարելագործուեցան Թէոֆիլոսի օրով՝ Թէսաղոնիկէի եպիսկոպոս Լեւոն Իմաստասէրի ձեռամբ։ Թշնամիներուն շարժումները դիտնալու հարկը կազմակերպել տուած էր այս տեսակ հեռագրութիւն մը, կրակներն այնպէս մը կարգադրուած էին՝ որ ծածկագրութիւններն պարբերութեանց իմաստը կը յայտնէին. ութը կայաններ հաստատուած էին Տարսոնի և մայրաքաղաքիս մէջ։ Առաջինն ի Քուլա Տարսոնի մօտ (անշուշտ այսօրուան Քիլէկ պօղազը կոչուածն), իսկ վերջինը Պուլիուրլու լերան վրայ. այս վերջին կայանը կը հաղորդակցէր ուղղակի պալատին հետ։»

ԹՂԹԱԲԵՐՆ ԵՒ ԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1830էն առաջ մասնաւոր անձինք իրենց նամակները իրենց ծախքով մարդ կը խրկէին կ'առնէին, և

կամ անձամբ կ'առնէին զանոնք նամակատուներէն։ Շատ նամակներ շատ օրեր կ'ուշանային կամ երկայն պըտոյտներ ընելէ յետոյ անոնց տէրերէ կ'առնուին։

ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹ

Դուք ամէնքդ ալ տեսած էք դրոշմաթուղթեր։ Սոնք փոքրիկ նկարներ կամ դէմքեր են։ Ունին զանազան արժէք իրենց տպման համար գործածուած գոյներուն համաձայն։ Անոնք կը գործածուին նամակատուները յանձնուած թղթակցութեան առարկաներու և նամակներու վճարումէ այլեւս ազատ ըլլան յայտնելու համար։ Մենք զայն կը փակցունենք նամակին վրայ, նամակատուփը ձգելէ առաջ, և այսպէս նամակը կը հասնի իր տիրոջ։

Այս գիւտին փառքը Անգլիոյ կը վերաբերի, ուր առաջին դրոշմաթուղթերը յօրինուեցան 1840ին։ Լուի Ֆիկիէ հետեւեալ կերպով կ'ընէ գիւտին պատմութիւնն **La Science Ulustrée**ի 1892 տարւոյ թիւերէն մէկին մէջ։

«Դրոշմաթղթերու գիւտը կ'ընծայուի ընդհանրապէս Անգլիոյ Հասարակաց Խորհրդարանի մէկ անդամին, Սըր Ռաուլէնտ Հիլի։ Բայց այս գիւտի մասին Անգլիոյ իրաւունքները խնդրոյ առիթ են, և գիւտին փառքը Ֆրանսական թղթատարութեան վարչութեան կ'ընծայուի մի քանիներէ, բայց երկու կողմէ փաստեր կը պակսին։

«Կ'ըսուի թէ այս դարուս կիսուն Փարիզի Սէնթ-Անթուան արուարձանին մէջ առանձինն բնակող Բոլոնիացի Հրեայ մը Քրաքովիէն յաճախ նամակներ կ'ըն-

գունէր ցամաքատաց մէջ մնալի (poste restante), իսկ ինքնին զանոնք կը մերժէր քանի մը վայրկեան ուշ չի ուզով աչքէ անցունելէ յետոյ։ Երբ այս մարդը դէպ ի Գրաքովիա ճամբորդելու եղաւ, թղթատարութեան պաշտօնեայ մը անոր հարցուցեր էրաւ տրուած նամակները մերժելու տարօրինակ սովորութեան վրայ, անշուշտ իր հարցման հետ քիչ մ'ալ դրամ խթելով, ձեռնա՝րկ՝ որ Հրէի մը համար անմերժելի չէ։ Որուն փոխարէն Հրեան եւս սա խոստովանութիւնը ըրաւ. «Ի՞մ կինս կը գրէր նամակին վրայ Տէր, աղջիկս ալ կը գրէ իմ անունս, փեսաս՝ ցամաքատաց մէջ մնալի և թոռս՝ Փարիզ։ Այս կերպով կը տեղեկանայի թէ բոլոր ընտանիքս առողջ էին։

«Թղթատարական վարչութիւնն այն աստեն հաստատեցաւ թէ հարկ էր փոխել նամակաց փոխադրութեան գինն, որ այն ատեն չատ բարձր էր, վասն զի կը յիշեմ թէ 1840ին Մոնթէլիէէն Փարիզ նամակի մը նամակի մը համար 18 սոլ (20 սոլը 1 ֆրանք է) կը տրուէր։ Այն ժամանակէն է որ գաղիական թղթատարութեան վարչութիւնը սկսաւ թղթատարութեան բարեկարգման մը ուսումնասիրութիւնն ընել։

«Սակայն ստուգիւ Անգլիոյ մէջ է որ առաջին անգամ գրոշմաթղթեր գործածուած են, և պատճառ եղած են փոխադրութեան գնայն մեծապէս նուազման և հասոյթներու աճումին։

Այս բարեկարգումը 1840ին հաստատուեցաւ Անգլիոյ մէջ խորհրդարանի քուէարկութեամբ։

«Ահա այն մանրամասնը՝ որ Անգլիոյ մէջ կը պատմուի այն եղանակի մասին՝ որով Հասարակաց խորհրդարանը հաստատեցաւ թղթատարական փոխադրութեան գինը նուազեցնելու պէտքին։

1837ին Հասարակաց խորհրդարանի անդամ Սըր Ռաուլէնտ Հիլ Սկովտիոյ մէջ ճամբորդած ատեն իջեւանեցաւ պանդոկ մը, ուր ակնատես եղաւ հետեւեալ իրողութեան։ Ցրուիչը սպասուհիին կը թերէ նամակ մը իր եղբօրմէն։ Սպասուհին ուշի ուշով կը քննէ պահարանը, յետոյ եւ կուտայ նամակը ցրուիչին, պատճառելով թէ դրամ չունի գինը վճարելու համար։ Անգլիացին այն ատեն կ'առաջարկէ որ ինք վճարէ անոր համար։ Բայց երիտասարդուհին կը մերժէ ի սպառ այս ծառայութիւնը։ Ճամբորդը այս յամառութեան վրայ զարմանալով՝ իր հարցման կ'ստիպէ զայն՝ սա խոստովանութիւնը ընելու թէ առանց քսակին քերթը բանալու իր եղբօր հետ կը թղթակցէր ինչ ինչ ոչնչալ նշաններով, որոնք նամակին պահարանին վրայ կը գծուէին։

«Սըր Ռաուլէնտ Հիլ այս դէպքը պատմեց խորհրդարանին մէջ՝ հաւկցնելու համար նամակաց գինը իջեցնելու հարկը։ Որպէս զի ապրանքներ կարենան թղթակցիլ առանց պետական գանձուն դէմ նենգելու՝ առաջարկեց այդ գինը մէկ քէնտիի իջեցնել։ Նուազագուն մը քուէարկուեցաւ և Սըր Ռաուլէնտ Հիլի յանձնուեցաւ թագուհւոյն գլուխը ներկայացնող պատկերներ փորագրել տալ և վերակացու ըլլալ գրոշմաթղթերու առաջին հանման՝ որ 1840ին եղաւ։

«Գաղիոյ մէջ առաջին գրոշմաթղթերն՝ որոց համար 25 սանտիմ կը տրուէր 15 կրամ կշռող նամակի մը համար՝ Փարիզի փողերանոցին մէջ փորագրուեցան Հիւլօյի ձեռքով և 1849ին հանուեցան։ Յետոյ գինը 25 սանտիմի իջաւ։»

Թուրքիա 1856ին հնարուեցան գրոշմաթուղթեր,

որոնք այլ և այլ ձեւեր առնելէ յետոյ կը կրեն այժմ զանազան խորհրդանիշեր։

Մէկ քանի երկիրներ ընդունած են այլ և այլ պատկերներ տարբեր դրոշմաթղթերու համար։ Այսպէս Ամերիկայի Միացեալ Նահանգաց դրոշմաթուղթերն երկրին երեւելի մարդիկը կը ներկայացնեն, զոր օրինակ Ֆրանքլին, Վաշինկթոն։

Ուրիշ երկիրներ իրենց դրոշմաթղթերու վրայ տպաւորած են իրենց ազգային զէնքերն կամ այն երկրին յատուկ ծաղիկներ, պտուղներ, կենդանիներ։

Դրոշմաթղթերու գործածութիւնն այսպէս քաղաքակրթեալ աշխարհի ամէն կողմերն արտօրէն տարածուելը կը ցուցնէ թէ ո՛րչափ կարեւոր է անոր գոյութիւնն։ 1840ին, երբ հնարուեցան անոնք, ո՞վ գիտէր թէ անոնք իբրեւ դրոշմաթուղթ ծառայելէ զատ, բաւական կարեւոր առեւտուրի մը պատճառ պիտի ըլլային։ Մանկիկներ այս փոքր պատկերներէն հրապուրուելով մոռնցին զանոնք հաւաքել։ Ծնողք եւս շահագրգռուեցան և իրենց հաշուոյն հաւաքումներ կազմեցին։

Դրոշմաթուղթերու ալպոմներու ճաշակն այսպէս բոլոր աշխարհ տարածուեցաւ ընեկերութեան ամէն դասակարգերուն մէջ։ Եւ այս հաւաքածոներէն նոր վաճառականութիւն մը յառաջ եկաւ։

Փոքրիկ պետութիւններէն ոմանք, հաւաքողներու աւելի դրոշմաթուղթ կը ծախեն քան թէ նամակի համար։

Գոլով տղայոց, հաւաքման սէրը զանոնք դրաղեցնելով և ախորժելի զբօսանք մը ընծայելով հանդերձ կրնայ նաեւ անոնց բան տալիցնել։

Փոքրիկ ժանուկն այդ գրաշմաթղթերն ստէպ ձեռք առնելով և դասակարգելով կը բաղձայ գիտնալու թէ աշխարհի ո՛ր մասին մէջ կը գտնուի այն երկիր՝ ուստի կուգան անոնք։ Այսպէս անաշխատ կը յաւելու իր պատմական և աշխարհագրական հմտութիւնքը։

Ամանապէս կ'ուսանի այլ և այլ ժողովրդոց գրական գրութեանց մէջ եղած տարբերութիւններք՝ և կ'ընդելանայ շուտով օտար գրամոց անոր արժէքին։

ՎԵՐՋ

ԳԼՈՒԽՆԵՐՈՒ ՑԱՆԿ

Նախաբան	. . . . .	3
Գլուխ Ա.	Նոր տարւոյ եւ անուանց տօնի նամակներ	9
Գլուխ Բ.	Շնորհակալութեանց, շնորհաւորութեանց, ցաւակցութեանց, յանձնարարութեանց նամակներ։	27
Գլուխ Գ.	Առեւտրական, վաճառականական եւ դրամ խնդրելու նամակներ	66
Գլուխ Դ.	Աղերսագրեր	95
Գլուխ Ե.	Վէճագրեր	104
Գլուխ Զ.	Ընտանեկան կառավարութեան վրայ չորս նամակներ	107
Գլուխ Է.	Ընտանեկան, մտերմական լուրջ	137
Գլուխ Ը.	Զանազան տոմսակներ	157
Գլուխ Թ.	Գրագէտներու մի քանի նամակներ։	166
Գլուխ Ժ.	Թղթատարութիւն	198

BnF
L&A

ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

(Գրավաճառ հրատարակիչ եւ թերթերու գործակալ)

Անգարա ճատտէսի Ըէշիթ էֆէնտի հան թիւ 7

ՍՊԱՌՄԱՆ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ

ԲՈԼՈՐ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Կը հայթայթէ ամէն տեսակ դասական, վիպական, թատերական եւ պպրոցական գրքեր։

Միակ կեդրոնատեղին եւ հրատարակիչ
Մ. Ալպաճեանի Գիտութեան դասերու
Ա. Բ. Գ. Դ. տարիներու
Ա. Կարապետեանի— Տարերք գիտութեանց
Ա. Բ. Գ. Դ. Տարիներու
Տ. Զարմայր Ա. Քհյ. Կէզիւրեանի—Նոր Դասընթացք
Հին և Նոր Կրօնի Ուխտեր

Կրնած ըլլալով իր քով կեդրոնացնել հետեւեալ մատենաշարներու բոլոր հրատարակութիւնները նպաստաւոր պայմաններով կը ծախէ և կը հայթայթէ.—

Ժամանակակից մատենաշար
Կիւրեղեան »
Լոյս »
Ծիածան »
Նոր Դար »
Կանոն »
Ժողովրդական »
Նոր Օր »
Ցուսաբեր »
Ալեւ Հրատարակչական հրատարակութիւններ
Մ. Տեր Մահակեան հրատարակութիւններ
Սեւուելի (Զարիզ) Տօնիկեան (Պէյրութ)
Ճերտեան (Մարսէյլ) հրատարակութիւններ

ԳԻՆ 80 ՂՐՈՒՇ

BIBLIOTHEQUE NATIONALE DE FRANCE
3 7531 02618503 4